Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

# ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ ԵՎ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*XVI—XVII դարերի թուրք-իրանական համարյա անընդմեջ պատերազմները, որոնք մղվում էին Մերձավոր արևելքում քաղաքական և տնտեսական գերակշռություն ձեռք բերելու համար, շարունակվեցին նաև XVIII դարում։ Սակայն այս դարաշրջանում մղված պատերազմների ընթացքում ևս ախոյաններից ոչ մեկին չհաջողվեց հասնել քաղաքական առավելության և, մանավանդ, տարածքային ընդարձակում ձեռք բերել մյուսի հաշվին։ 1639 թ. Զոհաբի պայմանագրով նախատեսված սահմանները մնացին անփոփոխ, բացառությամբ Արարատից մինչև Շաթթ օլ Արաբ գետն ընկած հսկայական տարածքի առանձին հատվածների, որոնք մինչև XX դարի սկիզբը վեճի առարկա էին հանդիսանում երկու պետությունների միջև, ժամանակ առ ժամանակ պատճառ հանդիսանալով արյունոտ բախումների և մեծ ու փոքր պատերազմների համար։*

*XVIII դարի երկրորդ կեսին նկատվում է Օսմանյան կայսրության ռազմական էքսպանսիայի թուլացում իր արևելյան հարևանի նկատմամբ։ Դրա պատճառները, անշուշտ, պետք է փնտրել այդ հսկա ռազմավատական պետության ռազմական, տնտեսական և քաղաքական թուլացման մեջ, որի առաջին նշանները ի հայտ էին եկել դեռևս XVI—XVII դարերում։*

*Վիեննայի տակ օսմանյան բանակի ջախջախումից հետո, ըստ թուրքական բուրժուական պատմաբանների, սկսվում է Թուրքիայի պատմության նոր էտապը, այսպես կոչված «նահանջի շրջանը» (ռիջաթ դևրի)[1], որի բնորոշ գիծը հենց օսմանյան ռազմական էքսպանսիայի դադարեցումն է Եվրոպայում։*

---

[1] „Tarih", c. III, Istambul, 1933, s. 253.

Վիեննայի մոտ պարտությունն, անշուշտ, պատահական չէր, այն ուներ իր ներքին, խորը պատճառները։ Այդ առթիվ Կ. Մարքսը նշում է, որ «...Բացարձակապես ոչ մի հիմք չկա համարելու, որ Թուրքիայի անկումը սկսվեց այն պահից, երբ Սոբեսկին օգնություն ցույց տվեց ավստրիական մայրաքաղաքին... Թուրքական կայսրության կազմակերպությունը այն ժամանակ գտնվում էր քայքայման վիճակում ...մինչ այդ արդեն... արագորեն գալիս է օտտոմանյան հզորության և մեծության դարաշրջանի վերջը»[2]։

Հսկայական կայսրության տարածքում ավելի ու ավելի ուժգին կերպով են սկսում դրսևորվել կենտրոնախույս ձգտումները։ Եգիպտոսը գտնվում էր մամլյուկյան ֆեոդալների ձեռքերում։ XVII—XVIII դարերի սահմանագիծը նշանավորվում է հակաթուրքական ուժեղ ապստամբություններով՝ Իրաքում, Լիբանանում, Հեջազում։ 1706 թ. Իրանը փորձեր է կատարում խրախուսել հարավային Իրաքի արաբական ցեղերի հակակառավարական շարժումները[3]։

Օսմանյան կայսրության ներքին անկայունությունը, ֆեոդալների անջատողական ձգտումները, յանիչարիների մշտական խռովությունները, ժողովրդական հուզումները, բազմաթիվ պատերազմների հետևանքով համատարած քայքայումը, կայսրության տնտեսական և ֆինանսական ճգնաժամը, ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարը, XVII դարի երկրորդ կեսին համարյա անընդմեջ մղված պատերազմներում ռազմական պարտությունները և դրանց հետևանքով տերիտորիաների կորուստը, ինչպես նաև մի շարք այլ հանգամանքներ ունեցան այն հետևանքը, որ Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ նշմարվեցին նոր գծեր։ Ֆ. Էնգելսի արտահայտությամբ XVII դարի վերջին «Թուրքերի հարձակողական ուժը կոտրվել էր»[4]։ Սուլթանների մշտական ագրեսիվությանը և հարձակողական ոգուն մերթ ընդ մերթ փոխարինելու է գալիս սպասողական գիրքը։ Թուրքական արտաքին քաղաքականության մեջ դրսևորվում է ավելի շատ ճկունություն. ոչ միշտ է, որ կառավարող շրջաններն աշխատում են իրենց առջև դրված խնդիրները լուծել բացառապես զենքի օգնությամբ։ Նոր պայմաններում ավելի ու ավելի դանդաղկի գիմում են հարցերի լուծման դիվանագիտական ճա-

---

[2] *Կ. Մարքս* ու *Ֆ. Էնգելս*, Соч., т. 10, изд. 2, стр. 262.

[3] Центральный Государственный Архив Древних Актов (ЦГАДА), Сношения с Турцией, ф. 89. 1706 г., д. 3, л. 66.

[4] *Կ. Մարքս* ու *Ֆ. Էնգելս*, Соч., т. 22, изд. 2, стр. 17.

նապարհին և, ամենակարևորը, աշխատում են խուսանավել եվրոպական պետությունների միջև և խաղալ նրանց հակասությունների վրա։ Ի դեպ, այդ մասին ուշագրավ դիտումներ է անում Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Պ. Ա. Տոլստոյը[5]։

Ժամանակակից թուրք պատմագրությունը XVIII դարի սկզբի Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականությունը բնութագրում է որպես «չեզոքության» քաղաքականություն (tarafsizlik)[6]։ Իսկապես, XVIII դարի առաջին տասնամյակի ընթացքում Օսմանյան կայսրությունը սկսում է վարել համեմատաբար «խաղաղասիրական» քաղաքականություն, և դա այն դեպքում, երբ եվրոպական տերությունները զբաղված էին համաեվրոպական բնույթի այնպիսի պատերազմներով, ինչպիսիք էին իսպանական ժառանգության համար մղվող պատերազմը, Հյուսիսային պատերազմը և այլն, որոնց պայմաններում միջազգային իրադրությունը, անտարակույս, նպաստում էր թուրքական ռազմական էքսպանսիայի ծավալմանը Եվրոպայում։ Սակայն բնութագրելով այդ ժամանակաշրջանի թուրքական արտաքին քաղաքականությունը, պետք է հաշվի առնել, որ Օսմանյան կայսրության «խաղաղասիրությունը» կրում էր հարաբերական և ստիպողական բնույթ[7]։ Այդ առթիվ Դ. Կանտեմիրը, որը բազմաթիվ տարիներ ապրել է սուլթանական պալատում և քաջատեղյակ էր Թուրքիայի արտաքին քաղաքականությանը, մեծ վեզիր Զորլուլու Ալի փաշայի քաղաքական գիծը բնութագրում է հետևյալ կերպ. «...Նա երազում էր նվաճումների մասին, սակայն չէր ցանկանում երկիրը ենթարկել վտանգի և շատ բան կորցնել, հույս ունենալով ձեռք բերել միայն նվազագույնը»[8]։

Այդ նույն միտքը Պետրոս I-ին գրած նամակում ավելի պատկերավոր ձևակերպում է ստանում Երուսաղեմի պատրիարքի կողմից. թուրքերը «երբ աղքատ են, ասում են՝ իրենք խաղաղասեր են»։

---

[5] ЦГАДА, Сношение с Турцией, ф. 89, 1703 г., д. 2, л. 252.

[6] *A. N. Kurat*, 18 yüzyil başi Avrupa umumi harbinde Türkiyenin tarafsizligi, „Belleten", 1943, c. 8, s. 26.

[7] *С. Ф. Орешкова,* Русско-турецкие отношения в начале XVIII в. (Диссерт. на соиск. уч. степ. канд. историч. наук), М., 1965, стр. 123.

[8] *D. Gantemir,* Histoire de l'Empire Ottoman, t. 2, Paris, 1743, liv. IV. p. 314.

[9] *Н. Ф. Каптерев,* Иерусалимский патриарх Досифей в его сношениях с русским правительством (1669—1707). «Чтения в императорском обществе истории и древностей российских при Московском университете», к. 2, М., 1891, стр. 49.

խաղաղ հարաբերություններ պահպանելով սոցիալ-տնտեսական, ռազմական և մշակութային զարգացման մակարդակով Թուրքիայից առաջ անցած եվրոպական պետությունների հետ, Օսմանյան կայսրությունը, որին Կ. Մարքսը անվանել է «...Միջնադարի միակ իսկական ռազմական տերությունը»[10], ընդհանրապես բնավ չէր հրաժարվում զավթողական պատերազմներից։ Ռազմաշունչ տրամադրություններ ունեցող թուրքական ռազմաավատական ազնվականությունը, որը ռազմական արհեստը դիտում էր որպես իր գոյության հիմնական աղբյուր, շարունակում էր երկիրը մղել Օսմանյան կայսրության համար ավանդական ագրեսիվ քաղաքականության հունով։

Թուրքական կառավարող շրջանները Եվրոպայում տերիտորիալ նվաճումներ կատարելու անհնարինությունը աշխատում են փոխհատուցել ասիական մայրցամաքում պատերազմներ մղելով, մասնավորապես աշխատելով տարածքային առավելություններ ձեռք բերել և ծավալվել հարևան Իրանի հաշվին։

Այս իսկ տեսակետից չափազանց հատկանշական է Պետրոս I-ին ուղղված սուլթան Ահմադ III-ի՝ 1708 թ. թվակիր հրովարտակը[11], որտեղ նա խնդրում է ռուսական կայսրին օգնություն ցույց տալ թուրքերին՝ Իրանի դեմ իրենց կողմից ծրագրված պատերազմում, փոխարենը խոստանալով օգնել ռուսներին՝ լեհերի դեմ պայքարում։

Միանգամայն ակներև է, որ XVIII դարի 20-ական թվականներին Սեֆյան պետության ճգնաժամը նպաստել էր Թուրքիայում ագրեսիվ ծրագրերի վերակենդանացմանը՝ Իրանի և Անդրկովկասի նկատմամբ։ Օսմանյան պաշտոնական տարեգիր Քյուչյուկ Չելեբիզադեն վկայում է, որ 1722 թ. Դիվանի նիստերից մեկի ժամանակ որոշում է ընդունվում Իրանի նկատմամբ աֆղանների հաղթանակի դեպքում «աստվածապահ» պետությանը միացնել բոլոր այն երկրները, որոնք կմնան առանց տիրոջ»[12]։

---

[10] *К. Маркс* и *Ф. Энгельс*, Соч., т. 22, изд. 2-е, стр. 20.

[11] ЦГАДА. Сношения с Турцией, ф. 89, оп. 2, д. 78. *Ակներև է, որ այս փաստաթուղթը ուղարկված է Ալտրանշտադի հաշտության (1707 թ.) կնքումից հետո, երբ լուրեր էին տարածվել Ռուսաստանի թշնամի Ստանիսլավ Լեշչինսկուն որպես Լեհաստանի թագավոր պաշտոնապես ճանաչվելու մասին։*

[12] تاريخ اسمعيل عاصم افندى الشهير بكوچك چنبى‌زاده استانبول ١٤٨٣، ص ٧٢

խախտելով 1639թ. թուրք-իրանական պայմանագիրը. 1723 թ. թուրքական զորքերը ներխուժում են Անդրկովկաս և Իրան[13], դրանով իսկ գործնական իրականացում տալով օսմանյան կառավարող շրջանների վերոհիշյալ ծրագրերին։ 1727 թ. Իրանի աֆղանական տիրակալ Աշրաֆի հետ կնքած պայմանագրով Թուրքիան արևմտյան և հյուսիս-արևմտյան Իրանում նվաճում է զգալի տերիտորիաներ[14]։

Թուրք-իրանական պատերազմները բուռն թափով շարունակվում են նաև Իրանում Նադիր շահի տիրապետության տարիներին (1736—1747 թթ.)[15]։

XVIII դարի առաջին կեսին Թուրքիայի ռազմական էքսպանսիան դեպի Իրան և Անդրկովկաս հանդիպեց Ռուսաստանի հակազդեցությանը։ Հայտնի է, որ Պետրոս I-ի պարսկական արշավանքը նպատակ ուներ արգելակել Թուրքիայի ելքը դեպի Կասպից ծով։ Այդ նույն շրջանում Ռուսաստանն իր առջև պատմական կարևոր խնդիր էր դրել. Սև ծովի առափնյա շրջանները ազատագրելու թաթարա-թուրքական կախումից և հարավում ելք ստանալ դեպի ծովը[16]։ Պետրոս I-ի ազովյան արշավանքները (1695—1696 թթ.) հետապնդում էին հենց այդ նպատակները։

Այսուհետև ոչ միայն Անդրկովկասում, այլև Մերձավոր և Միջին արևելքում Ռուսաստանի և Օսմանյան կայսրության շահերը անմիջական բախման մեջ էին մտնում։

XVIII դարի երկրորդ կեսին ռուսական զենքի հաջողությունները Թուրքիայի նկատմամբ, և Ռուսական կայսրության ծավալումը դեպի հարավ ունեցավ այն հետևանքը, որ այդ ժամանակվանից սկսած Մերձավոր և Միջին արևելքի խնդիրները վեճի առարկա էին դառնալու, արդեն, երեք պետությունների՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի միջև։ Իսկ երբ այդ պայքարի մեջ ընդգրկվեցին նաև Արևելքում Ռուսաստանի մրցակիցներ և քաղաքական ախոյաններ Անգլիան և Ֆրանսիան, թուրք-իրանական դարավոր հակամարտությունը անխուսափելիորեն պետք է ընդուներ սկզբունքային նոր բովանդակություն, որովհետև շո-

---

[13] *Rouhollah K. Ramazani*, The foreign policy of Iran. A developing nation in World affairs 1500—1941, Charlottesville, 1966, p. 22.

[14] Նույն տեղում։

[15] *Hekmat, Mohammad-Ali*, Essai sur l'histoire des relations politiques irano-ottomanes de 1722—1747, Paris, 1937; *L. Lockart*, Nadir Shah. London, 1938.

[16] История дипломатии, т. I, изд. 2-е, М., 1959, стр. 293.

շափելով եվրոպական պետությունների շահերը Մերձավոր և Միջին արևելքում, այդ պայքարը այսուհետև դադարում էր լինել միայն հարևան մարտնչող տերությունների գործը։

XVIII դարի վերջին Մերձավոր արևելքում Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքականության ակտիվացման պայմաններում, Թուրքիայի և Իրանի նկատմամբ վերաբերմունքի հարցում, մասնավորապես թուրք-իրանական հարաբերությունների կապակցությամբ, Լոնդոնում և Փարիզում մշակվում են քաղաքական ծրագրեր, որոնք իրենց վերջնական նպատակներով հար և նման էին միմյանց։ Այդ ծրագրերի էությունը կայանում է նրանում, որ երկու հարևան պետություններին՝ Թուրքիային և Իրանին, առանձին-առանձին կամ համատեղ ոտքի հանել Ռուսաստանի դեմ։ Երկարատև ժամանակների համար մշակված քաղաքական այս ծրագիրը միանգամայն համընկնում էր Թուրքիայի և Իրանի կառավարող շրջանների շահերին, որոնք գիտակցելով, որ մեն-մենակ ի վիճակի չեն ռազմական առումով չափվելու հզոր Ռուսաստանի հետ, ի դեմս մեկը մյուսի փնտրում էին դաշնակիցներ։

Այսպիսով, թուրք-իրանական հակամարտությունը և փոխադարձ. տարածքային հավակնությունների խնդիրը որոշ առումով մղվում է ետին պլան, թեև, ինչպես կտեսնենք ստորև, ժամանակ առ ժամանակ այն կրկին ձեռք է բերում սրություն, տեղիք տալով տեղական բնույթի ռազմական ընդհարումների և նույնիսկ խոշոր մասշտաբի պատերազմների։

Դեռևս 1793 թ., երբ Իրանում դեռ չէր ավարտվել իշխանության համար մղվող միջֆեոդալական պայքարը ղաջարների և զենդերի միջև, Աղա Մոհամմադ խանը ծրագրում էր արշավանքի դուրս գալ դեպի Անդրկովկաս՝ այնտեղ ծավալված Ռուսաստանին միանալու շարժումը ջախջախելու համար։ Նրա այդ ծրագիրը անմիջապես հավանության է արժանանում Թուրքիայի կողմից։ Ավելին, վերջինս սկսում է հրահրել ղաջարների առաջնորդին արագացնել այդ արշավանքը, որովհետև Կոստանդնուպոլսին հայտնի էր դարձել, որ Աղա Մոհամմադի հակառակորդներից մեկը՝ Ալի Մուրադ խանը, ձգտում է Ռուսաստանի հետ դաշինք կնքել ղաջարների և Թուրքիայի դեմ։ Այդ առթիվ Կոստանդնուպոլսում Ռուսաստանի գործերի հավատարմատար Ա. Խվոստովը 1793 թ. հոկտեմբերի 20-ին հաղորդում է. «Բ. Դռան անունից Բաղդադի փաշան Պարսկաստան է ուղարկել Թուրբաշի Բաշիին՝ Աղա Մոհամմադ խանին շնորհավորելու նրա հաղթանակների առթիվ և հայտնելու, որ Բ. Դուռը նրան չի ճանաչի Պարսկաստանի տիրակալ, քանի դեռ նա իր իշխանու-

թյանը չի ենթարկել Վրաստանը։ Այդ գործին նպաստելու համար, ելնելով բարեկամության պարտականություններից, Բ. Դուռը պատրաստ է Պարսկաստանին հատկացնել դրամ և թնդանոթներ»[17]։

Իր հերթին, Ֆրանսիան նույնպես, Ռուսաստանի մասնակցությունը եվրոպական պետությունների հակաֆրանսիական կոալիցիային կանխելու համար, աշխատում էր իրանա-ռուսական պատերազմ հրահրել։ Այդ նպատակով Իրանում գործող ֆրանսիական գործակալները ամեն կերպ բորբոքում էին Աղա Մոհամմադ խանի զավթողական նկրտումները Կովկասի նկատմամբ[18]։

Այս սադրանքները, անտարակույս, արագացրին դեպքերի ընթացքը, և ինչպես հայտնի է, 1795 թ. գարնանը Աղա Մոհամմադ խանը շարժվեց դեպի Վրաստան, ահավոր ավերածության և կողոպուտի ենթարկելով այդ երկիրը։

Սակայն քանի որ նրա հրոսակների անլուր գազանությունները ուժեղացնում են Վրաստանի կողնորոշումը դեպի Ռուսաստան, դաշնակիցների առաջնորդը որոշում է կազմակերպել երկրորդ պատժիչ արշավանքը։ Այդ ծրագիրը կրկին խրախուսանքի է արժանանում օսմանյան կառավարող շրջանների կողմից։ Վկայելով այդ մասին, Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանորդը 1796 թ. հունիսին հաղորդում է. «Բ. Դուռը իսկապես կապեր ունի Աղա Մոհամմադ խանի հետ»[19]։ Մեկ այլ տեղեկության համաձայն սուլթանի հրամանով սերասկեր Յուսուֆ փաշան Աղա Մոհամմադ խանի Անդրկովկաս կատարելիք արշավանքի համար օգնություն էր նախապատրաստում[20]։

Ֆրանսիան, իր հերթին, աշխատում է Կովկասում խոշոր պատերազմ բորբոքել մի կողմից Ռուսաստանի, մյուս կողմից՝ Իրանի և Թուրքիայի միջև։ Ֆրանսիական դիվանագետների անմիջական մասնակցությամբ թուրքերի և պարսիկների միջև աշխույժ բանակցություններ էին տեղի ունենում Ռուսաստանի դեմ դաշնակցելու և Կովկասում համատեղ գործողություններ վարելու վերաբերյալ[21]։ 1795—1797 թթ. դիրեկտո-

---

[17] Архив Внешней Политики России (АВПР), ф. «Сношения с Турцией 1793—1794 гг.». д. 77, лл. 199—200.

[18] АВПР, ф. «Сношения с Персией 1795 г.», д. 810, лл. 9—10.

[19] АВПР, ф. «Сношения с Турцией 1796 г.», д. 831, л. 1 об., д. 828. л. 103.

[20] *П. Г. Бутков,* Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 гг., ч. I—III, СПб., 1869, стр. 404—405.

[21] *Տե՛ս Ա. Ռ. Ոսկանյան,* Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958, стр. 11—21.

ռիայի հանձնարարությամբ Իրան ուղարկված ֆրանսիական դեսպանությունը Օլիվիեյի և Բրյուգերի գլխավորությամբ հետապնդում է հենց այդ նպատակները[22]։

1801 թ. ֆրանսիական կառավարության հատուկ առաքելությամբ Կոստանդնուպոլիս ժամանած գնդապետ Սեբաստիանին հանձնարարություն ուներ նաև վերականգնել կապերը Իրանի հետ և նպաստել շահի և սուլթանի մերձեցմանը։ Այդ առթիվ Կովկասում ռուսական գլխավոր հրամանատարին ուղղված 1802 թ. սեպտեմբերի 26-ի ցարական կառավարության հրահանգում նշվում է. «Բոլոր տեղեկությունների համաձայն Բ. Դուռը կարծես թե չափազանց քիչ էր զբաղվում պարսկական գործերով, ինչպես նաև Վրաստանում մեր գործերի ընթացքով... Այժմ թուրքական մինիստրությունը ֆրանսիական կառավարության հրահրումով սկսել է ավելի շատ հետաքրքրվել այդ հարցերով։ Հայտնի է, որ առաջին կոնսուլը կարգադրել է ճանապարհորդի անվան տակ Վրաստան և Պարսկաստան ուղարկել մի էմիսարի՝ ոմն գնդապետ Սեբաստիանիի, որն իր ճանապարհորդությունը պետք է սկսի Կոստանդնուպոլսից»[23]։

Ռուսական իշխանությունների տեղեկությունների համաձայն սուլթանը դիմել էր Բաբա խանին (Ֆաթհ Ալի շահին—Վ. Բ.) հատուկ ուղերձով, որտեղ նա Ռուսաստանի դեմ արշավանքի յուրաքանչյուր մասնակցի խոստանում էր սահմանել ոռճիկ «օրը մեկ ղուրուշի» չափով[24]։

Ռուս-իրանական պատերազմի նախօրյակին Նապոլեոնի մեջ ավելի ու ավելի էր հասունանում Ռուսաստանի դեմ ֆրանս-իրանա-թուրքական ռազմական դաշինք ստեղծելու մտահղացումը, որը ենթադրվում էր օգտագործել նաև Մերձավոր արևելքում Ֆրանսիայի մեկ այլ ախոյանի՝ Անգլիայի դեմ։ Այդ նպատակով 1803 թ. ֆրանսիական դիվանագիտությունը Կոստանդնուպոլսում և Թեհրանում սկսում է շոշափել թուրքական և իրանական կառավարությունների տեսակետը[25]։

1804 թ. ռուս-իրանական առաջին պատերազմը սկսվելուց հետոնման դաշինքի ստեղծումը ֆրանսիական կառավարության տեսակետից դառնում է ավելի ռեալ։ Սակայն Թուրքիայի և Իրանի միջև հարաբերությունների անակնկալ սրումը ի չիք է դարձնում ֆրանսիական կա-

---

[22] Տե՛ս G. A. Olivier, Voyage dans l'Empire Ottoman, l'Egypte et la Perse, T. 3, Paris, 1807; The Dinasty of the Kajars, London, 1833, p. 274.

[23] Акты, собранные Кавказской археографической комиссией (АКАК), т. 2, стр. 9.

[24] АКАК, т. 2, ч. II, стр. 288, 406—407.

[25] АКАК, т. 2, стр. 874—875, 886; т. 3, стр. 524.

ռավարության ձգտումը շուտափույթ կերպով գլուխ բերելու այդ գործը։

Կոնֆլիկտը նախ բորբոքվեց Բաղդադի փաշալիքի մեջ մտնող Սոլեյմանիե շրջանի համար, որը վաղուց ի վեր կռվախնձոր էր հանդիսանում Թուրքիայի և Իրանի միջև։ 1805 թ. Սոլեյմանիեի Բաբան ցեղի աշիրեթապետ Աբդուրրահման փաշան բացահայտ կերպով ապստամբեց սուլթանի դեմ և ոչնչացրեց նրա զորամասերը։ Սակայն թուրքական բանակի ճնշման ներքո նա ստիպված եղավ փախչել Իրան և դիմել Ֆաթհ Ալի շահի օգնությանը[26]։ Զբաղված լինելով Ռուսաստանի հետ պատերազմով, շահը որոշեց ռազմական գործողություններ չսկսել Թուրքիայի դեմ, սահմանափակվելով լոկ Իրաքի փոխարքա Հաֆեզ Ալի փաշայի մոտ միջնորդությամբ, որպեսզի վերջինս դադարեցնի իր հալածանքները Աբդուրրահմանի դեմ[27]։ Միևնույն ժամանակ վախենալով Թուրքիայի անակնկալ հարձակումից, շահը միջոցառումներ ձեռնարկեց իր արևմտյան սահմանը պաշտպանելու համար։ Ի վերջո տեղական բնույթի այս կոնֆլիկտը վերածվեց երկու երկրների միջև բացահայտ ռազմական բախման[28]։ Շահի ավագ որդի, Քերմանշահի կառավարիչ Մոհամմադ Ալի միրզան և Հաֆեզ Ալի փաշան ռազմական գործողություններ ծավալեցին միմյանց դեմ։

Երկու պետությունների բազում հակասությունները, որոնք միաժամանակ խորք էին անցել, կրկին բարձրացան մակերես։ Նրանց փոխհարաբերություններում հատկապես հատուկ սրություն ձեռք բերեց քրդական հարցը։ XIX դ. սկզբից Օսմանյան կայսրությունը ձեռնամուխ է լինում քրդական անկախ և կիսանկախ իշխանությունները հնազանդեցնելու և իր իշխանության տակ պահելու քաղաքականությունը, որի հետևանքով գնալով հաճախակի են դառնում քրդական ըմբոստությունները։ Հանուն իր քաղաքական շահերի, Իրանը ստանձնում է քրդական շարժումների հովանավորի դերը[29]։ Ի դեպ, Իրանն աշխատում

---

[26] *C. J. Rich*, Narrative of a Residence in Koordistan, London, 1836, vol. I, p. 384.

[27] *R. G. Watson*, Ahistory of Persia from the beginning of the XIX century to the year 1858, London, 1866, p. 155.

[28] Այդ մասին տե՛ս *J. M. Kinneir*, Mémoires Géographiques sur l'Empire de Perse. Trad. de l'anglais par le Colonel G. Drouville, St. Pétersbourg, 1827, T. II, p. 58—60; *А. Адамов*, Ирак Арабский. Бассорский вилайет в его прошлом и настоящем, СПб., 1912, стр. 401—405.

[29] Կ. Սասունի, *Քուրդ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները, Բեյրութ, 1969, էջ 82—84։*

է օգտվել նաև հարևան արաբական երկրներում ծավալված վահաբիթ-ների շարժումից՝ օսմանյան տիրապետության տակ գտնվող Պարսից ծոցի արաբական շրջանների, ինչպես նաև Իրաքի նկատմամբ իր տե-ռիտորիալ հավակնություններին հագուրդ տալու համար[30]։ 1806 թ. սկզբին, երբ ռուս-թուրքական հարաբերությունները կրկին սկսեցին սրվել, Պետերբուրգի դիվանագիտական շրջաններում միտք հղացավ օգտվել թուրք-իրանական հարաբերությունների սրումից, դադարեցնել պատերազմը Իրանի դեմ և դաշնակցել նրա հետ՝ ընդդեմ Թուրքիայի։ Այդ առթիվ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Բուդբերգը Կովկասում ռուսական գլխավոր հրամանատար Գուդովիչին գրում է. «...ես պետք է հայտնեմ Ձեզ, որ ներկա հանգամանքներում հաշտու-թյունը Բաբա խանի հետ խիստ անհրաժեշտ է Օտտոմանյան Դռան դեմ պատերազմի ժամանակ ազատ ձեռքեր ունենալու համար, որպեսզի հնարավորության դեպքում պարսիկներին հաննենք թուրքերի դեմ»[31]։ Բանակցություններ վարելու գործը հեշտանում էր նրանով, որ 1806 թ. սեպտեմբերին Գիլանի նահանգի խան Միրզա Մուսան իր հավատար-մատարի միջոցով ռուսներին հղել էր մի նամակ, որտեղ առաջարկում էր Ռուսաստանի ներկայացուցչին ուղարկել Թեհրան՝ հաշտության բա-նակցություններ սկսելու համար։ Ի պատասխան դրա, Գուդովիչը Պե-տերբուրգից հրահանգ ստացավ հաշտություն կնքել Իրանի հետ[32]։ Սա-կայն ռուսական ներկայացուցչի բանակցությունները Թեհրանում ոչ մի արդյունք չտվեցին, որովհետև շահական կառավարությունը պահանջեց ողջ Անդրկովկասը և Դաղստանը։ Ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը իրավացիորեն նշում է, որ «պարսիկները ոչ մի զիջման չէին գնում, քանի որ հույս ունեին օգնություն ստանալ թուրքերից և ֆրանսիացի-ներից»[33]։

Շահական արքունիքի այդ հույսերը հիմնվում էին հետևյալ փաս-տերի վրա։ Դեռևս 1805 թ. Իրան էին ժամանել Նապոլեոն Բոնապարտի լիազորներ Ռոմյեն և Ժոբերը, որոնք խրախուսելով շահին շարունակելու պատերազմը Ռուսաստանի դեմ, միևնույն ժամանակ առաջարկում էին դաշինք կնքել Ֆրանսիայի հետ[34]։ Իսկ 1806 թ. վերջին սկսվել էր ռուս-

---

30 Տե՛ս L. A. Histoire des Wahabis, Paris, 1810, p.p. 96—98, 109.

31 АКАК, т. 3, стр. 424.

32 Նույն տեղում, էջ 420—421։

33 А. Р. Иоаннисян, Նշվ. աշխ., էջ 177։

34 АКАК, т. 2, стр. 883—887, 1033—1035; т. 3, стр. 416—418. Այդ մասին մանրամասն տե՛ս P. A. Jaubert, Voyage en Armenie et la Perse, Paris, 1821; E. Driault, La politique orientale de Napoleon, I, Paris, 1904, pp. 172—177.

թուրքական պատերազմը, որի պայմաններում Օսմանյան կայսրությունը պետք է շահագրգռվածություն դրսևորեր ոչ միայն զիջումներ անելու Իրանի հետ կոնֆլիկտը հարթելու գործում, այլև օգնություն ցույց տալու նրան ընդհանուր թշնամու՝ Ռուսաստանի դեմ մղվող պայքարում։

Դեռևս մինչև ռուս-թուրքական պատերազմի սկսվելը ֆրանսիացիների միջնորդությամբ Թուրքիայի և Իրանի միջև տեղի էին ունենում անընդմեջ բանակցություններ դաշինք կնքելու վերաբերյալ[35]։ Այդ առթիվ 1806 թ. սեպտեմբերի 7-ի հաղորդագրությունում ռուսական դիտորդներից մեկը գրում է. «Օգոստոսի 2-ին երկու ֆրանսիական և երկու թուրքական էմիսարներ մեկնել են շահի մոտ։ Նրանց արգելված է շփման մեջ մտնել որևիցե մեկի հետ», «օգոստոսի 7-ին շահի կողմից էրզրում են ժամանել 30 մարդ և նրանց հետ երկու ֆրանսիական էմիսարներ», որոնք հանդիպում են ունեցել Անատոլիայում թուրքական գերագույն հրամանատար Յուսուֆ փաշայի հետ[36]։

Այս շրջանում Նապոլեոնը Արևելքում Ֆրանսիայի քաղաքականության անկյունաքարն էր համարում իր փայփայած «նոյակ դաշինքը իր, Բ. Դռան և Պարսկաստանի միջև ընդդեմ Ռուսաստանի»[37]։ Պատահական չէ, որ 1807 թ. գարնանը նա փորձում է գործնականորեն իրականացնել այդ գաղափարը, որպես առաջին քայլ իր վրա վերցնելով միջնորդի դերը՝ Թուրքիային և Իրանին հաշտեցնելու և նրանց միջև առկա կոնֆլիկտը հարթելու գործում։ 1807 թ. ապրիլի 3-ին ֆրանսիական կայսրը դիմում է սուլթան Սելիմ III-ին, առաջարկելով համաձայնություն գալ Ֆաթհ Ալի շահի հետ և դրանով իսկ հնարավոր դարձնել Թուրքիայի և Իրանի համատեղ ելույթը ընդհանուր թշնամու դեմ։ Միաժամանակ նա հայտնում է շահին իր շահագրգռվածությունը երկու երկրների միջև բարեկամություն հաստատվելու հարցում և խնդրում է, որ նրանք վերջ տան իրենց վեճերին և միավորվեն՝ համատեղ կերպով դիմագրավելու իրենց իսկական թշնամուն[38]։

1806 թ. ռուսական զորքերի կողմից Դերբենտի, Բաքվի, Մուզանի և Անդրկովկասի այլ քաղաքների ու շրջանների գրավումը ստիպեց շահին Նապոլեոնի մոտ ուղարկել իր ներկայացուցիչ, Ղազվինի նա-

---

[35] Տե՛ս *А. Ф. Миллер*, Мустафа-паша Байрактар, М.—Л., 1948, стр. 150; *O. Schlechta-Wssehrd*, Die Kampfe zwischen Russland und Persien in Transkaukasien, Wien, 1864, S. 30.

[36] АКАК. т. 3, стр. 522.

[37] *А. Р. Иоаннисян*, Նշվ. աշխ., էջ 145։

[38] Նույն տեղում, էջ 146—147։

հանգապետ Միրզա Ռեզա խանին, հանձնարարելով նրան հնարավորին չափ շուտափույթ կերպով դաշինք կնքել Ֆրանսիայի հետ[39]։ Դեռևս մինչև իրանական լիազորի Ֆինկենշտեյն հասնելը, որտեղ նախատեսվում էր կնքել այդ դաշինքը, Թալեյրանը դիմում է Նապոլեոնին հետևյալ հարցումով. աշխատել կնքել եռյակ դաշինք Ֆրանսիայի, Թուրքիայի և Իրանի միջև, ինչպես ինքն է համարում նպատակահարմար ու ցանկալի, թե՞ ինչպես Ժոբերն է առաջարկում՝ կնքել երկու առանձին պայմանագրեր հիշյալ պետությունների հետ[40]։ Ընդ որում Թալեյրանի այդ հարցման մեջ շեշտվում էր, որ Ժոբերի առաջարկը հիմնված է այն իրողության վրա, որ Օսմանյան կայսրության և Իրանի միջև առկա հակասությունները դժվար թե հնարավորություն տան կնքելու եռյակ դաշինք։

Ի դեպ Թուրքիան ուշադրությամբ հետևում էր Ֆինկենշտեյնում ֆրանսիական բանակցությունների ընթացքին։ Ֆինկենշտեյնի Նապոլեոնի ճամբարում գտնվող թուրքական դեսպան Վահիդ էֆենդին բնավ չէր թաքցնում Բ. Դռան անբարյացակամ վերաբերմունքը Իրանի նկատմամբ։ Ավելին, թուրքական դեսպանը աշխատում էր ազդել Նապոլեոնի վրա, որպեսզի վերջինս ճնշում գործադրի շահական կառավարության վրա Թուրքիայի հետ տերիտորիալ վեճերի հարցում ավելի զիջող լինելու համար։ Միաժամանակ նա փորձում էր կանխել առաջիկա ֆրանս-իրանական պայմանագրի այն կետերը, որոնք կարող էին ձեռնտու չլինել թուրքական կառավարությանը[41]։

Իր հերթին Նապոլեոնը ամեն կերպ աշխատում էր միավորել երկու պետություններին ընդդեմ ռուսների, թուրքերին գայթակղեցնելով շռայլ խոստումներով, որ եթե էրզրումի փաշան կովկասյան ճակատում իր բոլոր զորքերով օգնության հասնի Աբբաս Միրզային, ինքը՝ Նապոլեոնը, խոստանում է նպաստել, որ Թուրքիան ռուսներից ետ ստանա Ղրիմը, Վրաստանը և վերջապես թուրքական հսկողություն սահմանվի ողջ սևծովյան ավազանի վրա[42]։

Ֆինկենշտեյնում Նապոլեոնի փորձերը կողմերին հաշտեցնելու և

---

39 محمود محمود، تاریخ روابط سیاسی ایران و انگلیس در قرن نوزدهم میلادی، جلد اول تهران ۱۳۲۸، ص ۳۹–۴۴

40 *Հ. Ռ. Հովհաննիսյան, Նշվ. աշխ., էջ 147։*

41 ناصرنجمی، ایران در میان طوفان یا شرح زندگی عباس‌میرزا، تهران ۱۹۵۷ ص–۹۵–۹۷

42 *Նույն տեղում, էջ 96։*

նրանց ընդգրկելու համատեղ դաշինքի մեջ ավարտվեցին անհաջողությամբ։ Այդ պատճառով որոշվեց կնքել առանձին ֆրանս-իրանական պայմանագիր[43], որը ստորագրվեց 1807 թ. մայիսի 4-ին։ Պաշտպանողական-հարձակողական կոչված այդ պայմանագիրը ըստ էության հանդիսանում էր ֆրանս-իրանական դաշնակցային պայմանագիր[44]։ Թեև, անկասկած, դա արևելյան քաղաքականության բնագավառում Նապոլեոնի դիվանագիտության խոշոր հաջողություններից մեկն էր, մանավանդ որ Ֆինկենշտեյնի պայմանագիրն իր սուր ծայրով ուղղված էր նաև Անգլիայի դեմ, սակայն այնուհանդերձ ֆրանսիական կայսրին չհաջողվեց իրականացնել իր գլխավոր նպատակը՝ ֆրանս-թուրք-իրանական եռյակ դաշինքը։ Նապոլեոնը առանձին երկկողմանի համաձայնագրերը Իրանի և Թուրքիայի հետ չէր համարում բավականաչափ արդյունավետ. նրա կարծիքով, առավել ազդու և շոշափելի ուժ կդառնար եռյակ դաշինքը։ Այդ բանը հատկապես ցայտուն կերպով երևում է գեներալ Կլոդ Մատյե Գարդանին տրված Նապոլեոնի 1807 թ. մայիսի 10-ի գրավոր հրահանգում, որտեղ նա ուղղակի պնդում է Ռուսաստանի դեմ Իրանի և Թուրքիայի միջև ռազմական դաշինքի կնքման անհրաժեշտության վրա[45]։ Նրա կարծիքով, այդպիսի դաշինքը ոչ միայն արգելք կհանդիսանար Ռուսաստանի առաջխաղացմանը Մերձավոր և Միջին արևելքում, այլև մեծապես կազդեր ռուսական քաղաքականության ակտիվության վրա նաև Եվրոպայում[46]։

Ելնելով նշված նկատառումներից, ֆրանսիական դիվանագիտությունը հետևողականորեն աշխատում էր հարթել թուրք-իրանական կոնֆլիկտը և կողմերին համոզել բանակցություններ սկսել։ Այդ ջանքերը շուտով պսակվեցին հաջողությամբ. շահական կառավարությունը համաձայնություն տվեց Կոստանդնուպոլսի հետ սկսել բանակցություններ։ Ի վերջո կողմերը համաձայնության եկան համատեղ ելույթ ունենալ Ռուսաստանի դեմ։ 1807 թ. ամռանը սերասկեր Յուսուֆ փաշան հրամայեց Թուրքիայի ասիական նահանգների բոլոր փաշաներին, որ-

---

[43] *А. Р. Иоаннисян, նշվ. աշխ., էջ 147։*

[44] *Պայմանագրի լրիվ տեքստը տե՛ս J. C. Hurewitz,* Diplomacy in the Near and Middle East, Princeton, New-York, 1956, vol. I, pp. 77—78.

[45] *Տե՛ս* „Mission du général Gardane en Perse sous le premier Empire", Paris, 1865, p. 81—94 *(Ցիտված է ըստ А. Р. Иоаннисян, նշվ. աշխ., էջ 149—150)։*

[46] سعید نفیسی، تاریخ اجتماعی و سیاسی ایران در دوره معاصر، جلد اول، تهران ۱۳۳۵، ص ۱۰۰

պեսզի իրենց զորքերով շարժվեն ու միանան պարսիկներին, երբ ռուսները ռազմական գործողություններ սկսեն Երևանի նահանգում։ Ֆաթհ Ալի շահն իր հերթին խոստանում էր օգնել թուրքերին, Ռուսաստանի դեմ մղված նրանց ռազմական գործողություններում[47]։ Այդ առթիվ պարսիկ պատմաբան Ա. Ա. Բինան գրում է. «Նրանք ծրագրել էին, որ թուրքական զորամասերը արևելքից, իսկ իրանական զորքերը արևմուտքից պետք է մուտք գործեն Վրաստան»[48]։ Սահմանի մոտ կենտրոնացնելով 35 հազարանոց բանակ, Աբբաս Միրզան սպասում էր Արփաչայի ճակատամարտի (1807 թ. հունիսի 17—18) ելքին, որպեսզի շարժի իր բանակը։ Սակայն այդ ճակատամարտում թուրքական զորքերի պարտությունը ստիպեց գահաժառանգին հապշտապ հեռանալ Նախիջևան[49]։

Այսպիսով, ռուսական զենքի վճռական հաղթանակի շնորհիվ ձախողվեց Ռուսաստանի դեմ թուրքերի և պարսիկների համատեղ հարվածի պլանը։

Շուտով միջազգային դրության մեջ տեղի ունեցավ արմատական փոփոխություն. 1807 թ. հուլիսի 8-ին Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև կնքվեց Տիլզիթի հաշտությունը, որի հետևանքով ցարական Ռուսաստանը թշնամի լինելուց ժամանակավորապես վերածվեց Ֆրանսիայի դաշնակցի։ «Նապոլեոնը,— այդ առթիվ գրում է Ռուիրը,— ստիպված էր Ասիայում իր համար ձեռնտու թուրք-պարսկական բարեկամությունը զոհել հանուն ռուսական դաշինքի, որը նրան անհրաժեշտ էր Եվրոպայում»[50]։

Սակայն Ռուսաստանի նկատմամբ ֆրանսիացիների թշնամական գործունեությունն Իրանում չդադարեց նաև Տիլզիթից հետո։ Ֆրանսիական դիվանագիտությունը եռանդուն կերպով աշխատում էր հասնել Թուրքիայի և Իրանի մերձեցմանը և մասնավորապես նրանց ու Ֆրանսիայի միջև հակառուսական եռյակ դաշինքի կնքմանը։

Հենց այս շրջանում ուժեղանում է անգլիացիների գրոհը Իրանում ֆրանսիացիների դիրքերի վրա։ 1808 թ. վերջին բրիտանական կառավարության հանձնարարությամբ Իրան է ժամանում անգլիական մի

---

[47] *Н. Ф. Дубровин,* История войн и владычества русских на Кавказе. т. 5, 1888, стр. 141.

[48] علی اکبر بینا، تاریخ سیاسی و دیپلوماسی ایران، جلد اول، تهران ۱۳۳۷، ص. ۱۲۸

[49] АКАК, т. 3, стр. 548—549; *Н. Ф. Дубровин, Նշվ. աշխ., հ. 5, էջ 177—179։*

[50] *Раур,* Англо-русское соперничество в Азии в XIX в., М., 1924, стр. 154.

առաքելություն՝ Հարֆորդ Ջոնսի գլխավորությամբ։ 1809 թ. մարտի 19-ին Ջոնսը Իրանի հետ կնքում է պայմանագիր, ըստ որի շահը պարտավորվում է խզել իր կապերը Ֆրանսիայի հետ։ Պայմանագրով բրիտանական կառավարությունը խոստանում էր շահին ամենամյա ֆինանսական հատկացում 160 հազար թումանի չափով (մինչև նրա պատերազմի ավարտը Ռուսաստանի հետ) և բացի այդ, իր վրա պարտավորություն էր վերցնում իրանական բանակին տրամադրել զենք և ուղարկել ռազմական հրահանգիչներ[51]։

Հիշյալ պայմանագրի ստորագրումից հետո Իրանում առաջնություն ձեռք բերելու համար Անգլիայի և Ֆրանսիայի միջև պայքարն ավարտվեց Մեծ Բրիտանիայի հաղթանակով։

Անգլիական դիվանագիտությունը, առաջնորդվելով իր հակառուսական միտումներով, անմիջապես ձեռնամուխ եղավ նաև թուրք-իրանական դաշինքի ստեղծմանը։ 1809 թ. հունվարին անգլո-թուրքական պայմանագրի ստորագրումը, որի հետևանքով ապրիլին Թուրքիան վերսկսեց պատերազմը Ռուսաստանի դեմ, ավելի ռեալ դարձրեց այդ դաշինքի ձևավորումը։ Հարֆորդ Ջոնսը Թեհրանում և անգլիական դեսպան էդերը՝ Կոստանդնուպոլսում այդ ուղղությամբ ձեռնամուխ եղան բուռն գործունեության։ Նրանց համատեղ ջանքերի շնորհիվ 1809 թ. օգոստոսին Կոստանդնուպոլիս ժամանեց շահի լիազորը Կովկասում համատեղ ռազմական գործողություններ սկսելու հարցը թուրքական կառավարության հետ համաձայնեցնելու համար[53]։ Նա Ֆաթհ Ալի շահի անունից առաջարկություն է անում Անգլիայի մասնակցությամբ կնքել թուրք-իրանական դաշինք՝ Ռուսաստանի դեմ համատեղ պայքար մղելու համար և առաջարկում է պարտավորվել զենքը ցած չդնել, մինչև երկու կողմերի համար ձեռնտու հաշտության կնքումը։ Ընդ որում շահը պատրաստակամություն էր հայտնում մի բանակ ուղարկել Անդրկովկասում գործող թուրքական զորքերին միանալու համար և բացի այդ, խոստանում էր Կոստանդնուպոլսին հատկացնել դրամական օգնություն[54]։

---

51 *J. W. Kaye*, The life and correspondence of Sir Iohn Malcolm, London, 1856, vol. I, p. 439.

52 *Տե՛ս R. Adair*, The negociations for the peace of the Dardanells in 1808—1809, London, 1845, vol. I—II.

53 АВПР, Главный архив 1—13, д. 7, л. 51 об—52, ф. ВУА, д. 6184, л. 124.

54 *Հ. Բ. Հովհաննիսյան.* Նշվ. աշխ., էջ 242։

Որպես այդ համաձայնության գործնական իրականացում Ախալցխայի Շերիֆ փաշան Իրանից ստացավ 100 հազար ռուբլի և նույն արժողությամբ զանազան հանդերձանք իր զինվորներին բաժանելու համար, որոնք պատրաստվում էին իրանական բանակի հարձակման անցնելուն պես մուտք գործել Անդրկովկասի սահմանները[55]: Միաժամանակ Շորագյալ և Փամբակ ներխուժելու մտադրությամբ իր զորքերը Ապարանի մոտ կենտրոնացնելուց հետո, Աբբաս Միրզան բանակցություններ մեջ մտավ Էրզրումի բանակի հրամանատարի և Ախալցխայի փաշայի հետ ռուսների դեմ համատեղ ելույթի վերաբերյալ: Ձեռք բերված պայմանավորվածության շնորհիվ իրանական 10 հազարանոց մի բանակ, Երևանի սարդար Հոսեյն խանի հրամանատարությամբ, օգոստոս ամսին Կարսի փաշալիքի վրայով անցավ Ախալցխայի փաշալիք, որպեսզի այստեղից թուրքական զորքերի հետ համատեղ ներխուժի Վրաստան[56]:

Այս բոլորը վկայում էր այն մասին, որ 1809 թ. կողմերը որոշակի համաձայնության էին եկել միավորելու իրենց ջանքերը Կովկասում համատեղ ագրեսիայի դիմելու համար: Եվ միայն սեպտեմբերի 5-ին Ախալքալաքի մոտ իրանական զորքերի պարտությունը միառժամանակ հետաձգեց թուրք-իրանական միացյալ ճակատի ստեղծումը[57]:

Այսպիսով, 1809 թ. ևս, հակառակ անգլիացիների բոլոր ջանքերին, թուրք-իրանական դաշինքի կնքումը գործնական իրականացում չստացավ: Դրա գլխավոր պատճառը կայանում է նրանում, որ Թուրքիան գերադասում էր ընդհանուր թշնամու դեմ պայքար մղել առանձին-առանձին, առանց իր վրա դաշնակցային պարտավորություններ վերցնելու: Այդ առթիվ Ա. Ռ. Հովհաննիսյանն իրավացիորեն նշում է. «Բ. Դուռը չցանկացավ Իրանի հետ իրեն կապել պայմանագրային պարտավորություններով և այդ պատճառով ընդառաջ չգնաց անգլիական դիվանագիտության ջանքերին, առավել ևս, որ Ֆրանսիայի կողմից Ավստրիայի շախշախումից հետո Անգլիայի ազդեցությունը Կոստանդնուպոլսում ժամանակավորապես թուլացել էր»[58]: Թուրք-իրանական դաշինքի ձևավորմանը մեծապես խանգարում էին նաև երկու երկրների միջև շա-

---

[55] Утверждение русского владычества на Кавказе, под ред. В. Потто, т. 2, стр. 13.

[56] АКАК, т. 4, стр. 185—186, 810—812.

[57] А. Р. Иоаннисян, նշվ. աշխ., էջ 292:

[58] اكبر بينا على նշվ. աշխ., հ. 1, էջ 154—157:

ունակվող տերիտորիալ վեճերը, սահմանամերձ շրջանների ցեղերի անընդհատ բախումները և միմյանց ներքին գործերին միջամտելու անդադրում փորձերը։

Իրանական բանակի նոր պարտությունները և Թուրքիայի հետ զինական դաշինքի այս փորձի անհաջողությունը ստիպեցին Աբբաս միրզային 1810 թ. ապրիլին բանակցություններ սկսել ռուսական հրամանատարության հետ զինադադար ստորագրելու վերաբերյալ։ Ի պատասխան դրա, անգլիացիները ծավալեցին բուռն գործունեություն՝ ձախողելու այդ բանակցությունները, միաժամանակ իրենց հույսը չկտրելով թուրք-իրանական դաշինքի կնքման ապագա հնարավորության նկատմամբ։ «Ջոնսը աշխատում էր բանակցությունների տեքստի մեջ ընդգրկել այնպիսի կետեր,—գրում է պրոֆեսոր Ալի Աքբար Թինան,— որոնք նախապես երաշխավորում էին ռուսների համար նրանց անընդունելի լինելը»[59]։

Թուրքիայի սադրանքները ևս պակաս կարևոր դեր չխաղացին ռուս-իրանական բանակցությունները ձախողելու գործում։ Շահագրգռված լինելով Ռուսաստանի և Իրանի միջև պատերազմի շարունակման մեջ, Կոստանդնուպոլիսը սկսում է «մեծարժեք նվերներ ուղարկել Թեհրանի արքունիքին», միաժամանակ խոստանալով օգնության կարգով Իրանին հատկացնել իր անատոլիական զորամասերից 12 հազարանոց ընտիր զորք[60]։ Այնուհետև, Բ. Դուռը Իրան է ուղարկում սուլթանի լիազորություններով օժտված մեծ վեզիր Աբդուլ Վահիբ էֆենդիին, որին հանձնարարված էր նախ խափանել ռուս-իրանական զինադադարը և ապա ռազմական դաշինք կնքել շահի հետ։

Աղբյուրների վկայությամբ, այս անգամ ևս անգլիական դիվանագիտությունն ակտիվ միջամտություն է ցույց տալիս այդ բանակցություններին[61]։ Այդ առթիվ Կովկասում գլխավոր հրամանատար գեներալ Տորմասովը գրում է. «Այժմ նույն օտարերկրյա (իմա՝ Անգլիայի—Վ. Բ.) ազդեցության շնորհիվ երկու պետությունները միավորվում են մեր դեմ[62]։

Պատերազմում Իրանի ծանր վիճակը ստիպեց շահական արքունիքին ընդառաջ գնալ դաշինք կնքելու վերաբերյալ թուրքական առաջարկներին։ Ինչպես նշվեց, իրանական բանակը ռուսական զորքերից կրում

---

59 تاریخ عضد الدین آجر بینا նշվ. աշխ., հ. 1, էջ 154—157։

60 ЦГВИА, ф. ВУА, д. 6184, лл. 221—222.

61 АКАК, т. 4. стр. 719.

62 АКАК. т. 6, ч. 2, стр. 400.

էր պարտություն պարտության ետևից։ Անգլիական սպաների ղեկավարությամբ Աբբաս միրզայի բանակի վերակազմակերպման գործը առաջ էր գնում չափազանց դանդաղ, դեռևս չդրսևորելով ոչ մի նոր որակ։ Ավելին, խաները դիմադրում էին բանակի վերակառուցման այդ գործին, դրա մեջ տեսնելով իրենց ազդեցության սահմանափակման նկատառումներ։ Անդրկովկասում գնալով ուժեղանում էր Ռուսաստանին միանալու ձգտումները, որոնք ուղեկցվում էին տեղական ժողովուրդների և հատկապես հայերի բացահայտ հակաիրանական ելույթներով։ Երկրի ներսում այս ու այնտեղ անընդհատ բռնկում էին տեղական ֆեոդալների ապստամբություններ կենտրոնական շահական իշխանության դեմ։

Այս բոլորը ստիպեցին շահին 1810 թ. օգոստոսին Թուրքիայի հետ դաշինք կնքել[63], որը հայտնի է Կոստանդնուպոլսի պայմանագիր անունով։

Այսպիսով. այն, ինչ չկարողացավ իրագործել Ֆրանսիան, գլուխ բերեց անգլիական դիվանագիտությունը։

Հենց Թեհրանում գտնվելու օրերին Աբդուլ Վահիբ էֆենդին շահական կառավարության հետ մշակում է երկու պետությունների գործողությունների միասնական պլան՝ ուղղված Ռուսաստանի դեմ։ Հատկապես կարևոր նշանակություն էր տրվում ռուսների թիկունքում, Սև ծովից մինչև Կասպից ծովն ընկած տարածության վրա, տեղական ժողովուրդների (հատկապես մահմեդական) ապստամբություններ հրահրելու հարցին։ Այդ նպատակով Դաղստան, Ադրբեջան, Վրաստան և Կովկասի մյուս նահանգներն ուղարկվեցին թուրքական և պարսկական գործակալներ, որոնք իրենց հետ ունեին շահի, գահաժառանգ Աբբաս միրզայի և թուրքական սուլթանի բազմաթիվ կոչեր[64]։

Որոշվել էր նաև 1811 թ. մայիսի վերջին միացյալ ուժերով հարձակում գործել Վրաստանի վրա։ Սակայն այդ ծրագիրը հնարավոր չեղավ իրագործել մի շարք տարաձայնությունների պատճառով։ Այնուհետև, 1811 թ. սեպտեմբերին փորձ կատարվեց միավորել իրանական և թուրքական զորքերին՝ ռուսներին համատեղ հարված հասցնելու համար, սակայն այդ փորձը ևս մատնվեց անհաջողության, ընդ որում ոչ թե պատահական դիպվածի հետևանքով, ինչպես ենթադրում էր Տորմասովը[65], այլ Իրանի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող խորը հակասությունների պատճառով, որոնց հետևանքով, ինչպես իրավացիո-

---

63 اکبر بینا علی, նշվ. աշխ., հ. 1, էջ 157,

64 ЦГИА Груз. ССР, ф. 16, д. 852, лл. 1—3; АКАК, т. 4, стр. 115.

65 АКАК, т. 4, стр. 775—776, док. № 1180.

բեն նշում է ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը, այդպես էլ այդ երկու պետությունների միջև, չնայած սկզբում ֆրանսիացիների, ապա անդլիացիների ջանքերի, չհաստատվեց իրական և կայուն դաշինք[66]։

Այս շրջանում թուրք-իրանական հարաբերությունների սրման հիմնական պատճառը քրդական հարցն էր։ Մոսուլի փաշալիքի Սուլեյմանիե շրջանի քրդական առաջնորդը շարունակում էր սերտ հարաբերություններ պահպանել շահական կառավարության հետ։ Ամենայն հավանականությամբ շահի դրդումով իրեն վերադրելով Քրդստանի փաշայի տիտղոսը, նա հրաժարվում էր ենթարկվել Բ. Դռանը։ Ավելին, նա ակտիվորեն նպաստում էր իրանական ազդեցության տարածմանը ողջ հարավային Քրդստանում, մասնավորապես Ռևանդուզի, Բոհթանի և Բահդինանի կիսանկախ իշխանություններում[67]։

Հարկ է նշել, որ XIX դ. սկզբին Իրանի քրդական քաղաքականությունը աչքի էր ընկնում իր ճկունությամբ։ Սովորաբար շահը քրդական ցեղերից մեկի առավել ազդեցիկ և իրեն առավել շատ նվիրված առաջնորդներից մեկին շնորհում էր Քրդստանի ժառանգական վալիի տիտղոս և այնուհետև օգնում էր նրան զենքի ուժով իր ազդեցությունը տարածել ինչպես իրանական, այնպես էլ թուրքական Քրդստանի մյուս մասերի ցեղերի վրա։ Ճիշտ է, թեև Քրդստանի վալիները ոչ միշտ է, որ նվիրված էին մնում շահական կառավարությանը և հլու-հնազանդ կատարում նրանց ցուցումները, սակայն այնուհանդերձ Թուրքիայի հետ անընդհատ ռազմական բախումների ժամանակ, Իրանը հաճախակի օգտագործում էր այդ վալիների ազդեցությունը Թուրքիայի քրդերին իր կողմը հրապուրելու համար[68]։

Օսմանյան կայսրությունը մեծապես անհանգստացած էր նրանից, որ քրդերի նկատմամբ Իրանի ազդեցությունն անցնում է նրա պետական սահմանից այն կողմ, Թուրքիայի տարածքում ընդգրկելով նշանակալից տարածություն։ Մասնավորապես այն հանգամանքը, որ Երևանը և Նախիջևանը գտնվում էին պարսիկների ձեռքում, նրանց հնարավորություն էր տալիս այնտեղից իրենց ազդեցությունը տարածել համարյա ողջ հյուսիսային Քրդստանի, ինչպես նաև Բայազետի և մասամբ նաև Վանի փաշալիքի քրդերի վրա։

Շահական կառավարությունը հետևողականորեն սիրաշահում էր

---

[66] *Ա. Ռ. Ոսկանյան, Նշվ. աշխ., էջ 318, 322—324։*

[67] *П. И. Аверьянов,* Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия. Современное политическое положение турецких, персидских и русских курдов, Тифлис, 1900, стр. 7.

[68] *Նույն տեղում, էջ 5։*

նաև Բաղեշի քրդական խոշոր իշխանապետությանը, հատկապես նկատի առնելով նրա ռազմական, ինչպես նաև տնտեսական կարևոր դիրքը Հալեպի և Թավրիզի հաղորդակցության ճանապարհի վրա[69]։

Աբբաս միրզային հաջողվեց զանազան արտոնություններ խոստանալու գնով իր կողմը գրավել նաև Բեյլամի քրդական ռազմաշունչ ցեղերին, որոնք գահաժառանգի հեծելազորը համալրեցին 10—15 հազար անկանոն հեծյալ զորքերով։ Այդ նույն կերպ նա իր բանակի մեջ ընդգրկեց նաև Հեքյարիի քրդական որոշ ցեղերի[70]։

Այսպիսով, Արևմտյան Հայաստանում և Քրդստանում, որտեղ գերիշխում էին ժառանգական քրդական դերեբեյները և որտեղ թուրքական իշխանությունը կրում էր զուտ անվանական բնույթ, գնալով ուժեղանում էր իրանական ազդեցությունը, որը չէր կարող թուրքական կառավարող շրջաններում առաջ չբերել թշնամական ռեակցիա Իրանի նկատմամբ։ Դրան պետք է ավելացնել, որ այդ թվականներին տեղի էին ունենում մի շարք ազատագրական բռնկումներ թե՛ քրդերի և թե՛ հայերի կողմից, որոնք է՛լ ավելի էին խարխուլ դարձնում թուրքական ազդեցությունը Անատոլիայի արևելյան շրջաններում։ «Օսմանյան կառավարությունը որքան անհամբեր կդառնար և որքան ջղայնոտ շարժումներով իր բազուկը կերկարեր ինքնիշխան շրջանները թևարկելու, այնքան հաճախակի կդառնային ըմբոստությունները։ Քրդստանի ներքին իշխանապետությունները թուրքական վտանգը կզգային և առիթը չէին փախցներ հարվածելու թուրքական զորքերը։ Այսպես, Զեյթունից հետո, Քրդստանի հեռավոր, բայց ամենից զորավոր մեկ շրջանը, Սուլեյմանիե փաշալիքը, ապստամբության դրոշակը կը բարձրացներ»[71]։

Բացի վերոհիշյալ հանգամանքներից, թուրք-իրանական դաշինքը ի վիճակի չէր գործողության մեջ մտնել այն պատճառով, որ 1811 թ. աշնանը ռուսական զորքերը Կուտուզովի հրամանատարությամբ ջախջախեցին թուրքական բանակը։ Թուրքիային այլևս ոչինչ չէր մնում, բացի հաշտություն խնդրելուց։ 1812 թ. մայիսի 28-ին Բուխարեստում կնքվեց ռուս-թուրքական հաշտության պայմանագիր։

Այդ պայմանագիրը իրանական կառավարող շրջանները գնահատե-

---

69 Կ. Սասունի, Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, 1956, էջ 79—81։

70 П. И. Аверьянов, նշվ. աշխ., էջ 9—10։

71 Կ. Սասունի, Քուրդ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները, Բեյրութ, 1969, էջ 84։

ցին որպես Օսմանյան կայսրության կողմից դաշնակցային պարտավորությունների կոպիտ խախտում։ Դժգոհ լինելով, որ սուլթան Մահմուդ II-ը հաշտություն կնքեց մի պետության հետ, որի դեմ ինքը պատերազմ է մղում, Ֆաթհ Ալի շահը Բուխարեստի պայմանագիրը հայտարարեց որպես իր դեմ ուղղված մի ակտ[72]։ Շահական արքունիքի վրա ջղայնացնող ներգործություն ունեցավ հատկապես այն տեղեկությունը, որ ըստ Բուխարեստի պայմանագրի 13-րդ կետի, նախատեսվում է Բ. Դոնն «բարի ծառայությունները Ռուսաստանի և Իրանի միջև հաշտություն կնքելու գործում»[73]։

Բուխարեստի հաշտության պայմանագրի կնքումը համընկավ թուրք-իրանական հարաբերությունների նոր սրման հետ, որը 1812 թ. հանգեցրեց երկու պետությունների միջև ռազմական լուրջ կոնֆլիկտի։ Ձգված ընդհարման անմիջական պատճառ հանդիսացավ հետևյալը. համոզվելով, որ Թուրքիայի միջազգային և ներքին դրությունը հնարավորություն չեն տալիս նրան ակտիվորեն միջամտել Քրդստանի հարցերին, Սոլեյմանիեի կառավարիչ Արգուրրահմանը կրկին ապստամբեց, իրեն հռչակելով Բ. Դոնից միանգամայն անկախ։ Միաժամանակ դուրս գալով շահական կառավարության հնազանդությունից, նա հայտարարեց, որ հրաժարվում է հարկատու լինել Իրանին։ Ավելին, Արգուրրահմանը շահական արքունիքից պահանջեց իրեն վերադարձնել պատանդի վիճակում Իրանում գտնվող իր որդուն, հակառակ դեպքում սպառնալով ասպատակ սփռել Քերմանշահի նահանգում։ Ի պատասխան դրա, Քերմանշահի կառավարիչ Մոհամմադ Ալի միրզան իր զորքերը անմիջապես շարժեց դեպի Սոլեյմանիե և գրավեց այն։ Արդուրրահմանը ստիպված էր վերստին իր հնազանդությունը հայտնել շահին և արքայազուն Մոհամմադ Ալի միրզային վճարել 50.000 թոման ռազմատուգանք, պարտավորվելով յուրաքանչյուր տարի վճարել նույնքան գումար որպես հարկ։

Այս իրադարձությունները Կոստանդնուպոլսում մեկնաբանվեցին որպես Թուրքական Քրդստանի նկատմամբ Իրանի կողմից հովանավորություն հաստատելու փորձ։ Անմիջապես սուլթանը հրապարակեց հրամանագիր, որի հիման վրա Բաղդադի Արդուլլա-փաշան կատարեց զորահավաք և շարժվեց դեպի Սոլեյմանիե, պատժելու քրդական անհնազանդ առաջնորդին և վերահաստատելու այնտեղ սուլթանի իշխանու-

---

[72] Ա. Адамов, նշվ. աշխ., էջ 411։

[73] Т. Юзефович, Договоры России с Востоком, СПб., 1869, стр. 57.

թյունը։ Աբդուրրահմանը կրկին ստիպված էր փախչել Քերմանշահ և խնդրել նրա կառավարչի հովանավորությունը[74]։

Օգտվելով ստեղծված հարմար առիթից, իրանական զորքերը ներխուժեցին Բաղդադի փաշալիք։ Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Իտալինսկին հաղորդում էր, որ իրանական կառավարությունը իր թշնամական գործողությունները Թուրքիայի նկատմամբ պատճառաբանում է նրանով, որ վերջինս Ռուսաստանի հետ կնքել է սեպարատ հաշտություն, առանց հաշվի առնելու Իրանի շահերը[75]։

Թուրքական կառավարությունն իր հերթին զորքերի լրացուցիչ համալրումներ ուղարկեց Բաղդադի փաշալիք, որի հետևանքով կոնֆլիկտն ընդունեց ավելի ծավալուն բնույթ։ Թուրքական ռեյիս-էֆենդին, նույնիսկ, Կոստանդնուպոլսում անգլիական դեսպանին պաշտոնապես հայտարարեց, որ Օսմանյան կայսրությունը և Իրանը գտնվում են պատերազմական վիճակում։

Անգլիական դիվանագիտությունից մեծ ջանքեր պահանջվեցին Մերձավոր արևելքում Մեծ Բրիտանիայի քաղաքական շահերին հակասող այդ ռազմական կոնֆլիկտը դադարեցնելու համար։ Դրան հասնելու համար Լոնդոնը նույնիսկ համաձայնվեց Թուրքերին վճարել այն բոլոր վնասները, որոնք նրանց հասցվել էին շահական զորքերի կողմից 1812 թ. ռազմական ընդհարումների ընթացքում[76]։ Անգլիացիներն անում էին այս զոհողությունը, նպատակ ունենալով Ֆաթհ Ալի շահի և Մահմուդ II-ի մերձեցման շնորհիվ ամրապնդել Իրանի դիրքերը Ռուսաստանի հետ առաջիկա հաշտության բանակցությունների ընթացքում և դրանով իսկ ճնշում գործադրել Միջին արևելքում իրենց հիմնական ախոյանի նկատմամբ։

1812 թ. հոկտեմբերին Ասլանդուզի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ռուսական զորքերի կողմից Աբբաս միրզայի բանակի գլխովին ջախջախումը շահական կառավարությանն ստիպեց Թուրքիայի հետ հարաբերություններում ավելի զիջող լինել։ Ավելին, Աբբաս միրզան փորձում է ռևանշ վերցնել պարտության համար, որոշում է ռուսների վրա հարձակում գործել նրանց համար միանգամայն անակնկալ տեղից՝ Կարսի և Ախալցխայի փաշալիքների վրայով։ Իսկ դա, հասկանալի է, հնարավոր էր միայն Թուրքերի համաձայնության դեպքում։ Այդ

---

[74] *J. Morier*, Second Voyage en Perse, en Arménie et dans l' Asie Mineure fait de 1810 a 1816, Paris, 1818, vol. I, p. 343—345; vol. II, p. 28.

[75] *Ա. Ռ. Ռոսկոսյան*, Նշվ. աշխ., էջ 408։

[76] Նույն տեղում, էջ 407։

առթիվ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Ն. Պ. Ռումյանցևը գրում է Կոստանդնուպոլսում դեսպանորդ Ա. Յա. Իտալինսկուն, որ թեև թուրքական իշխանությունները թույլատրել են, սակայն Աբբաս միրզայի՝ Վրաստան ներխուժելու երկու փորձերն էլ ավարտվել են անհաջողությամբ[77]։ Իսկ Ալեքսանդր I-ին հասցեագրված 1813 թ. օգոստոսի 31-ի զեկուցագրում Ռումյանցևը հայտնում է հետևյալը. «...պարսիկները եռանդուն կերպով աշխատում են վերականգնել խաղաղությունը Թուրքերի հետ, հավանական է նաև, որ նրանց հետ դաշինք կնքեն»[78]։ 1813 թ. սեպտեմբերին Բ. Դոտը դիվանագիտական դեմարշ կատարեց Կոստանդնուպոլսում բրիտանական դեսպան Լիստոնի առջև, պատրաստվելով նույն ոգով առաջադրություններ կատարել նաև ինտերնունցիի և ֆրանսիական դեսպանի առջև, պահանջելով Թուրքիային վերադարձնել կովկասյան այն բոլոր տերիտորիաները, որոնք Ռուսաստանին էին անցել ըստ Բուխարեստի պայմանագրի։ Այդ պահանջը Բ. Դոան կողմից պատճառաբանվում էր «եվրոպական հավասարակշռությունը» վերականգնելու անհրաժեշտությամբ։ Իր դիրքերն ամրապնդելու համար Թուրքիան կոչ էր անում, որ Իրանը ևս վարվի նույն կերպ[79]։

Պատահական չէ, որ երբ 1813 թ. աշնանը Ռուսաստանի և Իրանի միջև հաշտության պայմանագիր կնքելու վերաբերյալ բանակցություններ էին տեղի ունենում, Կոստանդնուպոլիսը եռանդուն գործունեություն է ծավալում պայմանագրի ստորագրումը խանգարելու համար։ Ռումյանցևին ուղղված հաղորդագրությունում, խոսելով ռուս-իրանական բանակցությունների վերաբերյալ Թուրքիայի ռեակցիայի մասին, Իտալինսկին շեշտում է, որ այդ իրադարձությունը «բավականաչափ հեռու է այն բանից, որ հաճելի լինի Բ. Դոան համար», որը հավակնություններ ունի Կովկասի մի շարք նահանգների նկատմամբ[80]։

Անդրկովկասում իրենց տիրապետությունը վերականգնելու ձգտումը ստիպեց Իրանի և Թուրքիայի կառավարող շրջաններին միմյանց միջև եղած հակասությունները մղել ետին պլան և հանդես գալ միասնական ճակատով։ Թեև 1813 թ. աշնանը Թուրքական մայրաքաղաքում գտնվող իրանական դիվանագիտական ներկայացուցիչները՝ սկզբում Հոսեյն աղան, իսկ այնուհետև Նասրուլլահ խանը, սուլթանական կառա-

---

[77] Внешняя политика России. Документы Российского министерства иностранных дел, серия II, т. VII, М., 1970, стр. 361.

[78] Նույն տեղում, էջ 378։

[79] Նույն տեղում, էջ 388։

[80] Նույն տեղում, էջ 754։

վարության հետ բանակցություններ վարելու ժամանակ փոխադարձաբար միմյանց ներկայացնում էին տարբեր մեղադրանքներ և տերիտորիալ հավակնություններ, սակայն անգլիացիների անմիջական մասնակցության շնորհիվ կրկին պայմանավորվեցին Ռուսաստանի դեմ ստեղծել միացյալ ճակատ։

Այս նոր պայմանավորվածությունը ևս ոչ մի գործնական հետևանք չունեցավ, որովհետև 1813 թ. հոկտեմբերի 12-ին Ռուսաստանի և Իրանի միջև ստորագրվեց Գյուլիստանի հաշտության պայմանագիրը։ Այն, ինչպես և սպասվում էր, դժգոհությամբ ընդունվեց թուրքական կառավարող շրջանների կողմից։ Բ. Դուռը հատկապես դժգոհ էր նրանից, որ շահը ընդունում էր Աբխազիայի նկատմամբ Ռուսաստանի տիրապետության իրավունքը, տերիտորիաներ, որոնց նկատմամբ Օսմանյան կայսրությունը դեռ հավակնություններ ուներ։ Այնուհետև, Գյուլիստանի պայմանագրի կնքումը, թուրքական տիրապետող շրջանների կարծիքով, ի չիք էր դարձնում Իրանի և Թուրքիայի միացյալ ելույթի հնարավորությունը Ռուսաստանի դեմ։ Սակայն տեղյակ լինելով, որ հաշտության պայմանագիր ստորագրելով շահը մտածում էր Ռուսաստանի դեմ նոր պատերազմի մասին և առհասարակ իրանական արքունիքում տիրում էին ռևանշիստական տրամադրություններ, թուրքերը սկսում են շեշտված սիրալիր վերաբերմունք դրսևորել Կոստանդնուպոլսում իրանական դեսպանորդ միրզա Ռեզայի նկատմամբ։ Վերջինս հրավիրվում է Բաղդադի փաշալիքի կապակցությամբ գումարված հատուկ խորհրդաժողովի, որի ընթացքում, առիթից օգտվելով, թուրքական մինիստրները ամեն կերպ աշխատում են համոզել նրան, որ Թուրքիայի և Իրանի միջև դաշինքի կնքումը կենսական անհրաժեշտություն է երկու պետությունների համար[81]։ Ընդ որում այդ բանակցությունների ժամանակ միրզա Ռեզան սուրհանդակների միջոցով անընդհատ կապ էր պահպանում Թեհրանի հետ, հետևաբար, շահական արքունիքը տեղյակ էր այդ բանակցություններին։

Իրականում թուրքական կառավարող շրջաններին այդ ժամանակ ոչ այնքան հետաքրքրում էր դաշինքի հարցը Իրանի հետ, որքան Բաղդադի փաշալիքի հարցում իրանա-թուրքական նոր կոնֆլիկտի բռնկման հավանականությունը կանխելու հարցը։ Կոստանդնուպոլիսը երկյուղներ ուներ, որ Ռուսաստանից պարտություն կրելուց հետո Իրանը փոխհատուցում կպնտրի Բաղդադի փաշալիքի կողմում։ Այս հողի վրա, Գյու-

---

[81] А. Р. Иоаннисян, նշվ. աշխ., էջ 436։

լիստանի պայմանագրի ստորագրումից հետո, ինչպես հաղորդում էին Կ. Պոլսում ռուսական դիվանագիտական ներկայացուցիչները, Թուրքիայի և Իրանի քաղաքական հարաբերություններում նկատվում է լարվածություն[82]։ Իտալինսկին նույնպես գրում է, որ հավանական է Բաբա խանի և Բ. Դոան միջև պատերազմ բռնկվի, որ Կոստանդնուպոլսում այդ մասին լուրեր են շրջում, որոնց պատճառով դիվանը երկու անգամ նիստ է գումարել և վերջին նիստի որոշման համաձայն զորահավաքի վերաբերյալ ուղարկվել են մոտավորապես հարյուր ֆիրմաններ[83]։

Բ. Դոան այս անհանգստությունը բնավ անհիմն չէր։ Կոստանդնուպոլսում հավաստի տեղեկություններ ունեին, որ Գյուլիստանի պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո գահաժառանգ Աբբաս միրզան (որի կողմից, ի դեպ, գահը ժառանգելու օրինական իրավունքը ռուսների կողմից պաշտոնապես ճանաչվում էր Գյուլիստանի պայմանագրով), Թավրիզից իր զորքերը անմիջապես շարժել է դեպի Թուրքական սահմանը և սկսել է անընդհատ զորաշարժեր կատարել[84]։

Իրանական դեսպան միրզա Ռեզայի հետ բանակցությունների ձախողումը նույնպես անուղղակի կերպով վկայում էր, որ Իրանը Օսմանյան կայսրության նկատմամբ թշնամական ետին մտքեր ունի։

1814 թ. սկզբներին Թուրք-իրանական հարաբերությունները շարունակում են մնալ ծայրահեղ լարված վիճակում։ Ռումյանցևին ուղղված իր 1814 թ. փետրվարի 17-ի հաղորդագրությունում Իտալինսկին Կոստանդնուպոլսից գրում է, որ Թուրքական կառավարությունը նկատելի սառը վերաբերմունք է դրսևորում Օսմանյան կայսրությունում իրանական ներկայացուցիչներ Հոսեյն աղայի և Նասրոլլահ խանի նկատմամբ և որ Բ. Դուռը հանձնարարել է Էրզրումի փաշային, ինչպես նաև Իրանի հետ սահմանամերձ շրջանների մի շարք այլ զինվորական գործիչների զորահավաք կատարել և լինել ծայրահեղ զգույշ։ Ռուսական դեսպանորդը այնուհետև շարունակում է, որ Բ. Դուռը իրանա-թուրքական հարաբերությունների սրման գործում մեղադրում է Ռուսաստանին, դա վերագրելով նրա սադրանքներին[85]։

Ի դեպ, այդ նույն տեսակետին էր նաև բրիտանական դիվանագիտությունը։ Ռուս-իրանական առաջին պատերազմի ելքը լուրջ հարված էր Անգլիայի ագրեսիվ ծրագրերին, որը ձգտում էր իրեն ենթարկել Իրա-

---

[82] Внешняя политика России, серия II, т. VII, стр. 596—597.

[83] Նույն տեղում, էջ 388։

[84] Նույն տեղում, էջ 596։

[85] Նույն տեղում, էջ 596—597։

նը և սահմանել իր ռազմական հսկողությունը Կասպից ծովի ավազանի վրա։ Վախենալով, որ Ռուսաստանի ազդեցության մեծացումն Իրանում ապագայում կարող է խանգարել այդ երկիրը որպես անգլիական քաղաքականության գործիք օգտագործելուն, անգլիացիները բանակցություններ սկսեցին շահի հետ նոր պայմանագիր կնքելու վերաբերյալ։ Անգլո-իրանական այդ նոր պայմանագիրը ստորագրվեց Թեհրանում 1814 թ. նոյեմբերի 25-ին։ Այն առաջին հերթին ուղղված էր Ռուսաստանի դեմ և նպատակ ուներ հրահրել նոր ռուս-իրանական պատերազմ։ Այս պայմանագիրը մեծապես նպաստեց շահական արքունիքի ռևանշիստական տրամադրությունների աճին[86]։

Վերոհիշյալ պայմանագրով շահին խոստանալով ռազմական և ֆինանսական օգնություն այն դեպքում, եթե Իրանը պատերազմի մեջ մտներ «որևէ եվրոպական պետության դեմ», Անգլիան միաժամանակ 1816 թ. աշնանը եռանդուն կերպով ձեռնամուխ է լինում թուրք-իրանական տարաձայնությունների հարթեցմանը, նպատակ ունենալով ըստեղծել այս երկու պետությունների դաշինք՝ ընդդեմ Ռուսաստանի[87], կամ առնվազն միավորել նրանց Մերձավոր և Միջին արևելքից իր ախոյանին միաժամանակյա հարված հասցնելու համար։ Այս վերջին գաղափարը անգլիացիներին թվում էր միանգամայն ռեալ, որովհետև նույնիսկ թուրք-իրանական հարաբերությունների ծայրահեղ լարվածության վիճակում շատ հաճախ երկու պետությունները, շահերի ընդհանրության հիմքի վրա, Ռուսաստանի դեմ հանդես էին գալիս համատեղ դիվանագիտական ելույթներով։ Այսպես, 1816 թ. հունվարի 20-ին շահական դեսպան միրզա Աբոլ Հասան խանը Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Կ. Վ. Նեսսելրոդեին հղում է մի նոտա, որտեղ նա պնդում է լրիվ վերանայել Գյուլիստանի պայմանագիրը[88]։ Այդ նոտան շահական դեսպանը ուղարկեց սուլթանական կառավարության նոտայի հետ համարյա միաժամանակ, որտեղ թուրքերը պահանջում էին վերանայել Բուխարեստի պայմանագրի կետերը։ Իսկ մարտի 23-ին Պետերբուրգում բրիտանական դեսպանատունը իր հերթին նոտա է ներկայացնում ռուսական կառավարությանը, որտեղ նա պաշտպանում է Իրանի պահանջները։

---

[86] *М. С. Иванов,* Очерк истории Ирана, М., 1952, стр. 135—136.

[87] *Б. П. Балаян,* Международные отношения Ирана в 1813—1826 гг., Ереван, 1967, стр. 37.

[88] *А. П. Щербатов,* Генерал-фельдмаршал князь Паскевич, т. II, СПб., 1890, прилож., стр. 3—4.

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ անգլիական, իրանական և թուրքական դիվանագետները Ռուսաստանի դեմ ձեռնարկում էին համատեղ դիվանագիտական դեմարշ[89]։

Պատահական չէ, որ այս շրջանում Ռուսաստանի քաղաքականության էությունը կայանում էր նրանում, որ նոր ռուս-թուրքական պատերազմի բռնկման դեպքում Իրանը պահպանի չեզոքություն, կամ բացառվի թուրք-իրանական դաշինքի կնքումը։ Այս ոգով Ա. Պ. Երմոլովը Պետերբուրգից ստացել էր համապատասխան հրահանգ, որը նա աշխատում էր կենսագործել 1817 թ. Իրանում իր դեսպանության ժամանակ։ Խեղաթյուրելով այս փաստը, իրանական պատմաբաններ Մողթադար Ղոլամ Հոսեյնը[90] և Ալի Աքբար Բինան[91] պնդում են, որ, ընդհակառակը, Ռուսաստանը առաջարկում էր շահական կառավարությանը ռուս-թուրքական պատերազմի դեպքում ռազմական դաշինք կնքել Ռուսաստանի հետ, փոխարենը խոստանալով որոշ տերիտորիալ զիջումներ կատարել Իրանին։ Այդ նույն տեսակետը առաջ է մղվում նաև անգլիական պատմաբան Ռ. Վաթսոնի կողմից[92]։

Երմոլովի հետ բանակցությունները համոզեցին շահին, որ Ռուսաստանի համար ամենից անցանկալին թուրք-իրանական դաշինքի հաստատումն է, մի հանգամանք, որը մեծացրեց իրանական կառավարող շրջանների շահագրգռվածությունը անհապաղ կնքելու նման դաշինք։ Նախաձեռնությունը վերցնելով իր ձեռքը, շահը, դեռևս մինչև Երմոլովի դեսպանության վերադարձը Կովկաս, 1817 թ. սեպտեմբերին Սավե քաղաքի նահանգապետ Մոհեր Ալի խանին գաղտնի հանձնարարությամբ ուղարկեց Կոստանդնուպոլիս[93]։ Վերջինս 1818 թ. հունվարի 30-ին ընդունվում է սուլթան Մահմուդ II-ի կողմից[94], մանրամասն տեղեկություններ հաղորդում նրան Երմոլովի դեսպանության ձախողման վերաբերյալ և ավելացնում, որ Ռուսաստանը ոչ միայն անվտանգության և տերիտորիալ անձեռնմխելիության սպառնալիք է հանդիսանում Իրանի համար, այլև եղբայրակից մահմեդական երկրի՝ Թուրքիայի համար։

---

89 *Л. С. Семенов*, Россия и международные отношения на Среднем Востоке в 20-ые годы XIX в., ЛГУ, 1963, стр. 33.

90 غلام حسین مقتدر، تاریخ نظامی ایران، طهران ۱۳۱۷، ص ۲۹۳

91 *Նշվ. աշխ., հ. 1, էջ 191։*

92 *Տե՛ս* محمود محمود، تاریخ روابط سیاسی ایران و انگلیس در قرن نوزدهم میلادی، جلد اول تهران ۱۳۲۸، ص ۱۷۷

93 *Նույն տեղում, հ. 1, էջ 192։*

94 «Северная пчела», № 21, 13 марта 1818.

Այնուհետև Մոհեբ Ալի խանը հայտարարում է, որ նկատի ունենալով ռուսական անակնկալ հարձակման վտանգի առկայությունը, ինքը շահից հանձնարարություն ունի սուլթանին առաջարկել կնքելու Թուրք-իրանական հարձակողական-պաշտպանողական մի դաշինք, որպեսզի երկու հարևան մահմեդական պետությունները ի վիճակի լինեն համատեղ կերպով հակահարված տալու Ռուսաստանին[95]։ Այլ կերպ ասած առաջարկվում էր վերականգնել 1810 թ. ռազմական դաշինքի վերաբերյալ պայմանագիրը։

Ի դեպ, անգլիացիները դարձյալ մասնակցություն էին ցուցաբերում այս բանակցություններին։ Թեև Կոստանդնուպոլսում անգլիական դեսպանորդը ռուսական դեսպան Ստրոգանովի հետ զրույցի ժամանակ աշխատում է ժխտել այդ հանգամանքը, հայտարարելով, որ Անգլիան իբր «ոչ մի մասնակցություն չի ունեցել Ռուսաստանի համար այդքան տհաճ առաջարկությանը», սակայն ռուսների տրամադրության տակ եղած փաստերը անառարկելիորեն հաստատում էին, որ բրիտանական դիվանագիտությունն այդ բանակցություններում ևս խաղում էր բավականին ակտիվ դեր[96]։ Այդ հանգամանքը հաստատվում է նաև կողմնակի տվյալներով։ Զննելով անգլիական դիվանագետների վարքագիծը և գործողությունները Սրբազան դաշինքի Ախենի կոնգրեսում (1818 թ. հոկտեմբեր-նոյեմբեր), ռուսական քաղաքագետները պարզորոշ կերպով եկել էին այն համոզման, որ Անգլիան մտադրություն ունի «միջամտելու... Ռուսաստանի հարաբերություններին Պարսկաստանի և Թուրքիայի նկատմամբ»[97]։

Անգլիական միջնորդությունը և Իրանի եռանդուն ջանքերը, սակայն, այս անգամ ևս ավարտվեցին ապարդյուն։ Բ. Դուրը մերժեց շահական կառավարության առաջարկը, հայտարարելով, որ իր հարաբերությունները Իրանի հետ առանց այն էլ «հիմնված են իսլամի սրբազան դավանակցության հիմքի վրա» և որ ոչինչ չի կարող «նոր և ավելի մեծ ուժ հաղորդել իրենց սերտ և բարեկամական դաշինքին»[98]։

Թուրքական կառավարության կողմից այս մերժումը նախ պետք է բացատրել նրանով, որ տվյալ իրադրության պայմաններում, երբ Իրա-

---

[95] على اكبر بينا նշվ. աշխ., հ. 1, էջ 192, տե՛ս նաև՝ *В. Потто*, Кавказская война, т. 3, СПб., 1887, стр. 6.

[96] АКАК, т. VI, ч. 2, стр. 189—190.

[97] *С. М. Соловьев*, Император Александр I. Политика-дипломатия, СПб., 1877, стр. 470.

[98] АКАК, т. VI, ч. 2, стр. 189—190.

նը այլևս պատերազմական վիճակի մեջ չէր գտնվում Ռուսաստանի հետ, Թուրք-իրանական դաշինքը ոչինչ չէր կարող տալ Օսմանյան կայսրությանը։ Բացի այդ իրանա-թուրքական հարաբերությունները դեռ գտնվում էին լարված վիճակում և Բ. Դուռը կասկածանքով էր վերաբերվում շահական կառավարության անկեղծությանը։

Թուրքիայի հետ դաշինք կնքելու այս փորձի անհաջողությունը ուժեղացրեց դաշարների՝ Անգլիայի հետ մերձեցման և նրանից ռազմական և ֆինանսական օգնություն ստանալու ճանապարհով Անդրկովկասում կորցրած տերիտորիաները ետ նվաճելու մտայնությունը։ Այդ նպատակով 1818 թ. վերջին Լոնդոն ուղարկվեց դիվանագիտական մի առաքելություն միրզա Աբոլ Հասան խան Շիրազիի գլխավորությամբ։ Անգլիական մայրաքաղաք մեկնելու ճանապարհին շահական դեսպանության ղեկավարը Կոստանդնուպոլսում մի փորձ ևս կատարեց դաշինքի վերաբերյալ Թուրքիայի հետ պայմանավորվելու ուղղությամբ։ Կոստանդնուպոլսում նա մշտապես արժանանում էր «վեզիրի, սուլթանի և օտարերկրյա, հատկապես անգլիական, դեսպանների ունկնդրությանը»։ Ստրոգանովին այցելելու ժամանակ Աբոլ Հասան խանը նրան է հանձնում միրզա Բոզորգի նամակը, որտեղ վերամբարձ արտահայտություններով խոսվում էր Ռուսաստանի և Իրանի միջև «սերտ դաշինքի» մասին։ Ոչ մի ճշմարիտ խոսք չասելով իր Լոնդոն մեկնելու նպատակների մասին, Աբոլ Հասան խանը հայտարարում է, որ ինքը ուղարկված է միայն շահի «Բարեկամական նամակները» հանձնելու թուրքական սուլթանին, ավստրիական կայսրին և ֆրանսիական թագավորին»[99]։

Կոստանդնուպոլսում իրանական առաքելության ղեկավարի առաջարկներին Բ. Դուռը պատասխանեց քար անտարբերությամբ[100]։ Դա էլ ավելի սրեց թուրք-իրանական առանց այն էլ լարված հարաբերությունները։ Սահմանամերձ շրջաններում երկու պետությունների միջև ծայր առան ռազմական ընդհարումներ[101]։ Կոնֆլիկտի անմիջական պատճառ հանդիսացավ այն, որ ռուս-իրանական պատերազմի շրջանում, օգտվելով Իրանի դժվարին կացությունից, Թուրքիան գրավել էր իրանական սահմանամերձ մի շարք տերիտորիաներ։ Բացի այդ, սկսել

---

99 Տե՛ս Ստրոգանովի 1818 թ. դեկտեմբերի 2-ի նամակը Երմոլովին։ АКАК, т. VI, ч. 2, стр. 414—415.

100 Л. С. Семенов, նշվ. աշխ., էջ 51։

101 Նույն տեղում, էջ 72։

էր թուրքահպատակ քրդերին ակտիվորեն հրահրել Իրանի դեմ[102]։ Երկու երկրների միջև միջպետական հարաբերությունների բարդացման պատճառ էր հանդիսացել նաև թուրքական իշխանությունների կողմից շիիթների սրբազան վայրեր՝ Քարբալա և Նաջաֆ, ուխտագնացության մեկնող պարսիկներից գանձվող մաքսատուրքերի բարձրացումը։

Իրաքի օսմանյան վարչությունը պահանջում էր նաև պարսիկ հանգուցյալներին Նաջաֆ տեղափոխելու և այնտեղ թաղելու համար վճարել բավականին բարձր տուրք, որից խուսափելու համար հանգուցյալների հարազատները դիմում էին սահմանը անցնելու անլեգալ միջոցին[103], որն, անշուշտ, բարդությունների տեղիք էր տալիս։ Առկա էին նաև կոնֆլիկտի սրման այլ պատճառներ։ Այսպես, Սոլեյմանիեի քուրդ նոր կառավարիչ Մահմուդ փաշան բացահայտ կերպով չէր ցանկանում ենթարկվել Բաղդադի Դավուդ փաշային և հայտարարում էր, որ ինքը միայն իրանական շահին է համարում իր սյուզերենը։ Քրդական անհնազանդ առաջնորդին պատժելու համար Դավուդ փաշան զորքեր է շարժում դեպի Քրդստան, որին Իրանը պատասխանել էր Սոլեյմանիեի շրջանում խոշոր բանակի կենտրոնացմամբ[104]։

Քերմանշահի շրջանում նահանգի կառավարիչ Մոհամմադ Ալի միրզան, իսկ հյուսիսում Երևանի խանության սարդար Հոսեյն խան Ղաջարը իրենց գործակալության միջոցով ակտիվորեն սկսեցին գործել Բաղդադի, Վանի, Բայազետի և Մուշի շրջաններում։ Սուր վեճի առարկա էր դարձել նաև Շաթթ օլ Արաբ գետի մի քանի կղզիների պատկանելիության հարցը, որոնց նկատմամբ երկուատեք ներկայացվում էին հավակնություններ։

Թուրքական և իրանական զորքերի միջև ռազմական բախումները ծայր առան սկզբում Փյանջևանի և Զոհաբի լեռնային շրջաններում և հարավում՝ Խուզեստանի նահանգում, իսկ այնուհետև տարածվեցին նաև այլ շրջաններում։ Փաստորեն թուրք-իրանական սահմանը վերածվել էր ճակատային մի գծի։

Իրանա-թուրքական հարաբերությունների լարվածությունը ուղեկցվում է իրանա-անգլիական հարաբերությունների վատթարացմամբ։ Ի

---

102 ناصرنجمی، عباس میرزا یارشیدترین و میهن پرستترین فرزند خاندان قاجار و جنگهای ایران با روسیه تزاری، تهران ۱۳۳۷، ص ۱۰۴

103 *Khalid al-Issi*, The Shatt al-Arab dispute. State University of Gröningen, 1971, p. 16—17.

104 *А. Адамов*, Նշվ. աշխ., էջ 415։

հայտ եկան շահական արքունիքի և Մեծ Բրիտանիայի միջև հակասությունների սրման բազմաթիվ պատճառներ։ Նախ Լոնդոնում ձախողման մատնվեց միրզա Աբոլ Հասան խան Շիրազիի առաքելությունը։ Այնուհետև, Պարսից ծոցում և Իրաքում տեղի ունեցած իրադարձությունները է՛լ ավելի բարդացրին Անգլիայի և Իրանի հարաբերությունները։ Այն բանից հետո, երբ 1819 թ. Եգիպտոսի տիրակալ Մոհամմադ Ալին խոշոր հաղթանակ տարավ Արաբական թերակղզու վահաբիթների պետության նկատմամբ, որն իր հսկողության տակ էր պահում նաև Պարսից ծոցի առափնյա քաղաքները, արգելք հանդիսանալով անգլիական առևտրին, Օստ-Հնդկական ընկերությունը որոշեց օգտվել պատեհ առիթից և նավատորմ ուղարկելով Պարսից ծոց, ջախջախեց տեղական շեյխերին և նավահանգստային քաղաքները ենթարկեց իր ազդեցությանը։ Քիչ ավելի ուշ, 1820 թ. հունվարին, անգլիացիները Օմանի շեյխերին ստիպեցին կնքել մի պայմանագիր, որի շնորհիվ ծովահենության և ստրկավաճառության դեմ պայքարի պատրվակի տակ Անգլիան հնարավորություն էր ստանում «կարգ ու կանոն» պահպանել Պարսից ծոցի ջրերում։ Այդ պայմանագրին ստիպված էր միանալ նաև Բահրեյնի շեյխը։ Դա նշանակում էր Անգլիայի բացահայտ կոնֆլիկտը Իրանի հետ, որովհետև վերջինս Բահրեյնը դիտում էր որպես իր տիրույթը և բացի այդ այնտեղից ստանում էր խոշոր եկամուտներ (բահրենյան կղզիներից մարգարտի հանույթը շահական գանձարանին բերում էր տարեկան 1 միլիոն ռուբլուց ավելի եկամուտ)[105]։ Մյուս կողմից, Բաղդադի փաշալիքում. (Արաբական Իրաքում), անգլիական վաճառականների մրցակցությունը մեծ վնասներ էր հասցնում իրանական առևտրին, որը նույնպես հանդիսանում էր անգլո-իրանական հարաբերությունների սրման պատճառներից մեկը[106]։ Շահական կառավարության դժգոհությունն անգլիացիներից է՛լ ավելի մեծացավ, երբ բրիտանական ռազմական հրահանգիչներ Լինդզեյը և Մակինդոշը և խորհրդականներ Արմստրոնգը և Վիլյամսոնը հեռացան Իրանից[107]։

Այս պարագաներում, չնայած Կովկասում և Միջին Ասիայում ցարական կառավարության վարած քաղաքականության նկատմամբ ունե-

---

[105] *И. Бларамберг*, Статистическое обозрение Персии, СПб., 1857, стр. 27; *Ф. Ф. Бартоломей*, Посольство Меншикова в Персию в 1826 г. (Из дневника), СПб., 1904, стр. 34.

[106] Տե՛ս *V. Fontanier*, Voyage dans l'Inde et dans le Golfe Persique. т. I, Paris, 1844

[107] *R. Lyall*, Travels in Russia, vol. II, London, 1825, p.p. 65—66.

ցած մեծ դժգոհության, շահական արքունիքը որոշեց մերձենալ Ռուսաստանին։ Վերջինս իր հերթին ընդառաջ գնաց իրանական կառավարության այդ տրամադրություններին։ Նախ 1819 թ. Ալեքսանդր I-ը Աբբաս միրզային ճանաչեց որպես իրանական գահաժառանգ[108]։ Ի պատասխան դրան, Աբբաս միրզան իր նվիրվածությունը հայտնեց ռուսական կայսրին[109] և համաձայնվեց ռուսներին վերադարձնել Իրանում գտնվող իրենց ռազմագերիների մի մասը։

Այնուհետև, 1820 թ. դիվանագիտական հանձնարարությամբ Ա. Պ. Երմոլովի կողմից Իրան ուղարկվեց ռուսական սպա Ն. Ա. Կախովսկին, իսկ Աբբաս միրզան իր հերթին հանձնարարեց Թիֆլիս մեկնել միրզա Մասուդին, որպեսզի վերջինս ռուսական իշխանություններին հայտնի գահաժառանգի «անկեղծ բարեկամության և բարի կամեցողության հավաստիքները»[110]։

XIX դ. 20-ական թթ. սկզբին սկսվեց արևելյան ճգնաժամի նոր արում։ Օսմանյան կայսրությունը ցնցվում էր ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներից։ Հատկապես ուժգին թափ ստացավ հույն ժողովրդի ազատագրական պայքարը։ Հունական ապստամբները ազատագրեցին Կալֆատան, Միսսոլունգին, Լիվադիան։ Դարդանելում հույն նավաստիները ջախջախեցին սուլթանի նավատորմը։ Բալկանյան թերակղզու կենտրոնում և հարավում ապստամբությունը տարածվում էր ավելի մեծ ուժով։ Համարյա ողջ հույն ժողովուրդը արձագանքում էր ապստամբ-գետերիստների կոչին։ Բացի այդ, 1820 թ. գարնանից սուլթանական բանակի մեծ մասը զբաղված էր ապստամբած Էպիրի փաշայի դեմ պայքարով։ Օսմանյան կայսրության համար լուրջ դժվարություններ էին ստեղծվել նաև Մոլդավիայում և Վալախիայում։ Սուլթան Մահմուդ II-ը և նրա կառավարությունը ուղղակի գտնվում էին խուճապի մեջ։ Սուլթանը հարկադրված էր անատոլիական զորամասերը տեղափոխել Բալկաններ, որի հետևանքով Իրանի հետ թուրքական սահմաններն ըստ էության մնացել էին անպաշտպան վիճակում։

Շահական կառավարությունը և մասնավորապես Աբբաս միրզան որոշեցին օգտվել ստեղծված հարմար առիթից՝ զենքի ուժով լուծելու

---

108 АКАК, т. VI, ч. 2, стр. 213—214.

109 Путевые заметки Грибоедова, 28 июля 1819 г. (Султаниэ). *А. С. Грибоедов*, Соч., т. III, стр. 85.

110 *А. З. Иоаннисиани*, Кавказ во внешней политике России в начале XIX в. Ученые записки Московского пед. института им. В. И. Ленина, т. XXXVII, 1946, стр. 123.

Թուրքիայի հետ ունեցած բաղում վեճերը։ Աբբաս միրզան, հատկապես, որոշել էր Օսմանյան կայսրությունից տերիտորիալ նվաճումների հաշվին փոխհատուցել այն կորուստները, որ Իրանն ունեցել էր Անդրկովկասում։ Պատերազմում հաղթանակ ձեռք բերելու դեպքում գահաժառանգը հույս ուներ նաև վերականգնել իր խարխլված դիրքերը։ Որպես իրանական բանակի գլխավոր հրամանատար նա անձամբ ինքն էր կրում Ռուսաստանի հետ պատերազմում պարտությունների և Գյուլիստանի պայմանագրի կնքման պատասխանատվությունը։ Վերջապես, հաղթանակի դեպքում Աբբաս միրզան կարող էր ամրապնդել գահաժառանգի իր դիրքերը, քանի որ նրա բազմաթիվ եղբայրները շարունակում էին գահի նկատմամբ ունենալ հավակնություններ։ Ընդ որում մոտալուտ ռուս-թուրքական պատերազմի հավանականությունը հույս էր ներշնչում իրանական կառավարող շրջաններին, որ Թուրքիայի հետ առաջիկա ռազմական բախման ընթացքում իրենք ոչ միայն կօգտվեն Ռուսաստանի աջակցությունից, այլև հանձին նրա կունենան ռազմական հուսալի դաշնակից։ Այդ հույսերը ձեռք բերեցին շոշափելի կերպարանք հատկապես այն բանից հետո, երբ 1821 թ. հունիսի 28-ին Ալեքսանդր I-ը Կոստանդնուպոլսում իր դեսպան Ստրոգանովի միջոցով սուլթանին հղեց մի վերջնագիր[111], որի բովանդակությունը ոչ մի կասկած չէր թողնում, որ Ալեքսանդր I-ը պատրաստվում է պատերազմ սկսել Մահմուդ II-ի դեմ։ Թուրքական դիվանի կտրուկ առարկությունների պատճառով Ստրոգանովը հեռացավ Կոստանդնուպոլսից և 1821 թ. օգոստոսի 8-ին Ք. Դոան և Ռուսաստանի միջև դիվանագիտական հարաբերություններն արդեն խզված էին։ Ալեքսանդր I-ը Ռուսական կայսրության հարավային սահմաններում ձեռնամուխ եղավ զորահավաքի։ Սակայն ցանկանալով իր գործողությունները համաձայնեցնել մեծ պետությունների հետ, ռուսական կայսրը չէր շտապում ռազմական գործողություններ սկսել Թուրքիայի դեմ։ Շուտով պարզվեց, որ Եվրոպայի առաջնակարգ երկու պետությունները՝ Անգլիան և Ավստրիան միավորվել են խանգարելու համար Պետերբուրգի ծրագրերի իրագործմանը։ Այդ երկու պետությունները նույնիսկ անթույլատրելի էին համարում քննարկել Օսմանյան կայսրության լինել կամ չլինելու հարցը և ամեն կերպ ձգտում էին կանխել ռուս-թուրքական բախումը։ Այդ նպատակով Ավստրիայի և Անգլիայի արտաքին գործերի մինիստրներ Մետտերնիխը և Կեստրլին կնքեցին միմյանց սերտորեն կապող մի համաձայնագիր,

[111] Տե՛ս А. Дебидур, Дипломатическая история Европы, т. I, М., 1947, стр. 194.

ըստ որի իրենց միապետները պետք է բոլոր ջանքերը գործադրեին խաղաղությունը Ռուսաստանի և Թուրքիայի միջև պահպանելու համար»[112]։

Բնական է, որ ավստրո-անգլիական այս համաձայնագիրը սառեցնելու էր ցարի ռազմաշունչ տրամադրությունները, մանավանդ որ նրա մտադրությունները աջակցություն չգտան նաև Բեռլինում և Փարիզում։

Իրանական արքունիքը, որը ուշի-ուշով հետևում էր այս իրադարձություններին, անշուշտ պետք է համոզվեր, որ Թուրքիայի դեմ նախապատրաստվելիք պատերազմում Ռուսաստանին որպես դաշնակից ունենալը լոկ բաղձալի երազանք է։ Շահական կառավարությունը առիթներ ուներ նաև ենթադրելու, որ պատերազմը Թուրքիայի դեմ ոչ միայն աջակցություն չի ստանալու Անգլիայի կողմից, այլև հանդիպելու է նրա հակազդեցությանը։ Այդ ենթադրությանը հանգելու համար հիմքեր էին տալիս հետևյալ հանգամանքները. իրանա-թուրքական պատերազմը անխուսափելիորեն պետք է հանգեցներ Ռուսաստանի պոտենցիալ հակառակորդների բանակների թուլացմանը, որը, անտարակույս, ձեռնտու չէր Անգլիային։ Այնուհետև, հակառակ անգլիացիների ցանկությունների, Աբբաս միրզան պետք է Անգլիայից ստացած զենքը օգտագործեր թուրքերի դեմ, մինչդեռ այն հատկացվում էր Ռուսաստանի դեմ պատերազմի համար։ Ոչ կարևոր նշանակություն ուներ և այն, որ իրանա-թուրքական պատերազմը վերջնականապես ի չիք կդարձներ Թուրքիայի և Իրանի միջև հակառուսական դաշինք ստեղծելու պլանը, որի վրա անգլիացիները ծախսել էին բազում միջոցներ և հսկայական ժամանակ։ Անտարակույս, այդ պատերազմը խոշոր հարված կհասցներ նաև Մերձավոր ու Միջին արևելքում անգլիական առևտրին, որովհետև պատերազմի շրջանում իսպառ կփակվեին Օսմանյան կայսրության վրայով անցնող անգլիական առևտրի գլխավոր ուղիները[113]։ Լոնդոնի կաբինետը չէր բացառում նաև, որ թուրք-իրանական պատերազմի ընթացքում շահերի միասնության հիմքի վրա կարող է ստեղծվել ռուս-իրանական ռազմական դաշինք, որը կունենա անասելի ծանր հետևանքներ Մեծ Բրիտանիայի ռազմական, տնտեսական և քաղաքական շահերի համար ոչ միայն Մերձավոր արևելքում, այլև Բալկաններում, միջերկրածովյան ավազանում և հատկապես սևծովյան նեղուցների շրջանում։ Վերոհիշյալ նկատառումները ստիպում էին բրիտանական դիվա-

---

[112] Հ. Դեմիդր, նշվ. աշխ., էջ 194—195։
[113] Ե. Պ. Բալայան, նշվ. աշխ., էջ 73։

նագիտությանը ձեռնարկել բոլոր միջոցները կանխելու իրանա-թուրքական պատերազմը։ Սակայն ի վերջո այդ ջանքերը չտվեցին ոչ մի դրական արդյունք։

Հասունացող իրանա-թուրքական պատերազմը անտարակույս հանդիսանալու էր Պետերբուրգի կաբինետի սևեռուն ուշադրության առարկան։ Ռուսաստանին հետաքրքրում էր ոչ միայն այդ պատերազմը, այլև նրա հավանական հետևանքները։ Այդ իսկ պատճառով 1821 թ. օգոստոսի 23-ին Երմոլովը գրում է Իրանում ռուսական դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Ի. Մազարովիչին, որ լավ կլիներ, եթե հնարավոր լիներ «թափանցել Պարսկաստանի հարաբերությունների մեջ Բ. Դռան նկատմամբ» և պարզել նաև «կարող է արդյոք պատերազմը (Հունաստանում—Վ. Բ.) միավորել Իրանին և Թուրքիային՝ ընդդեմ Ռուսաստանի»։ Երմոլովը շեշտում էր նման «հետազոտության» կերևորությունը, հույս հայտնելով, որ Իրանում ռուսական միսիայի խորաթափանցությունը կկանխի Ռուսաստանի համար անցանկալի հետևանքները[114]։

Սակայն իրեն տրված հանձնարարությունը Մազարովիչը կատարում է վերին աստիճանի ապաշնորհ կերպով։ Այդ առթիվ Ն. Ն. Մուրավյովի գրառումներում կարդում ենք. «Երբ Պետերբուրգից ստացվեցին համապատասխան թղթերը, որոնցում հայտնվում էր պարսկական արքունիքին, որ թուրքերը իրենց վարքագծով իրենց վրա են բարդում կայսրի զայրույթը և իրենք են մեզ դրդում պատերազմի, անհրաժեշտ էր բացատրել Աբբաս միրզային, որ կայսրը ցանկանում է, որ բոլոր ժողովուրդները իմանան, որ զավթումների կիրքը չէ, որ ստիպում է նրան վարվել այդ կերպ, այլ բացառապես թուրքերի ոչ ճիշտ արարքները իր նկատմամբ։ Գրիբոյեդովը գնացել էր Աբբաս միրզայի մոտ և բացատրել այդ հանգամանքը, ասելով, որ կայսրը չի պահանջում դաշնակիցներ, այլ միայն ցանկանում է, որ գահաժառանգը տեղյակ լինի այդ բոլորին։ Աբբաս միրզան ուրախանալով, այս առիթով խոստացավ հանել 50 հազար զորք և շարժվել թուրքերի վրա, որը և նա արեց։ Հաջորդ օրը Մազարովիչը հանդիպելով նրան (Աբբաս միրզային—Վ. Բ.) այգում, սկսեց նրան այդ նույն բանը ասել։ Սակայն փոխանակ զգուշություն պահպանելու, նա սկսեց խնդրել Աբբաս միրզային լինելու մեր դաշնակիցը և երբ նա տվեց իր համաձայնությունը, ի նշան երախտագիտության նա հափշտակեց նրա ձեռքը և համբուրեց այն։ Ահա մի արարք,

---

[114] АКАК, т. VI, ч. 2, стр. 242; *Տե՛ս նաև С. В. Шостакович*, Дипломатическая деятельность Грибоедова, М., 1960, стр. 60.

որը սազական է մեր ծառայության մեջ գտնվող օտարերկրյա վարձ-
կանի»—վերջում բացականչում էր Ն. Մուրավյովը[115]։

Այս զրույցներից. Աբբաս միրզան, անշուշտ, կռահելու էր, որ Թուր-
քիայի հետ առաջիկա պատերազմում Ռուսաստանը, եթե հանդես չգա
դաշնակցի դերում, համենայն դեպս համակրանքով կվերաբերվի Իրա-
նին։ Ի դեպ, այդ տեսակետի համոզված կողմնակից էր նաև Երմոլովը,
որը Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Նեսսելրոդեին գրած
նամակում շեշտում էր, որ իրանա-թուրքական պատերազմը «մեզ հա-
մար չափազանց ձեռնտու է, քանի որ թուրքերի հետ մեր խզման դեպ-
քում թեև մենք չունենք պարսիկների օգնության կարիքը, սակայն
նրանց փոխադարձ թշնամանքը անօգուտ չէ մեզ համար»[116]։ Այդ նույն
տեսակետին էին նաև Ռուսաստանի արտաքին քաղաքականության ղե-
կավարներից մեկը՝ Ի. Կապոդիստրիան և գլխավոր շտաբի պետ Ի. Ի.
Դիբիչը, որոնք գտնում էին, որ անհրաժեշտ է անհապաղ ռազմական
դաշինք կնքել Իրանի հետ, «զինել պարսիկներին», ի շահ հասունացող
պատերազմի Թուրքիայի դեմ[117]։

Սակայն նման տեսակետները բնավ չէին բաժանվում Ալեքսանդր
I-ի և նրա արտաքին գործերի մինիստրի կողմից։ Թյուրիմացություն-
ները կանխելու համար Նեսսելրոդեն հանձնարարեց Իրանում ռուսական
ներկայացուցիչներ Գրիբոյեդովին և Մազարովիչին այցելել Աբբաս
միրզային և պաշտոնապես հայտարարել նրան, որ Ռուսաստանը ձեռն-
պահ է մնում Իրանի հետ Թուրքիայի դեմ համատեղ ելույթ ունենալուց[118]։

Բանն այն է, որ ցարական կառավարող շրջանները Իրանի հետ
դաշնակցելու կամ նրան աջակցելու հարցը անխզելի կերպով կապում
էին այն դեպքի հետ, եթե Ռուսաստանը պատերազմի մեջ մտներ Թուր-
քիայի հետ։ Սակայն, քանի որ 1821 թ. Պետերբուրգում դեռ համարում
էին, որ Հունաստանը կանգնել է հեղափոխության կործանարար արա-
հետի վրա, որոշվեց պատերազմի հարցը Թուրքիայի հետ միառժամա-
նակ հետաձգել[119]։

---

[115] «Русский архив», 1888, № 5, стр. 105; См. запись Н. Н. Муравьева от января 1822 г.

[116] АКАК, т. VI, ч. 2, стр. 253.

[117] *И. Каподистрия*, Записка о служебной деятельности (1826). Сборник «Российского императорского общества», т. 3, стр. 272; «Соображения барона Дибича о действиях против Турции» (июль, 1821).

[118] ЦГИАЛ, ф. 1018, оп. 2, д. 90, л. 11.

[119] *Л. С. Семенов*, նշվ. աշխ., էջ 72։

1821 թ. ամռան վերջին թուրք-իրանական հարաբերությունները հասան ծայրահեղ սրության։ Սահմանի առանձին հատվածներում սկսվեցին զինված կատաղի բախումներ։ Կողմերը սկսեցին լայնորեն օգտագործել սահմանամերձ շրջանների իրենց հպատակ քրդական ցեղերին, նրանց հրահրելով անցնել սահմանը և ասպատակ սփռել հակառակորդի կողմում։

Բայազետի կառավարիչ Սելիմ փաշային հաշողվեց համոզել իրանահպատակ քրդական Հայդերանլու և Վիսիրկի ցեղերին անցնել Թուրքիա և այնտեղից հարձակումներ գործել իրանական տերիտորիայի վրա։ Ընդ որում թուրքական իշխանությունները Աբբաս միրզային պաշտոնապես հայտնեցին, որ իրենք հավակնություններ ունեն այն տերիտորիաների նկատմամբ (Սալմաստի շրջակայքում), որոնք հանդիսանում էին Հայդերանլու ցեղի բնակավայրերը[120]։ Աբբաս միրզան ստիպված էր Էրզրումի փաշայի մոտ ուղարկել իր ներկայացուցիչ հաջի Ալի բեկին հիշյալ խնդրի շուրջը բանակցելու համար, սակայն փաշան ձերբակալեց նրան և բանտ նետեց[121]։

Թուրքական իշխանությունները ամենուրեք սկսեցին հալածանքների ենթարկել Օսմանյան կայսրությունում բնակվող իրանահպատակ պարսիկներին։ Հատկապես Բազդադում և Էրզրումում ծայր առավ հակաշիիթական ուժգին քարոզչություն։ Իրաքի տեղապահ Դավուդ փաշան հրամայեց բռնագրավել Բաղդադում բնակվող բոլոր հարուստ պարսիկների գույքը և հարստությունները, իսկ իրենց ձերբակալել։ Այդ նույն կերպ նա վարվեց նաև Քարբալայում և Նաջաֆում։ Շիիթական այս սրբազան քաղաքների բոլոր հարստությունները տեղափոխվեցին Բաղդադ և վերածվեցին թուրքական ոսկեդրամի[122]։ Ուժեղացրին հալածանքները նաև Իրաքում շիիթների սրբազան վայրեր մեկնող իրանական ուխտավորների նկատմամբ[123]։ Բանը նույնիսկ հասավ նրան, որ Էրզրումի զորամասի պետը գնդակահարեց իրանական դեսպանորդ Սադեղ բեկին[124]։ Դրությունը է՛լ ավելի շիկացավ, երբ Էրզրումի վրայով

---

120 ناصر نجمی նշվ. աշխ., էջ 104։

121 Նույն տեղում։

122 C. J. Rich, նշվ. աշխ., էջ 220։

123 عباس اقبال، تاریخ مفصل ایران از استیلای مغول تا انقراض قاجاریه تهران ۱۳۴۳، ص ۳۷۹

124 عبدالله رازی، تاریخ ایران، تبریز ۱۳۳۵، ص ۴۷۰ــ۴۷۱

ուխտագնացության մեկնող Ֆաթհ Ալի շահի հարեմը ենթարկվեց այդ նահանգի սերասկեր Ալի փաշայի հարձակմանը և կողոպուտին[125]։

Իրանական ֆեոդալական ազնվականությունը, բարձրաստիճան հոգևորականությունը և զինվորականությունը, ինչպես նաև շահական արքունիքի մեծ մասը գտնում էր, որ շահը պետք է անհապաղ պատերազմ հայտարարի Օսմանյան կայսրությանը։ Այդ խնդրում հատկապես մեծ շահագրգռվածություն էր դրսևորում գահաժառանգ Աբբաս միրզան, որի կարծիքով, Թուրքիայի ներքին և միջազգային բարդությունները (յանիչարիների հուզումները, պատերազմը Հունաստանում, ապստամբությունը Վալախիայում և այլն) հիանալի հնարավորություններ են ստեղծում Թուրքիայի դեմ հաղթական պատերազմ մղելու համար։ Աբբաս միրզան հատկապես տենչում էր ճակատամարտի դաշտում փորձել իր բանակի ռազմական վերակառուցումների արդյունքները, մանավանդ որ միանգամայն ակնհայտ էր, որ 1814 թ. մինչև 1821 թ. ընկած շրջանում Իրանի զինված ուժերի վերակառուցման գործը ձեռք էր բերել շոշափելի հաջողություններ։

Քաջ գիտակցելով, որ պատերազմը Թուրքերի դեմ կարող է առաջ բերել միջազգային բնույթի բարդություններ, գահաժառանգը ռազմական գործողություններ սկսելու նախօրյակին սկսեց ձեռնարկել որոշակի դիվանագիտական նախապատրաստություններ։ Նրան հատկապես մտահոգում էր պատերազմի ընթացքում Ռուսաստանի դիրքորոշման հարցը։

Վերոհիշյալ նկատառումներից ելնելով Աբբաս միրզան նախ մինամակ հղեց Երմոլովին, որտեղ գրում էր, որ իբր Թուրքական կառավարության կողմից հույն քրիստոնյաների նկատմամբ գործադրվող դաժանությունները իր մեջ առաջ են բերում զայրույթի բուռն զգացում և պարտադրում են իրեն պատերազմի դուրս գալ Թուրքիայի դեմ[126]։ Անշուշտ, այս հայտարարությունը նպատակ ուներ նախ շահել Ռուսաստանի համակրանքը և ապա Թուրքերի դեմ պատերազմը սքողել հանուն արդարության մղվող պայքարի լուսապսակով։

Քանի որ Աբբաս միրզան մտադիր էր իր բանակը շարժել երկու ուղղությամբ՝ Միջագետքի և Արևմտյան Հայաստանի, նա եռանդուն աշխատանքներ էր տանում պատերազմի ընթացքում այդ շրջանների բնակչության աջակցությունը ստանալու համար։ Արևմտյան Հայաստանում նա իր հույսերը կապում էր հայ բնակչության հետ, նկատի ունե-

---

125 فریدون آدمیت، امیر کبیر و ایران، تهران، ۱۳۳۴، ص ۳۷

126 В. Потто, նշվ. աշխ., էջ 9։

նալով, որ օսմանյան ծանր լուծը ազդակ կհանդիսանա հայերի հակաթուրքական ելույթների համար։ Իր այս նպատակին հասնելու համար Աբբաս միրզան մեծ շքախմբով մեկնեց էջմիածին, որպեսզի կաթողիկոսն իր սուրն օրհնի քրիստոնեական խորանում[127]։ Դրանով նա ըստ երևույթին հույս ուներ նաև շահել Արևելյան Հայաստանի հայ բնակչության համակրանքը։

Իսկ Միջագետքում Աբբաս միրզան իր հույսերը դրել էր այնտեղ գտնվող պարսկական խոշոր համայնքի և շիիզմը դավանող արաբական ցեղերի վրա, որոնց շրջանում Իրանը բազմաթիվ կողմնակիցներ ուներ։ Իրաքի հյուսիսում իրանական պրոպագանդան մղվում էր Քերմանշահից, իսկ հարավում իրանական ազդեցության ուղեկցողն էր Հովեյզա քաղաքը, որի շուրջը դեռևս XVIII դ. սկզբից բնակվում էր Բենի Լյամի արաբական ցեղը (20.000 մարդ), ինչպես նաև Մունթեֆիկի ցեղը, որոնք ունեին իրանական կողմնորոշում[128]։ Գիտակցելով, որ Միջագետքի արաբական մի շարք ցեղերի պրո-իրանական տրամադրությունները մեծագույն վտանգ են հանդիսանում փաշալիքի համար, Դավուդ փաշան պատերազմի հենց նախօրյակին եռանդուն կերպով ձեռնամուխ եղավ նրանց հնազանդեցմանը և սաղմում խեղդեց այդ ցեղերի ապստամբության հնարավորությունը հօգուտ Իրանի[129]։

Խոսելով Իրանի և Թուրքիայի միջև հասունացող պատերազմի մասին, 1821 թ. հոկտեմբերին Նեսսելրոդեն գրում էր Երմոլովին. «...Պարսկաստանը ունի ընդարձակ մտադրություններ և ծրագրեր...։ Շահը, որ այդ գործում օգտվում է իր երկու որդիների միահամուռ աջակցությունից, մտադիր է իր պետության ողջ ռազմական ուժերը ուղղել դեպի Թուրքական կայսրության արևելյան նահանգները»[130]։

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա հաշվի առնելով կայսրությունում ստեղծված ծայր աստիճան բարդ իրադրությունը, կառավարությունը աշխատում էր գործը չհասցնել մինչև պատերազմի։ Այդ առթիվ Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանը նկատում է. «... Կարծում եմ, որ Բ. Դուռը, զգալով իր վիճակը, սիրով կգերադասի խաղաղ միջոցները և հակված չէ այժմ դիմելու Պարսկաստանի դեմ թշնամական գործողություններին»[131]։

---

127 *R. G. Watson*, A history of Persia, London, 1866, p. 139.

128 *Տե՛ս A. Адамов*, նշվ. աշխ., էջ 416—418։

129 *Տե՛ս V. Fontanier*, Voyage dans l'Inde et dans le Golfe Persique, Paris, 1844, т. I, p. 364.

130 АКАК, т. VI, ч. 2, стр. 250.

131 *Նույն տեղում, էջ 419։*

Սակայն պատերազմը կանխելու ուղղությամբ Բ. Դռան ձեռնարկած միջոցները արդեն ուշացած էին։ 1821 թ. հոկտեմբերին սկսվեց իրանա-թուրքական պատերազմ։ Ռազմական գործողությունները ծավալվեցին Միջագետքում, Քրդստանում և Արևմտյան Հայաստանի տարածքում։

Չալդրանի մոտ թուրքական զորքերին առաջին պարտությունը հասցրեց Երևանի սարդար Հասան խանը[132]։ Այնուհետև երկամսյա պաշարումից հետո Աբբաս միրզան գրավեց Բայազետը և գերի վերցրեց Բայազետի Բալյուլ փաշային[133]։ 1822 թ. գարնանը թուրքական զորքերը ջախջախվեցին պաշարված Թոփրակ Կալայի մոտ, որից հետո իրանական բանակը գրավեց նաև Ակ Սերայը[134]։

Թուրքիան որոշեց կենտրոնացնել խոշոր ուժեր և անցնել հակահարձակման։ Օսմանյան մի խոշոր բանակ շրջանցելով Բայազետը և Թոփրակ Կալան, ներխուժեց Իրանական Ատրպատական, նպատակ ունենալով գրավել Թավրիզը։ Սակայն հանդիպելով Աբբաս միրզայի բանակին, ջախջախիչ պարտություն կրեց[135]։ Այս հաղթանակից հետո Արևմտյան Հայաստանի տարածքում Աբբաս միրզան գրավեց ևս մի շարք նոր տերիտորիաներ. Դիադինը, Մալազկերտը, Բաղեշը, Մուշը, Վանը, Ախլաթը, Ադիլջևազը, Խանդուրը և այլն[136]։

Աբբաս միրզայի այս խոշոր հաջողությունները գլխավորապես պետք է բացատրել նրանով, որ ռազմական այս կամպանիայի ժամանակ նրան աջակցում էին ոչ միայն իրանահպատակ քրդերը, այլև Թուրքիայի քրդական ցեղերը[137]։

Թուրքական կառավարությունը որոշեց հակագրոհ կազմակերպել այս անգամ Միջագետքի ուղղությամբ։ Բաղդադի Դավուդ փաշային հրամայվեց Շահրեզուրի կողմից ներխուժել Քերմանշահի նահանգը։ Սակայն այս փորձը ևս մատնվեց անհաջողության, որովհետև թուրքական զորքերը վճռական պարտություն կրեցին Քերմանշահի վալի՝ Մոհամմադ Ալի միրզայի կողմից, որը ետ շպրտելով հակառակորդին, հետապնդեց նրան մինչև Բազդադից ոչ հեռու գտնվող Բենի Սայիդ կոչ-

---

132 ناصر نجمی նշվ. աշխ., էջ 105։

133 П. И. Аверьянов, նշվ. աշխ., էջ 81,

134 R. G. Watson, նշվ. աշխ., էջ 197—198։

135 یکرنگیان میرحسین، گوشه‌ای از تاریخ نظامی ایران، تهران ۱۳۳۷، ص ۴۸

136 R. G. Watson, նշվ. աշխ., էջ 137։

137 А. Адамов, նշվ. աշխ., էջ 419։

ված վայրը, այստեղ նախապատրաստվելով գրոհով վերցնելու Բաղդադը[138]։ Միջագետքում զարգացնելով իրենց հաջողությունները, իրանական զորքերը գրավեցին նաև Քիրքուքը և Մոսուլը։

Բաղդադը գրավելու նախապատրաստությունների եռուն պահին իրանական բանակի հրամանատար Մոհամմադ Ալի միրզան անակնկալ հիվանդանում է խոլերայով և մահանում։ Բանակը հրաման է ստանում ժամանակավորապես նահանջել Քերմանշահ։ Օգտվելով դրանից, Բաղդադի Դավուդ փաշան անցնում է հակահարձակման, սակայն իրանական սահմանի մոտ նա կրկին պարտություն է կրում այս անգամ մահացած Մոհամմադ Ալի միրզայի որդու՝ Մոհամմադ Հոսեյնի կողմից[139]։

Ինչպիսի՞ դիրք գրավեցին Մերձավոր և Միջին արևելքի հարցերով շահագրգռված եվրոպական երկու խոշոր պետությունները՝ Ռուսաստանը և Անգլիան, իրանա-թուրքական այս պատերազմի նկատմամբ։

Պատերազմը սկսվելու նախօրյակին և պատերազմի առաջին օրերից Պետերբուրգը ուշի-ուշով հետևում էր նրա ընթացքին, որովհետև թուրքական և իրանական խոշոր զորամիավորումների կենտրոնացումները Հայաստանի և Ատրպատականի տերիտորիայում Ռուսաստանի կողմից դիտվում էր որպես իր շահերի համար անցանկալի ու վտանգավոր երևույթ։ Սակայն միևնույն ժամանակ պատերազմը ժամանակավորապես շեղում էր Իրանի և Թուրքիայի ուշադրությունը ռուսական սահմաններից։ Այդ առթիվ Նեսսելրոդեն 1821 թ. նոյեմբերի 9-ին գրում է Երմոլովին. «...Նրանց փոխադարձ թշնամանքը անօգուտ չէ։ Եթե մի պահ ենթադրենք, որ նրանք համաձայնվեն միավորվել մեր դեմ... դրա հետևանքով ինչպիսի օգուտներից մենք կզրկվենք»[140]։

Պետերբուրգի կաբինետին առաջին հերթին մտահոգում էր այն, որ բրիտանական կառավարությունը չմեղադրի իրեն այդ պատերազմը հրահրելու մեջ, որը կարող էր, ցարական կառավարող շրջանների կարծիքով, տեղիք տալ անցանկալի բարդությունների Անգլիայի հետ։ Այս ոգով 1821 թ. դեկտեմբերի 17-ին Նեսսելրոդեն հրահանգ ուղարկեց Երմոլովին, որտեղ ցուցում էր տրվում «խուսափել այն ամենից, ինչը կարող է տեղիք տալ Մեծ Բրիտանիայի գործակալներին մտածելու, որ մենք ցանկանում ենք զինել «պարսիկներին ընդդեմ թուրքերի»[141]։ Իսկ

---

[138] *G. Keppel*, Personal narrative of travels in Babylonia, Assyria, Media and Scythia, London, 1827, vol. I, pp. 265—268.

[139] *R. G. Watson*, *նշվ. աշխ.*, *էջ 201—202*։

[140] АКАК, т. VI, ч. 2, стр. 253.

[141] *Տե՛ս А. З. Иоаннисиани*, *նշվ. հոդվածը*, *էջ 171*։

Ա. Ս. Դրիբոյեդովին և Ս. Ի. Մազարովիչին կարգադրեց այդ մասին անհապաղ տեղեկացնել Աբբաս միրզային[142]։

Առաջնորդվելով վերոհիշյալ սկզբունքներով, Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրը մերժեց արքայազուն Մոհամմադ Ալի միրզայի կողմից Պետերբուրգ ուղարկված Կիֆալի միսիայի առաջարկները, որոնց էությունը կայանում էր նրանում, որ օգտվելով Թուրքիայի հետ պատերազմից, արքայազունը ցանկանում էր ամրապնդել իր հավակնությունները իրանական գահի նկատմամբ և այդ նպատակով խնդրում էր Ալեքսանդր I-ի աջակցությունը։ Պետերբուրգն իր մերժումը պատճառաբանեց նրանով, որ ինքը հավատարիմ է մնում Գյուլիստանի պայմանագրին, որը նախատեսում է աջակցություն ցույց տալ միայն Իրանի օրինական գահաժառանգին՝ Աբբաս միրզային[143]։

Վերոհիշյալ նկատառումները ստիպում էին Նեսսելրոդեին իր ենթականերից պահանջել հանգստություն պահպանել և չմիջամտել կոնֆլիկտին։

Անշուշտ, Ռուսաստանի կողմից Իրանին աջակցելու դեպքում ռուսները հնարավորություն կունենային շահի կողմից ձեռք բերելու որոշակի զիջումներ Անդրկովկասի հարցերում։ Սակայն հակառակ այս տրամաբանությանը, ռուսական արտաքին գործերի մինիստրը տալիս էր միանգամայն այլ հրահանգներ, միաժամանակ անհրաժեշտ գտնելով «Բ. Դռանը հնարավորություն տալ նրա այս դժվարին վիճակում հաշտվելու Պարսկաստանի հետ»[144]։ Ո՞րն էր առաջին հայացքից այդ տարօրինակ և անհասկանալի քաղաքականության պատճառը։ Բանն այն է, որ հանդիսանալով «Սրբազան դաշինքի» գաղափարների համոզված կողմնակից, Նեսսելրոդեն փաստորեն հնազանդությամբ կատարում էր անգլիական և ավստրո-գերմանական դիվանագիտության կամքը, հանդես գալով որպես եվրոպական պետությունների հետ համաձայնեցված գործողությունների կողմնակից, հակառակ նույնիսկ այն բանին, որ այդ քաղաքականությունը տվյալ պահին հակասում էր Ռուսաստանի պետական շահերին։

Նեսսելրոդեն չանում էր բացառել ամեն մի կասկած այն մասին, որ Իրանի հակաթուրքական քաղաքականությունը և Մերձավոր ու Մի-

---

142 Записки *Н. Н. Муравьева*, «Русский архив», 1888, кн. 2, стр. 105; *А. С. Грибоедов*, Сочинения, т. III, стр. 241.

143 Տե՛ս *А. П. Щербатов*, նշվ. աշխ., հ. 2, հավելված, էջ 30—33։ ЦГАДА, ф. Ермоловых 1046, оп. I, д. 332; ЦГИА, ф. 1018, оп. 2, д. 89, л. 31 об.

144 Տե՛ս *А. З. Иоаннисиани*, նշվ. հոդվածը, էջ 170։

ջին արևելքում ծավալվող իրադարձությունները կապ ունեն Մոլդավիայի և Վալախիայի դեպքերի հետ։ Նա աշխատում էր առիթ չտալ ենթադրելու, որ այդ գործողությունները ղեկավարելու ներքին զսպանակները գտնվում են Ռուսաստանի ձեռքերում և նա է, որ կազմակերպել է միաժամանակյա հարված Թուրքիայի դեմ ինչպես Եվրոպայում (Մոլդավիա, Վալախիա, Հունաստան), այնպես էլ Մերձավոր արևելքում։ «...Կարո՞ղ ենք մենք արդյոք հրահրել նրանց (պարսիկներին—Վ. Ա.) Թուրքիայի դեմ թշնամական գործողությունների». այս հարցադրմանը Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրը պատասխանում է հետևալ կերպ. «Մենք դրանով կսասանենք մեր խաղաղ հարաբերությունների հիմքերը Դռան հետ, որոնք հազիվ ենք մենք կարողացել վերականգնել։ Ասիայում նպաստելով պատերազմին, մենք իրավունք ունե՞նք արդյոք մեր դաշնակիցներին ասելու, որ Եվրոպայում ցանկանում ենք պահպանվի հանգստություն»[145]։

Այսպիսով, միանգամայն անհիմն է թուրքական պատմագրության այն տեսակետը, որ Իրանը պատերազմի մեջ մտավ Թուրքիայի դեմ «միայն այն պատճառով, որ հանդիսանում էր Ռուսաստանի դաշնակիցը»[146]։ Իսկ իրանական պատմագրությունը, գտնվելով անգլիական տեսակետի ազդեցության տակ, առաջ է քաշում այն դրույթը, որ օգտագործելով թուրք-իրանական հակամարտությունը, Ռուսաստանն այդ երկու պետությունների միջև հրահրեց պատերազմ[147]։ Բացառություն է կազմում թերևս Մահմուդ Ֆարհադ Մոթամեդի այն տեսակետը, որ թուրք-իրանական հարաբերությունները միտումնավոր կերպով սրվում էին անգլիացիների կողմից, որոնք հետապնդելով Աֆղանստանում հիմնավորվելու և Իրանի արևելյան շրջանները (մասնավորապես Իրանական Բալուջեստանը) իրենց ազդեցությանը ենթարկելու նպատակները, աշխատում էին թուրք-իրանական հարաբերությունների սրումով շեղել իրանական կառավարության ուշադրությունը երկրի արևելյան շրջաններից և այն սևեռել բացառապես արևմուտքի (Թուրքիայի) և հյուսիսի (Ռուսաստանի) կողմը[148]։

---

145 Նույն տեղում, էջ 173։

146 احمد راسم، عثمانلی تاریخی، جلد ۴، مطبعه‌سی، ۱۳۲۸—۱۳۳۰، ص ۱۷۷۸—۱۷۷۹

147 Տե՛ս օրինակ՝ جویل قوزانلو، تاریخ نظامی ایران، تهران، ۱۳۱۵، ص ۸۲۰

148 محمود فرهاد معتمد، تاریخ روابط سیاسی ایران و عثمانی یا سپهسالار اعظم، جلد دوم، تهران، ۱۹۵۷، ص ۳۰

Ընդհանուր առմամբ ցարական կառավարության դիրքորոշումը 1821—1823 թթ. իրանա-թուրքական պատերազմի նկատմամբ կարելի է գնահատել որպես չեզոքության դիրքորոշում, սակայն Իրանի նկատմամբ բարյացակամ չեզոքության ակնհայտ նշաններով։ Պետերբուրգի կաբինետի այս գիծը ենթադրում էր շոշափելի օգուտներ բերել Ռուսաստանին թեկուզև նրանով, որ Իրանի կառավարող շրջանների ռևանշիստական տրամադրությունները և տարածքային ձեռքբերումներ կատարելու ձգտումները թեկուզև ժամանակավորապես շեղվում էին Ռուսաստանից և ուղղվում Օսմանյան կայսրության կողմը։ Այնուհետև համոզված լինելով, որ պատերազմի ընթացքում անգլիացիները աջակցելու են Թուրքիային, Ռուսաստանը հույս ուներ, որ դա անխուսափելիորեն սեպ կխրի անգլո-իրանական հարաբերությունների մեջ, որի հետևանքով էլ ավելի կխորանա Պարսից ծոցի շրջանում ծայր առած անգլո-իրանական կոնֆլիկտը և վերջին հաշվով Իրանում անգլիական ազդեցությանը կհասցվի շոշափելի հարված։ Ցարական դիվանագիտության կարծիքով, այդ բոլորին անխուսափելիորեն կհետևեր դեպի Իրան ռուսական «խաղաղ ներթափանցման» քաղաքականությունը[149]։

Վերջապես, չպետք է մոռանալ, որ և՛ Իրանը, և՛ Թուրքիան հանդիսանում էին Ռուսաստանի պոտենցիալ ախոյանները Մերձավոր և Միջին արևելքում և նրանց փոխադարձ թուլացումը հող կնախապատրաստեր այդ շրջաններում ռուսական քաղաքականության հետագա ակտիվացման համար։

Ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիայի դիրքորոշմանը իրանա-թուրքական պատերազմի նկատմամբ, ապա այն կարելի է բաժանել երկու էտապի։ Սկզբնական շրջանում Անգլիան ոչ միայն փորձեր չէր անում կանխելու այդ բախումը, այլև հույսեր ուներ օգտագործելու այն Պարսից ծոցում իր ազդեցության հետագա տարածման համար[150]։ Սակայն 1822 թ. Բաղդադի մոտ իրանական բանակի հաջողությունները փոխեցին անգլիական դիրքորոշումը։ Վախենալով ռուս-իրանական մերձեցումից[151], Անգլիան սկսեց ջանքեր գործադրել իրանա-թուրքական պատերազմը դադարեցնելու և կողմերի միջև կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով լուծելու ուղղությամբ։ 1822 թ. Պետերբուրգ ուղարկելով ռուսների կողմից գաղտնի ճանապարհով ձեռք բերված իրանական առաջին մինիստրի նամակը, ուղղված Կոստանդնուպոլսում անգլիական դեսպա-

---

149 Л. С. Семенов, նշվ. աշխ., էջ 73։

150 АКАК, т. VI, ч. 2, стр. 255.

151 Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, стр. 12—13.

նին, Երմոլովը Նեսսելրոդեի ուշադրությունը սևեռում էր այն բանի վրա, թե «...որքան հեռու է գնում անգլիական կառավարության հոգատարությունը Պարսկաստանի և Դոան միջև ծագած թշնամական գործողությունների դադարեցման ուղղությամբ»[152]։

Իրանա-թուրքական պատերազմը շոշափելի հարված էր հասցնում նաև Անգլիայի առևտրատնտեսական շահերին։ Բուշեհրում և Բասրայում սահմանված բարձր մաքսատուրքերը հանգեցրին անգլիական առևտրի շեշտակի կրճատմանը Պարսից ծոցի ավազանի երկրներում, իսկ պատերազմի հետևանքով Տրապիզոն—Թավրիզ և Բաղդադ—Քերմանշահ առևտրական ճանապարհի փակումը դադարեցրեց անգլիական ապրանքների մուտքը դեպի Իրան Փոքր Ասիայի վրայով։ Իրանում անգլիական առևտրի կրճատմանը անխուսափելիորեն հետևելու էր Մեծ Բրիտանիայի քաղաքական ազդեցության անկումը։

Վերոհիշյալ նկատառումները Լոնդոնի կաբինետին ստիպեցին վճռականորեն վերանայել իր քաղաքականությունը իրանա-թուրքական հարաբերությունների նկատմամբ։ Քաղաքական այս նոր գիծը կենսագործելու էր արտաքին գործերի պետական քարտուղար Ջորջ Կաննինգը, որը փոխարինել էր ինքնասպանություն գործած Կեսլրիին։ Նրա մշակած քաղաքականությունը վերին աստիճանի հստակ էր՝ անհապաղ դադարեցնել իրանա-թուրքական պատերազմը և ստեղծել այդ երկու երկրների բլոկ Ռուսաստանի դեմ պատերազմ մղելու համար[153]։

Լոնդոնի հանձնարարությամբ Իրանում անգլիական գործերի հավատարմատար Հ. Ուիլլոքը և բրիտանական միսիայի առաջին քարտուղար Ջ. Մաքնեյը (որը փոխարինել էր Ջ. Կեմպբելլին) շահական կառավարությունից պահանջեցին անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները Թուրքիայի դեմ[154]։ Այդ փաստը ստիպված էր խոստովանել Միջին արևելքում անգլիական հետախույզներից մեկը՝ Ֆրեյզերը[155]։ Սակայն դիվանագիտական այս առաջադրությունը հաջողություն չունեցավ։ Որոշվեց շահի մոտ ուղարկել մայոր Հարրիոտին[156]։ Իր հերթին Օստ-Հնդկական ընկերությունը համարյա միաժամանակ Իրան ուղարկեց մի հատուկ միսիա՝ Ջակսի և Ֆրեյզերի մասնակցությամբ, որոնց հանձնարարված էր անհապաղ հարթել Պարսից ծոցի Քեշմ կղզու

---

152 АКАК, т. VI, ч. 2, стр. 267.

153 *Б. П. Балаян, նշվ. աշխ., էջ 79—80։*

154 АКАК, т. VI, ч. 2, стр. 434.

155 *Տե՛ս J. Fraser*, Travels and adventures in the Persia and provinces on the Southern banks of the Caspian Sea, London, 1826, p. 303.

156 АКАК, т. VI, ч. 2, стр. 253.

համար ծագած անգլո-իրանական վեճը (որը 1821 թ. գրավվել էր անգլիացիների կողմից) և դրանով իսկ հող նախապատրաստել Հարրիոտին տված հանձնարարությունը գլուխ բերելու համար։

Սակայն քանի որ այս փորձը ևս ավարտվեց անհաջողությամբ, Անգլիան որոշեց դիմել ավելի կտրուկ միջոցների։ Բրիտանական կառավարության որոշ գործիչներ նույնիսկ պահանջում էին Իրանի դեմ օգտագործել Պարսից ծոցում գտնվող անգլիական ռազմական նավատորմը, սակայն մտավախություն ունենալով, որ դա կարող է տեղիք տալ ռուս-իրանական դաշինքի կնքման, հրաժարվեցին այդ գաղափարից[157]։

Անգլիական գործերի հավատարմատար Հենրի Ուիլլոքը արգելեց անգլիական սպաներ Լինդզեյին, Մակինդոշին, Արմստրոնգին և Վիլյամսին մասնակցել իրանա-թուրքական պատերազմին։ Որպես պատասխան Աբբաս միրզան պահանջեց, որ հիշյալ սպաները հեռանան Իրանից[158]։ Այս դիպվածը է՛լ ավելի լարեց անգլո-իրանական հարաբերությունները, որոնցից անմիջապես օգտվեցին ֆրանսիական սպաները։ Մարշալ Բրյունի նախկին համհարզ Ալլարը դարձավ իրանական հեծելազորի հրամանատար, իսկ կապիտան Թ. Էթյեն նշանակվեց Նախիջևանի և Մարանդի գումարտակների հրահանգիչ։ Նրանց հետ միասին ֆրանսիական մի շարք սպաներ՝ Վենտուրան, Կուրը, Ջիբելլին և այլն, սկսեցին մասնակցել իրանա-թուրքական պատերազմին[159]։

Վկայակոչելով 1814 թ. անգլո-իրանական դաշնակցային պայմանագիրը, 1822 թ. Ֆաթհ Ալի շահը դիմեց Անգլիային, խնդրելով ֆինանսական օգնություն։ Սակայն մերժում ստացավ։ Միանգամայն ակնհայտ է, որ բրիտանական կառավարությունը չէր ցանկանում ֆինանսավորել պատերազմը Թուրքիայի դեմ։ Մերժում ստանալուց հետո շահը, անգլիական էմիսարի արտահայտությամբ, «հեռևելով նրանց վատ խորհուրդներին, ովքեր մղում էին նրան Անգլիայի նկատմամբ թշնամական և վիրավորական գործողություններ» (իմա՝ Ռուսաստանը—Վ. Բ.) անգլիական գործերի հավատարմատարին հղեց բողոքի պաշտոնական նոտա[160]։

---

157 Л. С. Семенов, նշվ. աշխ., էջ 73։

158 Նույն տեղում, էջ 74։ Մանրամասն տե՛ս Ch. Bélanger, Voyage aux Indes-Orientales et la Perse pendant les années 1825 a 1829, vol. II, Paris, 1838.

159 Б. П. Балаян, նշվ. աշխ., էջ 81, Л. С. Семенов, նշվ. աշխ., էջ 53—54։ J. Fraser, Travels and adventures..., pp. 303—304, 309.

160 АКАК, т. VI, ч. 2, стр. 264.

1822 թ. ապրիլին Թեհրանում անգլիական միսիայի ղեկավար Հ. Ուիլլոքը, առաջին քարտուղար Ջ. Մաքնեյլը հեռացան Իրանից և Անգլիայի ու Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունները փաստորեն խզվեցին։ Այս պարագայում Աբբաս միրզան դիմեց ցարական կառավարությանը, խնդրելով Իրանին տրամադրել կարճաժամկետ փոխառություն մոտ 100.000 ռուբլու չափով, փոխանցելով այն Լոնդոն Իրանի կողմից գնված անգլիական զենքի արժեքը վճարելու համար։ 1822 թ. բանակցությունները ռուս-իրանական փոխառության վերաբերյալ և դրան նախորդած Ն. Ն. Մուրավյովի միսիայի ակտիվ գործունեությունը Իրանում (1821 թ.) առաջ բերեցին բրիտանական կառավարության բողոքը, որը Պետերբուրգի կաբինետին հաղորդվեց Անգլիայում ռուսական դեսպան Խ. Ա. Լիվենի միջոցով[161]։

Սակայն չնայած Անգլիայի դիմադրությանը, 1821—1823 թթ. իրանա-թուրքական պատերազմի շրջանում ռուս-իրանական քաղաքական և առավելապես տնտեսական հարաբերությունները նշանակալիորեն ակտիվացան։ Նախ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությունը կովկասյան իշխանություններին կարգադրեց խստիվ և անշեղորեն պահպանել Գյուլիստանի պայմանագրի կետերը[162]։ Այնուհետև օգտվելով իրանա-թուրքական պատերազմից և Պարսից ծոցում անգլո-իրանական հարաբերությունների սրումից, որի հետևանքով ըստ էության դադարեց Իրանի առևտուրը ինչպես ծոցի երկրների, այնպես էլ Թուրքիայի հետ[163], Ռուսաստանը ձեռնարկեց մի շարք գործուն միջոցառումներ Իրանի հետ առևտուրը աշխուժացնելու համար։ Նախ Իրանի սահմաններում նա վերացրեց մաքսային արգելքները և Անդրկովկասում սահմանեց արտոնյալ մաքսային ռեժիմ, որի հետևանքով ռուս-իրանական առևտուրը նշանակալիորեն աշխուժացավ։ Այնուհետև, 1822 թ. ֆինանսների մինիստր Դ. Գուրևը կարգադրեց մաքսատներում իրանական ապրանքներից գանձել Գյուլիստանի պայմանագրով նախատեսված 5%-ի չափով մաքսատուրք[164]։

Բացի այդ, 1822 թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտավ Ալեքսանդր I-ի հրամանագիրը Ռուսաստանի տերիտորիայով դեպի Իրան արևմտաեվրոպական ապրանքների տարանցիկ առևտրի արտոնյալ մաքսատուրքեր

---

161 Л. С. Семенов, նշվ. աշխ., էջ 74։

162 Տե՛ս Записки Н. Н. Муравьева, «Русский архив», 1888, кн. I, стр. 77.

163 V. Fontanier, Voyages en Orient, entrepries par ordre du gouvernement francais, de l'année 1821 a l'année 1829, т. II, Paris, 1829, p. 76.

164 АКАК, т. VI, ч. 2, стр. 218.

սահմանելու մասին, որի նպատակն էր իրանական շուկայում ռուս-ֆրանսիական գրոհ կազմակերպելու Անգլիայի դիրքերի դեմ[165]: Վերոհիշյալ միջոցառումների հետևանքով իրանական վաճառականների քարավանները Էրզրումից և Բաղդադից իրենց Հանապարհը շեղեցին դեպի Թիֆլիս:

Շահական կառավարությունն իր հերթին շահագրգռվածություն էր դրսևորում Ռուսաստանի հետ առևտրի ընդլայնման և առհասարակ Ռուսաստանի օգնությամբ իր ներքին տնտեսական դժվարությունները հաղթահարելու մեջ, որոնք առաջ էին եկել ներքին ցնցումների (1818—1819 թթ. ապստամբությունները Քրդստանում և Գիլանում), հարևան պետությունների հետ ռազմական ընդհարումների (1814—1818 թթ. Հերաթի խնդրով Աֆղանստանի հետ, 1818 թվականից Թուրքիայի հետ) և վերջապես 1818—1819 թթ. ծանր երաշտի հետևանքով: Այդ հանգամանքը ստիպում էր շահին մասնակիորեն կատարել Գյուլիստանի պայմանագրի կետերը:

Սակայն շահական կառավարությունը բնավ մտադիր չէր երկարատև ժամանակաշրջանի համար բարելավել իր առևտրատնտեսական հարաբերությունները Ռուսաստանի հետ, որովհետև վերջինս Իրանի համար շարունակում էր մնալ որպես համար առաջին քաղաքական ախոյան: Պատահական չէ, որ ռուս-իրանական տնտեսական կապերի աշխուժացմանը չհետևեցին քաղաքական հարաբերությունների ակտիվացումը և ռուս-իրանական համագործակցությունը բնավ դուրս չէր դալիս երկրորդական նշանակություն ունեցող հարցերի շրջանակներից:

1821—1823 թթ. իրանա-թուրքական պատերազմի շրջանում իրանական դիվանագիտության գծի մանրազնին ուսումնասիրությունն անվերապահորեն բերում է այն համոզման, որ Ռուսաստանի հետ քաղաքական հարաբերություններում շահը աշխատում էր վարել սքողված թշնամանքի քաղաքականություն, մինչդեռ անգլիացիների մոտ աշխատում էր ստեղծել Ռուսաստանի հետ մերձեցման տպավորություն: Այս երկդիմի քաղաքականության նպատակն էր անգլիացիներից ստանալ օգնություն Ռուսաստանի դեմ նոր պատերազմի նախապատրաստվելու համար:

Ի վերջո այս նկատառումները ստիպեցին շահական կառավարությանը նորմալացնելու իր լարված հարաբերություններն Անգլիայի հետ: 1823 թ. կեսերին, երբ իրանա-թուրքական պատերազմը դեռ բուռն թափով շարունակվում էր, Ֆաթհ Ալի շահը Շիրազի կառավարչի անու-

---

[165] Ե. Պ. Բալայան, նշվ. աշխ., էջ 86—87:

նով հրապարակում է մի ֆարման, որով վերստին հաստատվում էին Անգլիայի առևտրական արտոնությունները Իրանում։ Դրան անմիջապես հետևում է անգլո-իրանական մի առևտրական համաձայնագրի ստորագրում, որով վերջ էին տրվում Պարսից ծոցի շրջանում անգլո-իրանական վեճին և լարված հարաբերություններին[166]։

Համարյա միաժամանակ բրիտանական կառավարությանը հաջողվում է Լոնդոնում գտնվող իրանական դեսպանության ղեկավար միրզա Սալեհին համոզել, որպեսզի Իրանը հրաժարվի ռուսական փոխառությունից։ Լոնդոնը նույնիսկ պատրաստակամություն է հայտնում անվարձահատույց ձևով Իրանին հատկացնել զենք և զինամթերք, պայմանով, որ դա կլինի միայն իրանա-թուրքական պատերազմի դադարեցումից և այն բանից հետո, երբ շահը կմերձենա սուլթանին, որպեսզի երկու երկրները համատեղ կերպով ելույթ ունենան Ռուսաստանի դեմ։

Հատկանշական է, որ այս բանակցությունների ժամանակ Լոնդոնում էր գտնվում նաև թուրքական դեսպանը[167]։

Իրանում ռուսական դեսպանորդի հաղորդման համաձայն, 1823 թ. հունիսի 15-ին Լոնդոնում կնքվում է Անդրկովկասին վերաբերող քաղաքական մի համաձայնագիր Իրանի հետ[168], որով նախատեսվում էր անհապաղ դադարեցնել պատերազմը Թուրքիայի դեմ և այնուհետև Օսմանյան կայսրության հետ համատեղ Անդրկովկասում հանդես գալ ընդդեմ Ռուսաստանի։ Համաձայնագիրը ստորագրելուց հետո իրանական դեսպանը Լոնդոնից անմիջապես մեկնում է հայրենիք[169]։

Լոնդոնի համաձայնագիրը կնքվելուց հետո Իրանի և Թուրքիայի միջև սկսվում են նախնական բանակցություններ հաշտության պայմանագիր կնքելու վերաբերյալ։ Թուրքիան մեծագույն շահագրգռվածություն էր դրսևորում արագ ավարտելու այդ բանակցությունները և շուտափույթ կերպով կնքելու հաշտություն, որպեսզի հնարավորություն ստանա իր բոլոր ուժերը նետելու Հունաստան այնտեղ ապստամբությունը ճնշելու համար։

Այսպիսով և՛ անցյալում[170], և՛ ներկայումս[171] գրականության մեջ

---

166 Տե՛ս C U. Aitchison. A collection of treaties, engagements, and sanads relating to India and neighbouring Countries, Calcutta, 1892, vol. XIII, p. 64.

167 Բ. Պ. Բալայան, նշվ. աշխ., էջ 89։

168 АКАК, т. VI, ч. 2, стр. 293.

169 АВПР, ф. Канцелярия, д. 6920, лл. 500—503 об.

170 Տե՛ս Ա. Ադամով, նշվ. աշխ., էջ 419։

171 Н. А. Халфин, Борьба за Курдистан. (Курдский вопрос в международных отношениях XIX в.), М., 1963, стр. 36. فریدون ادمیت նշվ. աշխ., էջ 37։ محمود فرهاد معتمد նշվ. աշխ., հ. 2, էջ 31։

տարածում գտած այն տեսակետը, որ իբր Աբբաս միրզայի բանակում սկսված խոլերայի համաճարակը ստիպեց նրան համաձայնվելու զորքերը ետ քաշել գրաված տերիտորիաներից և սկսել հաշտության բանակցություններ, չի համապատասխանում իրականությանը։

Բացի վերոհիշյալ հանգամանքներից ի՞նչը ստիպեց իրանական կառավարությանը հրաժարվել Թուրքիայի դեմ բարեհաջող պատերազմում իր հաղթանակի պտուղները քաղելու հնարավորությունից։

Նախ, շահական կառավարությունը, որը դեռևս չէր հրաժարվել Անդրկովկասում իր տիրապետությունը վերականգնելու մտադրությունից և արդեն վերցրել էր Ռուսաստանի դեմ նոր պատերազմի նախապատրաստման կուրս, ձգտում էր առաջիկա այդ պատերազմի ընթացքում կամ հանդես գալ Թուրքիայի հետ համատեղ և կամ ծայրահեղ դեպքում թուրքական սահմանի կողմից ապահովել իր թիկունքը։ Դրա անհրաժեշտությունը թելադրվում էր նաև նրանով, որ Թուրքիայի հետ հաշտության կնքումը անգլիացիների կողմից դիտվում էր որպես պարտադիր պայման Իրանին ռազմական և ֆինանսական օգնություն ցույց տալու հարցում։ Իսկ առանց այդ օգնության բացառվում էր նոր պատերազմը Ռուսաստանի դեմ։

Մյուս կողմից, Իրանում շարունակվող ներքին ցնցումները (էսմայիլիթների ապստամբությունը Յազդում, միրզա Խալիլ Օլլայի շարժումը Քերմանշահում, թուրքմենների ապստամբությունը Խորասանում[172] և այլն) ստիպում էին իրանական կառավարող վերնախավին անհապաղ դադարեցնել պատերազմը Թուրքիայի հետ և լրջորեն զբաղվել այդ ապստամբությունների ճնշման և երկրի ներքին կյանքը ինչ-որ չափով կայունացնելու հարցերով, որը կենսական անհրաժեշտություն էր Ռուսաստանի դեմ նախապատրաստվող ծանր պատերազմի նախօրյակին։

Բացի այդ, 1821—1823 թթ. պատերազմի շրջանում Իրանը որոշակիորեն կորցրեց իր ազդեցությունը ոչ միայն Թուրքիայի, այլև Իրանի քրդերի շրջանում, որոնց հետ կառավարող շրջանները մեծ հույսեր էին կապում Ռուսաստանի դեմ առաջիկա պատերազմում օգտագործելու խնդրում։ Աբբաս միրզայի բռնի միջոցառումները քրդական զանգվածներին ընդդրկելու իր բանակի շարքերը ուժգին դժգոհությունների տեղիք տվեցին ցեղերի շրջանում։ Հետևանքը հանդիսացավ այն, որ, օրինակ, Բայազետի պաշարման ժամանակ Հայդերանլու ցեղի քրդերը գրեթե խովին ճանաչեցին Բ. Դռան իշխանությունը, իսկ Ռուսաստանին սահ-

---

[172] بکرنگیان میرحسین նշվ. աշխ., էջ 44—49։

մանակից մի շարք քրդական ցեղեր դիմեցին Կովկասի ռուսական իշխանություններին, խնդրելով թույլ տալ իրենց տեղափոխվելու Անդրկովկասում նոր նվաճված ռուսական տիրապետությունները և ընդունելու ռուսական հպատակություն[173]։

Իրանա-թուրքական նախնական բանակցությունները ավարտվեցին հաջողությամբ և 1823 թ. հուլիսին Բաուֆ փաշան օսմանյան կառավարության կողմից և միրզա Մոհամմադ Ալի Աշթիանին Իրանի կողմից ժամանեցին Էրզրում հաշտության պայմանագիր կնքելու համար[174]։

Էրզրումի դաշնագիրը ստորագրվեց 1823 թ. հուլիսի 28-ին (1238 թ. Զիլղադեյի 19-ին)[175]։ Այն սուլթանի կողմից հաստատվեց նույն թվականի դեկտեմբերին, իսկ շահը ռատիֆիկացիայի ենթարկեց 1824 թ. հունվարին[176]։

Պայմանագրի ներածական բաժնում նշվում էր, որ վերականգնվում են երկու պետությունների սահմանների պատերազմից առաջ եղած վիճակը, այսինքն՝ տերիտորիալ ստատուս-քվոն, կողմերը պարտավորվում են վերադարձնել ռազմագերիներին և այլն։

Իրանը պարտավորվում էր պայմանագիրը կնքելուց հետո 60 օրվա ընթացքում Թուրքիային վերադարձնել այն բոլոր հողերը, քաղաքները և գյուղերը, որոնք գրավել էր պատերազմի ընթացքում։

Պայմանագրի առաջին հոդվածում նշվում էր, որ կողմերը իրենց վրա պարտավորություն են վերցնում չմիջամտել միմյանց ներքին գործերին ընդհանրապես և Բաղդադի փաշալիքում և Քրդստանում մասնավորապես։ Նկատի ունենալով սահմանամերձ շրջաններում քրդական ցեղերի անընդհատ տեղաշարժերը մի երկրից մյուսը և դրա հետևանքով երկու պետությունների միջև առաջացող անընդհատ վեճերը, նախատեսվում էր պայմանավորվածություն ձեռք բերել որոշելու համար նրանց կողմից արոտավայրերից օգտվելու հարկերի չափը։

---

173 П. И. Аверьянов, նշվ. աշխ., էջ 31։

174 فريدون آدميت նշվ. աշխ., էջ 37։

175 Այս պայմանագրի լրիվ տեքստը տե՛ս «Материалы для географин Азиатской Турции и Персии. Путевой журнал Е. И. Чирикова, русского комиссара-посредника по турецко-персидскому разграничению, 1849—1852», СПб., 1875, стр. 638—648. Պայմանագրի պարսկերեն բնագրի տեքստը տե՛ս فرهاد معتمد محمود, նշվ. աշխ., էջ 31—36։

176 O. Schlechta-Wssehrd, նշվ. աշխ., էջ 112։

Երկրորդ հոդվածում Թուրքական կառավարությունը իր վրա պարտավորություն էր վերցնում Օսմանյան կայսրության տերիտորիայում գտնվող մահմեդական սրբավայրեր Մաքքե և Մադինե, ինչպես նաև շիիթական սրբավայրեր Քարբալա և Նաջաֆ ուխտագնացության մեկնող պարսկահպատակների նկատմամբ վերաբերվել բարյացակամորեն և նրանցից այլևս չգանձել այնպիսի մաքսատուրքեր, ինչպիսիք են «դուրման», «բաշը» և այլն։ Նախատեսվում էր նաև Օսմանյան կայսրությունում առևտուր անող իրանական վաճառականներից գանձել 4%-ի մաքսատուրք, այսինքն այնքան, որքան գանձվում էր Թուրքահպատակ վաճառականներից։ Պայմանագրի այս կետը նպատակ ուներ խրախուսել իրանական ապրանքների ներմուծումը Օսմանյան կայսրություն և վերականգնել պատերազմի հետևանքով ընդհատված իրանա-թուրքական առևտուրը։ Ընդ որում քանի որ Գյուլիստանի պայմանագրով նախատեսված էր Ռուսաստանում իրանական վաճառականներից գանձել 5%-ի մաքսատուրք, Թուրքիան միտումնավոր կերպով այն իջեցնում էր, դարձնելով 4%, որպեսզի իրանական առևտուրը Ռուսաստանից շեղվի դեպի Թուրքիա։ Այս քաղաքականության արդյունքները չստիպեցին երկար սպասեցնել տալ իրենց։ Տրապիզոն—Էրզրում—Թավրիզ առևտրական ճանապարհով Թուրքիայի և Անգլիայի հետ Իրանի առևտուրը կրկին աշխուժացավ և ընդհակառակը՝ Ռուսաստանի հետ կտրուկ նվազեց[177]։

Քիչ ավելի ուշ անգլիացիները Տրապիզոնում և Էրզրումում բաց արին անգլիական առևտրական ընկերությունների մշտական ներկայացուցչություններ, որոնք աննախընթաց չափով աշխուժացրին առևտուրը ոչ միայն Իրանի, այլև նրա վրայով նաև Ասիայի ներքին շրջանների հետ[178]։

Պայմանագրի երրորդ հոդվածը ամբողջապես նվիրված էր քրդական հարցին։ Նրա էությունը կայանում էր նրանում, որ արգելքներ ստեղծվեին քրդերի մեկ երկրից մյուսը կամայական տեղափոխությունների առջև և որոշեին այս կամ այն ցեղի հպատակության հարցը։

Չորրորդ հոդվածը, որը հանդիսանում էր երրորդի օրգանական շարունակությունը, նախատեսում էր «սանձահարել» քրդերին և նրանց պահել իրենց հսկողության ներքո։ Մասնավորապես նշվում էր, որ մեկ

---

177 *Տե՛ս Ю. Гагемейстер,* О европейской торговле в Турции и Персии, СПб., 1838, стр. 94.

178 *Տե՛ս Burgess,* A brief notice respecting the trade of the North provinces of Persia. „The Portfolio", London, 1836, vol. X, p p. 357—359; „Royal Central Asian Journal", London, 1944, vol. LXXX, p. p. III—IV.

երկրից մյուսը փախչելու դեպքում տեղի իշխանությունները քրդերին չպետք է տրամադրեն հպատակություն կամ վերցնեն հովանավորության տակ։

Հինգերորդ հոդվածով կարգավորվում էր պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության տերիտորիայում եղած պարսիկ վաճառականներից բռնագրավված ապրանքների հարցը։ Վեցերորդ հոդվածը վերաբերում էր ժառանգության հարցերին և վերջապես յոթերորդ հոդվածում նշվում էր, որ «երկու պետությունների միջև բարեկամությունն ամրապնդելու նպատակով» յուրաքանչյուր երեք տարին մեկ կողմերը պետք է միմյանց մոտ ուղարկեն իրենց ներկայացուցիչներին՝ վիճելի հարցերի վերաբերյալ բանակցելու նպատակով։

Երկու երկրների միջև սահմանները ճշտելու հարցում Էրզրումի պայմանագիրը համարյա կրկնում էր 1639 թ. Զոհարի պայմանագրի համապատասխան բաժինը։ Բացառություն էր կազմում Զոհաբի շրջանի պատկանելության վերաբերյալ հարցը, որը 1639 թ. պայմանագրով անցնում էր Թուրքիային, մինչդեռ 1823 թ. Էրզրումի դաշնագիրը կնքելու պահին այն գրավվել էր Իրանի կողմից և վերջինս (ինչպես նաև Ախուրիքի շրջանը) ոչ մի գնով չհամաձայնվեց հանձնել Օսմանյան կայսրությանը[179]։

Էրզրումի պայմանագիրը ստորագրելուց անմիջապես հետո Իրանը Օսմանյան կայսրությանը վերադարձրեց պատերազմի ընթացքում գրավված բոլոր քաղաքները, այդ թվում նաև Արճեշը, Մալազկերտը, Հախլաթը, Բաղեշը, Վանը, Բայազետը, Սուլեյմանիեն, Քիրքուքը, Մոսուլը և այլն[180]։

Ռուսները կասկածներ ունեին, որ Էրզրումի պայմանագիրը պարունակում է նաև գաղտնի մի հոդված, որով նախատեսվում է Թուրքիայի օգնությունը Իրանին՝ ընդդեմ Ռուսաստանի։ Այդ մասին Թավրիզից Երմոլովին ուղղված 1823 թ. օգոստոսի 5-ի նամակում գրում է Ամբուրգերը[181]։ Հիշյալ տեղեկությունը հաստատվում է նրանով, որ Էրզրումի պայմանագիրը ստորագրվելուց անմիջապես հետո հատուկ հանձնարարությամբ Կոստանդնուպոլիս է ուղարկվում ջահի դեսպան միրզա Ֆայզ Օլլան, որը խնդրում է սուլթանի աջակցությունը «Ռուսաստանի դեմ ենթադրվող պատերազմում»։ Ի պատասխան դրա, սուլթանը «իբր թե

---

[179] *В. Ф. Минорский*, Турецко-персидское разграничение, Пг., 1916, стр. 2—3.

[180] عبدالله رازی، تاریخ مفصل ایران، تهران، ۱۳۳۵ ص ۴۷۰

[181] «Кавказский сборник», т. XXIV, стр. 1.

համաձայնվել է շահի առաջարկի հետ և խոստացել է նրան օսմանյան Դռան կողմից ամեն տեսակի օգնություն»[182]։

Ռուս-իրանական պատերազմի նախօրյակին (1825 թ. հոկտեմբերին) դեսպանի լիազորություններով օժտված Դավիթ բեկ Ծատուրյան մելիք Շահնազարյանցը շահի կողմից ուղարկվում է Կոստանդնուպոլիս, որպեսզի «հորդորի Բ. Դռանը միավորվելու Պարսկաստանի հետ ընդդեմ Ռուսաստանի»[183], կամ այլ կերպ ասած հիշեցնել տա սուլթանին իր վրա վերցրած դաշնակցային պարտավորությունները։ Իրանական պատմաբան Ջամիլ Ղուղանլուն ևս հաստատում է Էրզրումի պայմանագրում գաղտնի հոդվածի առկայությունը, ցավելով, որ այդ հոդվածը երկրորդ ռուս-իրանական պատերազմի շրջանում չգործադրվեց։ Նա այդ պայմանագիրը գնահատում է որպես «փոխօգնության համաձայնագիր»[184]։

Այսպիսով, ինչպես իրավացիորեն նշում է սովետական պատմաբան Լ. Ս. Սեմյոնովը, «Թեհրանի, Ստամբուլի և Լոնդոնի դաշինքը համարյա վերականգնվեց»[185]։ Գլխավորապես հանուն այդ դաշինքի Իրանը հրաժարվեց տերիտորիալ այն ձեռքբերումներից, որ նա ունեցել էր Արևմտյան Հայաստանում և Միջագետքում։ Հետևաբար, նախահեղափոխական շրջանի ռուս պատմագրության (Վ. Պոտտո, Ա. Շերբատով, Ն. Դուբրովին[186] և այլն) այն տեսակետը, որ Իրանը հրաժարվեց իր նվաճած տերիտորիաներից, վախենալով, որ Թուրքիան Հունաստանից զորքեր կտեղափոխի ասիական ճակատ Իրանի դեմ նետելու համար, անընդունելի է և հեռու է իրականությունից։

1821—1823 թթ. իրանա-թուրքական պատերազմի դադարեցումը ունեցավ մի շարք լուրջ հետևանքներ Մերձավոր և Միջին արևելքի քաղաքական իրադրության վրա։ Նախ Անգլիան վերստին վերականգնեց իր սասանված դիրքերը Իրանում և մասնավորապես Պարսից ծոցի շրջանում։ 1823 թվականից նկատվում է Իրանում անգլիական գործակալության գործունեության աննախընթաց ակտիվացում։ Բրիտանական դեսպանորդ Ջոն Մակդոնալդը դառնում է Ֆաթհ Ալի շահի առաջին խորհրդականը։ Իրանական բազմաթիվ բարձր աստիճանավորներ փաստորեն վերածվում են անգլիական միսիայի վարձու գործակալության։ Այսպես,

---

182 *Мадатов-Вельяминову*, 6 апреля 1826, АКАК, т. VI, ч. 2, стр. 343.

183 Տե՛ս „The Asiatic Journal", vol. 22, 1826, p. 734.

184 جميل قوزانلو، تاريخ نظامى ايران، جلد دوم، تهران، ۱۳۱۵، ص ۸۴۳

185 *Л. С. Семенов*, նշվ. աշխ., էջ 84։

186 *В. Потто*, նշվ. աշխ., հ. 3։ *А. П. Щербатов*, նշվ. աշխ., *Н. Ф. Дубровин*, նշվ. աշխ.։

արտաքին գործերի ղեկավար Արոլ Հասան խանը գաղտնի կերպով անգլիացիներից սկսում է ստանալ տարեկան 3000 թուման[187]։ Նույն կերպ վճարվում են նաև շահի առաջին մինիստր Ալլայար խանը և շիիթական հոգևորականության ազդեցիկ ղեկավար մոշթահեդ Սեյեդ Մոհամմադը։

Ռուսների ազդեցությունը, ընդհակառակը, կրկին գնում է դեպի անկում։ Իրանը նոր եռանդով սկսում է նախապատրաստվել պատերազմի Ռուսաստանի դեմ՝ դարձյալ ապավինելով Անգլիայի օգնությանը։

Միաժամանակ ռուսական կառավարության դիվանագիտական անհաջողությունները՝ հույն-թուրքական կոնֆլիկտին պետությունների կոլեկտիվ միջամտություն կազմակերպելու գործում, Թուրքիայում ընկալվեցին որպես միջազգային ասպարեզում Ռուսաստանի քաղաքական մեկուսացման հաստատման հայտանիշ։ Դրա հետևանքով Օսմանյան կայսրության կառավարող շրջանների մոտ ռևանշիստական տրամադրությունները կրկին ուժեղացան, որոնք իրենց արտահայտությունը գտան Ռուսաստանի հետ կնքված նախկին պայմանագրերը վերանայելու ձգտման մեջ ոչ միայն նեղուցների ռեժիմի և դանուբյան իշխանությունների ստատուսի, այլև կովկասյան սահմանների հարցում[188]։

Թուրքական այդ քաղաքականության դրսևորումներից մեկը հանդիսացավ նաև այն, որ Բ. Դուռը Լոնդոնի հետ համատեղ աշխատում էր հավաստիացնել շահին, որ առաջիկա ռուս-իրանական պատերազմի դեպքում Թուրքիան անվերապահորեն հանդես կգա Իրանի դաշնակցի դերում։ «Մահմուդ II-ը,—գրում է Ա. Դերիդուրը,—նախապես հաշվի էր առնում այն օգուտները, որոնք Թուրքիային կարող էր տալ այդ պահին հաստատվող կոնֆլիկտը Ռուսաստանի և Պարսկաստանի միջև և խորհուրդներ տալով Թեհրանի արքունիքին, անկասկած, անում էր հնարավոր ամեն ինչ, որպեսզի այդ բախումը դառնա անխուսափելի»[189]։

Իսկ Անգլիան հրահրելով ռուս-իրանական պատերազմ, ձգտում էր Ռուսաստանին չեղել մերձավորարևելյան պրոբլեմներից և բացի այդ կանխել նրա ռազմական ելույթի հնարավորությունը Թուրքիայի դեմ։ Անգլիական դիվանագիտությանը մասամբ հաջողվեց հասնել այդ նպատակին, քանի որ ռուս-իրանական պատերազմը նշանակալիորեն արգելակեց դիվանագիտական այն գրոհի զարգացումը, որ Նիկոլայ I-ը ձեռնարկել էր Օսմանյան կայսրության դեմ։

---

[187] АКАК, т. VI, ч. 2, № 573. Վացենկոյի 1825 թ. հունիսի 11-ի զեկուցագիրը։

[188] *А. В. Фадеев*, Россия и восточный кризис 20-х годов XIX в., Москва, 1958, стр. 97.

[189] *А. Дебидур*, նշվ. աշխ., հ. 1, էջ 259։

Ռուսաստանի գահը ստանձնելուց ընդամենը երկու ամիս անց, 1826 թ. մարտի 17-ին Նիկոլայ I-ը հրամայեց սուլթանին հանձնել վերջնագիր (Մինչակիի նոտան), որը վկայում էր այն մասին, որ Ռուսաստանը մտադիր է Օսմանյան կայսրության հետ իր բազում վեճերը լուծել պատերազմի միջոցով: Անտարակույս, այս վերջնագիրը է՛լ ավելի էր մեծացնելու Մահմուդ II-ի շահագրգռվածությունը ռուս-իրանական պատերազմի շուտափույթ բռնկման ուղղությամբ, որը կստիպեր Ռուսաստանին ավելի զիջող լինել Մերձավոր արևելքի հարցերում և ապա այդ պատերազմը հնարավորություն կտար կայսրությունում վերջնականապես վերացնել յենիչերիների զորամիավորումները և ավարտել նոր, եվրոպական տիպի կանոնավոր բանակի ստեղծումը: Բնականաբար, սուլթանը շահագրգռված էր նաև Ռուսաստանի դեմ առաջիկա պատերազմում համագործակցել շահի հետ: Պատահական չէ, որ ռուս-իրանական պատերազմի նախօրյակին, Մահմուդ II-ը հետևողականորեն սկսում է համոզել Ֆաթհ Ալի շահին, որ ինքը պատրաստվում է շուտով պատերազմելու Ռուսաստանի դեմ, դրանով իսկ աշխատելով հնարավորին չափ արագացնել Իրանի ելույթը:

Այսպիսով, Օսմանյան կայսրության և Մեծ Բրիտանիայի դիվանագիտական ջանքերի շնորհիվ ռուս-իրանական նոր պատերազմի բռնկումը նշանակալիորեն արագացավ:

1826 թ. հունիսի 23-ին անգլիացիների կողմից հրահրվող իրանական բարձր հոգևորականությունը հրապարակեց ֆեթվա Ռուսաստանի դեմ «սրբազան պատերազմի» մասին, իսկ նույն թվականի հուլիսին իրանական բանակը անակնկալ հարձակում գործեց ռուսական զորքերի վրա:

Ռուս-իրանական այս նոր պատերազմը նշանակալիորեն ընդլայնեց արևելյան ճգնաժամի շրջանակները, տարածվելով նաև Միջին արևելքի վրա և նպաստեց այդ ճգնաժամի է՛լ ավելի սրմանը:

Պատերազմի հենց սկզբում իրանական կառավարող շրջանները բացահայտ կերպով սկսեցին դրսևորել իրենց համերաշխությունը Թուրքիայի հետ: Այսպես, Երևանի սարդար Հոսեյն խանը իր բանակի ատելությունը Ռուսաստանի դեմ բորբոքելու նպատակով հայտարարում է, որ «ռուսները խրախուսում են հույներին ոչնչացնելու Թուրքերի իշխանությունը և վերականգնելու հունական թագավորությունը»[190]: Միանգամայն ակնհայտ է սարդարի ձգտումը Ռուսաստանի դեմ պատերազմին հաղորդելու իսլամի պաշտպանության համար «սրբազան պատերազմի» բնույթ:

---

[190] А. В. Фадеев, նշվ. աշխ., էջ 145:

Թուրք-իրանական մահմեդական համերաշխության և համատեղ «շահաթի» հարցը լրջորեն մտահոգում է ռուսական իշխանություններին։ Պատահական չէ, որ Ա. Պ. Երմոլովը ցարին ուղղված իր հաղորդագրություններից մեկում գրում է. «Պարսիկների կողմից մեր դեմ սկսված պատերազմը կարող է օտտոմանյան Դռանը ևս մղել նույնպիսի քայլի։ Կգտնվեն դաշնակիցներ (իմա՝ անգլիացիները—Վ. Բ.), որոնք կներշընչեն նրան (սուլթանին—Վ. Բ.), որ անհրաժեշտ է օգտվել ստեղծված իրադրությունից, որ պարսկական պատերազմը կշեղի մեր զորքերի մի մասին և դրանով իսկ կհեշտացնի թուրքական բանակների գործողությունները մեր դեմ»[191]։ Այդ տիպի ներշնչումները ցայտուն ձևով դրսևորվեցին Ակկերման քաղաքում 1826 թ. հուլիսի 1-ին սկսված ռուս-թուրքական բանակցությունների ժամանակ, որտեղ թուրքական պատգամավորությունը դիմում էր բանակցությունների ձգձգման կամ ռուսական առաջարկությունները սաբոտաժի ենթարկելու տակտիկային, համոզված լինելով, որ պատերազմը Իրանի հետ կկաշկանդի ռուսներին և հնարավորություն չի տա նրանց Թուրքիայի նկատմամբ կենսագործելու վճռական գիծ։ Այդ տեսակետը լրիվ բաժանվում էր անգլիացիների կողմից։ 1826 թ. սեպտեմբերին Ա. Վելլինգտոնը Ջ. Մալկոլմին ուղղված իր գաղտնի նամակում գրում է, որ «պարսիկների հարձակումը» հավանաբար Ռուսաստանին կդարձնի «ավելի չափավոր Ակկերմանում վարած բանակցությունների ժամանակ»[192]։

Այսպիսով, և՛ Թուրքիան, և՛ Անգլիան Իրանի հաշվին աշխատում էին կարգավորել սեփական գործերը։ Մինչդեռ Իրանը՝ իր համար միանգամայն անբարենպաստ պայմաններում մտավ այդ վտանգավոր պատերազմի մեջ, մեծ հույսեր կապելով Թուրքիայի միաժամանակյա ելույթի և Անգլիայի ռազմական ու ֆինանսական օգնության հետ[193]։

1826 թ. սեպտեմբերին Շամխորի և Ելիզավետպոլի (Գյանջա) տակ Աբբաս միրզայի բանակի կրած պարտությունը ստիպեց Թուրքիային արագացնել Ակկերմանի կոնվենցիայի ստորագրումը (1826 թ. սեպտեմբերի 25-ին)։

Այսպիսով, հակառակ իրենց բոլոր խոստումներին, Թուրքիան և Անգլիան լքեցին Իրանին, նրան մեն-մենակ թողնելով ահարկու հակառակորդի դեմ։

---

191 Նույն տեղում։

192 *W. Kaye*, The life and correspondence of J. Malcolm, vol. II, London—Bombey, 1856, p. 450.

193 *Л. С. Семенов*, նշվ. աշխ., էջ 109։

Այն բանից հետո, երբ Թուրքիան սերժեց պետությունների պահանջը Հունաստանին ինքնավարություն տրամադրելու վերաբերյալ, նրա և եոյակ դաշինքի միջև հարաբերությունները խիստ սրվեցին։ 1827 թ. հոկտեմբերի 20-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միացյալ նավատորմը Նավարինի ծովախորշում ջախջախեց թուրք-եգիպտական նավատորմը։ Այդ պարտությունը է՛լ ավելի մեծացրեց սուլթան Մահմուդ II-ի շահագրգռվածությունը ռուս-իրանական պատերազմի շարունակման մեջ, հետաձգելու համար Ռուսաստանի հարվածը Թուրքիային։ Պատահական չէ, որ երբ 1827 թ. ռազմական կամպանիայի ընթացքում իր կրած խոշոր անհաջողությունների հետևանքով Իրանը ստիպված եղավ ռուսների հետ բանակցություններ վարել հաշտության պայմանագիր կնքելու համար, սուլթանը համոզում էր շահին շդիմել այդ քայլին և շարունակել պատերազմը[194]։ Այդ մասին տվյալներ բերելով, Ալի Աքբար Բինան գրում է. «Երբ հաշտության պայմանագրի նախագծի բովանդակությունը հաղորդվեց Թեհրան, շահը գրտնվում էր օսմանյան կառավարության ազդեցության ներքո և հավանություն չտվեց այդ նախագծին»[195]։ Նշված փաստը հաստատվում է նաև այլ տվյալներով. հիմնվելով Կոստանդնուպոլսում ավստրիական դեսպան Օտտենֆելսի հաղորդագրության վրա, ավստրիական դիվանագետ Ֆ. Գենտցը նշում է. «Թուրքիայում մեծ հույսեր են կապում Պարսկաստանի հետ Ռուսաստանի զինադադարի խզման կապակցությամբ, որովհետև շահը չի հաստատել իր լիազորների կողմից ստորագրած հաշտության նախնական պայմանները»[196]։

Իսկ ռուս դիվանագետ Մ. Մինչակին գրում է. «Բ. Դուռը շատ է ցանկանում, որ Դեհքարգանում բանակցությունները խզվեն»[197]։

1827 թ. դեկտեմբերի 20-ին Թուրքիան չեղյալ հայտարարեց Ակկերմանի համաձայնագիրը։ Սուլթանը հրապարակեց դիմում, ուղղված նահանգների կառավարիչներին, որտեղ նա կոչ էր անում բոլոր մահմեդականներին ոտքի կանգնել իսլամը և կայսրությունը պաշտպանելու համար։ Ռուսաստանը այդ քայլը գնահատեց որպես իր դեմ ուղղված թշնամական միջոցառում և 1828 թ. ապրիլի 26-ին պատերազմ հայտարարեց Թուրքիային։

---

194 А. Дебидур, նշվ. աշխ., հ. 1, էջ 273—274։

195 اكبر بينا على նշվ. աշխ., հ. 1, էջ 240—241։

196 АВПР, ф. Канцелярия, 1828, д. 854, л. 89.

197 АВПР, ф. Канцелярия, 1828, д. 859, л. 47.

Ռուս-թուրքական այս պատերազմը մեծ տագնապ առաջ բերեց Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների մեջ, որովհետև նրանք կասկածներ չունեին Ռուսաստանի հաղթանակի մեջ և վախենում էին, որ նա միանձնյա կերպով կլուծի հունական հարցը։

Ռուսաստանի դեմ դիմադրությունը կորովի դարձնելու նպատակով Անգլիան կրկին ձեռնամուխ է լինում Իրանի և Թուրքիայի ռազմական ջանքերի միավորմանը։ Նախ նա աշխատում է հասնել նրան, որ ռուսական զորքերը դուրս բերվեն Իրանական Ատրպատականից, որպեսզի ապահովվեն թուրքական բանակի թևերը Արևմտյան Հայաստանում և Քրդստանում և պայմաններ ստեղծվեն իրանական և թուրքական բանակների միավորման համար։ Այնուհետև, Թեհրանում անգլիական դեսպան Մակդոնալդը և Աբբաս միրզան սկսում են կանոնավոր կապեր պահպանել Թուրքիայի հետ, որն իր հերթին Վանի, Էրզրումի և Կարսի շրջաններում սկսում է զորքեր կենտրոնացնել և առաջարկում է դրանք միավորել իրանական բանակի հետ[198]։

Ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին և ընթացքում Բ. Դռան կողմից իրականացված դիվանագիտական քայլերը գալիս են հաստատելու այն փաստը, որ նա մեծ հույսեր էր կապում ոչ միայն Անգլիայի ու Ավստրիայի, այլև Իրանի օգնության հետ։ Եվ դա հակառակ այն բանի, որ Օսմանյան կայսրության ֆեոդալա-պահպանողական շրջանների որոշ ներկայացուցիչներ, ինչպես, օրինակ, Մաքքեի և Մադինեի պահնորդ, բարձրաստիճան հոգևորական Քեչիշիզադե Իզզեթ մոլլան և այլն, լինելով ավելի զգույշ ու հեռատես և զգաստորեն գնահատելով կայսրության ներքին վիճակը, խորհուրդ էին տալիս սուլթանին առաջին հերթին հենվել երկրի սեփական ուժերի վրա և մեծ հույսեր չկապել պետությունների օգնության հետ, որոնք, նրանց կարծիքով, կա՛մ զբաղված էին իրենց սեփական պրոբլեմներով, ինչպես Իրանը, և կա՛մ իրենք էին պատրաստ առիթի դեպքում զավթելու օսմանյան տիրույթները, ինչպես Անգլիան, Ավստրիան և Ֆրանսիան[199]։

Սակայն նման տեսակետները չէին բաժանվում թուրքական կառավարող շրջանների մեծամասնության կողմից։ Պատահական չէ, որ Ռուսաստանի և Իրանի միջև 1828 թ. փետրվարի 10-ին, Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքման լուրը ունեցավ ջղայնացնող ներգործություն և մեծ տագնապ առաջ բերեց Կոստանդնուպոլսում։ 1828 թ.

---

198 Б. П. Балаян, նշվ. աշխ., էջ 216։

199 В. И. Шеремет, Турция и Адрианопольский мир 1829, Москва, 1975, стр. 42.

մարտին թուրքական մայրաքաղաքից ռուսական դիվանագետները հաղորդում էին, որ «այնտեղ վախենում են, որ ռուսները դեսանտ կհանեն Անատոլիայի ափերը և Պասկևիչի բանակը կներխուժի թուրքական տերիտորիա»[200]։

Նույնիսկ Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո Բ. Դուրը իր հույսերը չէր կտրում նրանից, որ Իրանը կշարունակի պայքարը Ռուսաստանի դեմ։ Այդ մասին է վկայում հետևյալ փաստը. 1828 թ. ապրիլին Ռուսաստանի հետ կնքած հաշտությունը շնորհավորելու պատրվակով Թեհրան է մեկնում դեսպանորդի լիազորություններով օժտված թուրքական մի դիվանագետ, որին իրականում հանձնարարված էր շահին առաջարկել դաշինք՝ Ռուսաստանի դեմ։ Նրա խնդիրն էր նաև հնարավորության սահմաններում չեզոքացնել Աբբաս միրզայի հակաթուրքական տրամադրությունները[201]։ Այդ բանակցություններին անմիջական մասնակցություն էր ցուցաբերում նաև անգլիական դեսպան Ջ. Մակդոնալդը[202]։ Մաքնեյլի հաղորդած տեղեկությունների համաձայն շահը, սակայն, անվստահություն է հայտնում թուրքական առաջարկների նկատմամբ, կտրականապես մերժելով ռազմական դաշինքի վերաբերյալ առաջարկը[203]։ Իր այդ գիծը նա պատճառաբանում է նրանով, որ հակառակ բազմաթիվ խոստումների, Իրանի համար ճգնաժամային պահերին իր պետությունը Թուրքիայից ոչ մի անգամ չի ստացել ռեալ օգնություն։ Իրականում շահական արքունիքին զգաստացնում էր Թուրքմենչայի պայմանագրի խախտման ծանր հետևանքների հեռանկարը և ռուսական զենքի հաղթանակի նկատմամբ կասկածներ չունենալը։ Բացի այդ, մի շարք անուղղակի փաստեր վկայում են այն մասին, որ Աբբաս միրզայի և նրա շրջապատի մարդկանց մոտ հասունանում էր այն միտքը, որ Թուրքիայի ծանր վիճակը հիանալի հնարավորություններ է ստեղծում Իրանի համար տարածքային փոխհատուցում որոնելու Օսմանյան կայսրության հաշվին։ Ըստ երևույթին տեղյակ լինելով Աբբաս միրզայի այդ մտորումներին, Քարբալայի գլխավոր մոշթահեղը և Իրաքի մի շարք արաբական շեյխեր դիմում են գահաժառանգին, հայտնելով, որ իրենք ցանկանում են ապստամբել թուրքերի դեմ և անջատվել սուլթանից, պայմանով սակայն, որ Աբբաս միրզան թեկուզև մի ոչ մեծ բանակ ուղարկի Բաղդադի փաշալիք։ Նույնպիսի ա-

---

200 ЦГВИА, ф. ВУА, д. 996, ч. I, л. 4.

201 Նույն տեղում, թ. 40։ ЦГИА, ф. 1018, оп. 2, д. 315, л. 2.

202 АКАК, т. VII, стр. 633.

203 Նույն տեղում, էջ 635։

առաջարկով Աբբաս միրզային դիմում էր Սուլեյմանիեի Մոհամմադ (Մահմուդ) փաշան, խոստանալով նույնիսկ ֆինանսավորել այդ արշավանքը երկու քուրդ գումարով։ Դեպքերին քաջատեղյակ Գրիբոյեդովը գրում է, որ Աբբաս միրզան պարզապես զորքեր չունի, հակառակ դեպքում նա չէր հապաղի և ընդառաջ կգնար այդ առաջարկներին[204]։ Որոշակի տվյալներ կան նաև այն մասին, որ Աբբաս միրզան ծրագրել էր այդ հարցի կապակցությամբ կապերի մեջ մտնել Ռուսաստանի հետ։ Մասնավորապես նա մտադիր էր անձամբ մեկնել Պետերբուրգ և ռուսական կառավարությանը առաջարկել ռազմական դաշինք Թուրքիայի դեմ[205]։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիայի հետ դաշինքի մերժումը, առավել ևս Աբբաս միրզայի վերոհիշյալ տրամադրությունները, որոնք, անշուշտ, գաղտնիք չէին կարող հանդիսանալ Թեհրանում և Թավրիզում վխտող անգլիական գործակալության համար, կարող են սրել անգլո-իրանական հարաբերությունները, Ֆաթհ Ալի շահը անորոշ և մանվածապատ խոստումներ էր տալիս Թեհրանում գտնվող Թուրքական դեսպանորդին, որ Իրանը Բ. Դռանը կցուցաբերի դիվանագիտական օգնություն[206], բնավ չպարզաբանելով, թե դա ինչպես, ինչ հարցերում և ինչպիսի ձևերով պետք է կատարվի։ Հավաստելու համար, որ իր խոստումն անկեղծ է, շահը 1828 թ. Թուրքիա է ուղարկում ոմն Սադեզ խանի, որն ավարտել էր անգլիական Օստ-Հնդկական ընկերության կոլեջը և այդ առումով խիստ հարմար էր շահի համար, որովհետև, անտարակույս, կապված էր անգլիացիների հետ և վերջիններս կասկածներ չէին կարող ունենալ նրա միսիայի և գործելակերպի նկատմամբ։ Իսկապես, իրենց այդ գործակալի միջոցով անգլիացիները սկսում են Կոստանդնուպոլսից ստանալ «ստույգ տեղեկություններ»[207]։

Համոզվելով, որ շահը խուսանավում է և այդ պարագաներում դժվար թե Թուրքիայի և Իրանի միջև ուղղակի բանակցությունները հանգեցնեն որևէ արդյունքի, բրիտանական կառավարությունը որոշում է մտնել խաղի մեջ և գործը ամբողջապես վերցնել իր ձեռքը։ 1828 թ. աշնանը պրեմիեր—մինիստր Ա. Վելլինգտոնը այդ ուղղությամբ ծավա-

---

[204] Այդ մասին տե՛ս А. П. Щербатов նշվ. աշխ., հ. 3, էջ 103։ Б. П. Балаян, նշվ. աշխ., էջ 236—237։

[205] АВПР, ф. «Консульство в Тавризе», 1829, д. 4, папка 2, лл. 116—118. (Ցիտված է ըստ Б. П. Балаян, նշվ. աշխ., էջ 237)։ Տե՛ս նաև՝ АКАК, т. VII, стр. 654, 660—661.

[206] А. П. Щербатов, նշվ. աշխ., հ. 3, էջ 110—111։

[207] ЦГВИА, ф. ВУА, д. 996, ч. I, л. 118 об; ЦГИА, ф. 1018, оп. 2, д. 315.

լում է բուռն գործունեություն, աշխատելով օգտագործել իր տրամադրության տակ գտնվող բոլոր լծակները։ Նրա հրահանգով Օստ-Հնդկական ընկերության հսկողական խորհրդի նախագահ է. էլլենբորոն անմիջապես մոբիլիզացնում է իր նյութական և դիվանագիտական հնարավորությունները շահի վրա ճնշում գործադրելու նպատակով[208], Իրանում անգլիական գործակալությունը կապեր է հաստատում Անատոլիայի թուրքական փաշաների և քրդական ցեղերի առաջնորդների հետ և այլն։ Պասկեիչը հաղորդում է անգլիական դիվանագետների կասկածելի «շրջագայությունների մասին Մուշում, Մալազկերտում և այլն և նրանց ակտիվության մասին ռազմական գործողությունների կովկասյան թատերաբեմում»[209]։ Իսկ Ջ. Մակդոնալդը Թեհրանում հայտարարում է, որ եթե շահը պատերազմ հայտարարի Թուրքիային, Անգլիան անմիջապես հանդես կգա Իրանի դեմ[210]։

Տեղյակ լինելով այս բոլորին, ինչպես նաև Աբբաս միրզայի հակաթուրքական տրամադրություններին, Պետերբուրգը, սակայն, աշխատում էր ռուս-թուրքական պատերազմում ապահովել լոկ Իրանի չեղոքությունը, ոչ մի փորձ չկատարելով Օսմանյան կայսրության դեմ ռուս-իրանական ռազմական դաշինք ստեղծելու ուղղությամբ։ Նեսսելրոդեն կարգադրել էր Գրիբոյեդովին, իսկ մինչ այդ նաև Ամբուրգերին «պատշաճ ձևով մերժել Աբբաս միրզայի նման առաջարկությունները»[211]։

Ցարական կառավարող շրջանների և անձամբ արտաքին գործերի մինիստրի այս պասսիվ և անընդունելի գիծը սուր քննադատության է ենթարկվում Ա. Գրիբոյեդովի կողմից։ Նա գտնում է, որ նախ անհրաժեշտ է կնքել ռուս-իրանական ռազմական դաշինք, իսկ այնուհետև հասնել նրան, որ նույնպիսի դաշինք ստեղծվի Իրանի և Միջագետքի հակաթուրքական տրամադրություններ ունեցող շրջանների միջև։ Գրիբոյեդովի կարծիքով, դա մեծապես կթեթևացներ Ռուսաստանի պատերազմը Թուրքիայի դեմ։ Պասկևիչին գրած իր 1828 թ. դեկտեմբերի 3-ի նամակում նա համարձակ կերպով շարադրում է իր վերոհիշյալ ծրագիրը, հատկապես շեշտելով, որ Ռուսաստանի շահերի տեսակետից միանգամայն կարևոր է Աբբաս միրզային զինել ընդդեմ թուրքերի։ Նա նույ-

---

208 Տե՛ս A. Wellington, Despatches correspondence and memoranda, vol. V, London, 1873, pp. 115—120, 151—162; Է. Էլլենբորոյի օրագրից քաղվածքները տե՛ս С. В. Шостакович, Дипломатическая деятельность А. С. Грибоедова, М., 1960, стр. 227—228.

209 А. П. Щербатов, նշվ. աշխ., հ. 4, ՍՊԲ, 1896, էջ 103։

210 С. В. Шостакович, նշվ. աշխ., էջ 207։

211 АКАК, т. VII, стр. 622, 669.

նիսկ հուշում է Պասկևիչին այդ առթիվ ուղղակի դիմել Նիկոլայ I-ին[212]։ Գրիբոյեդովի առաջարկություններում պարունակվում էր նաև կոնկրետ ստրատեգիական պլան՝ ռուսական և իրանական զինված ուժերի համատեղ գործողությունների շնորհիվ Էրզրումը և Բաղդադը գրավելու վերաբերյալ[213]։

Սակայն տաղանդավոր դիվանագետի այս առաջարկությունները մնացին անհետևանք։ Քաջ տեղյակ լինելով հարցի վերաբերյալ Պետերբուրգի կարծիքին, Պասկևիչը Գրիբոյեդովին գրած իր 1828 թ. դեկտեմբերի 5-ի նամակում համոզում է նրան հրաժարվել հակաթուրքական ռուս-իրանական դաշինքի կնքման ուղղությամբ «ակտիվ առաջարկություններից»[214]։

Պասկևիչը, սակայն, դեմ չէր, եթե Իրանը ինքնուրույն կերպով, առանց Ռուսաստանի հետ դաշինքի, ռազմական գործողություններ ըսկըսեր Թուրքիայի դեմ։ Այդ դեպքի համար նա ուներ համակողմանիորեն մշակված մի ծրագիր։ Նրա կարծիքով, Բաղդադի ուղղությամբ իրանական բանակի ռազմական գործողությունները արաբական շեյխերի հետ սերտ համագործակցության պայմաններում կունենար այն հետևանքը, որ ռուսների կողմից Էրզրումը գրավելուց հետո հնարավոր կլիներ նախ Դիարբեքիրը պահել ներխուժման սպառնալիքի տակ, այնուհետև ըսպառնալ Սիրիային և այստեղ միավորվելով Թուրքերի դեմ պայքարող վահաբիթների հետ, սպառնալ նաև Մաքքային և Մադինային։ Ռուսաստանի և Իրանի դեմ միաժամանակյա ծանր պատերազմը Թուրքիայում առաջ կբերեր ներքին խլրտումներ, որը հնարավորություն կտար ռուսներին Անատոլիայում թուրքական կառավարության դեմ ոտքի հանել բնակչության դժգոհ տարրերին (իմա՝ հայերին և քրդերին—Վ. Բ.)։

Այն դեպքում, եթե Աբբաս միրզան չհամաձայնվեր պատերազմ սկսել Թուրքիայի դեմ, Պասկևիչը գտնում էր, որ անհրաժեշտ է գեթ համոզել նրան, որպեսզի նա Բաղդադի ուղղությամբ կատարի զորքերի որոշ տեղաշարժ, որի հետևանքով Բաղդադի փաշայության զորքերը գամված կմնան տեղում, և օսմանյան կառավարությունը ի վիճակի չի լինի դրանք ուղարկել կովկասյան ճակատ՝ ռուսների դեմ։

Գրիբոյեդովին գրած իր այս նկատառումները հաղորդելով Պետերբուրգ, Պասկևիչը ավելացնում էր, որ Աբբաս միրզային կարելի է ներ-

---

212 Б. П. Балаян, նշվ. աշխ., էջ 237։

213 АКАК, т. VII, № 629.

214 Այդ նամակի լրիվ տեքստը տե՛ս „Кавказский сборник", т. XXX, стр. 101—104.

գրավել Թուրքերի դեմ պատերազմի մեջ, խոստանալով նրան Բաղդադի փաշայությունը, կամ Վանը և Մուշը։ Սակայն իսկույն անում էր վերապահում, որ դա կարելի է անել միայն այն դեպքում, երբ Անգլիան սուլթանի կողմից հանդես դա Ռուսաստանի դեմ։

Ի պատասխան այս հարցադրման Նեսսելրոդեն հայտարարեց Պասկեիչին, որ Ռուսաստանը հիմքեր չունի կասկածելու Լոնդոնի կաբինետի կողմից «մեր նկատմամբ ինչ-որ թշնամական մտադրությունների մեջ»[215]։

Սրանով արտաքին գործերի մինիստրը հարցը փակում էր։ Թեև Նիկոլայ I-ը և Նեսսելրոդեն Գրիբոյեդովին ուղղած իրենց հրահանգում հավաստում էին Ռուսաստանի շահագրգռվածությունը իրանա-թուրքական կոնֆլիկտի բռնկման ուղղությամբ[216], սակայն դրան հասնելու համար ոչ մի գործնական ցուցում չէր տրվում ռուսական դեսպանորդին։

Անշուշտ, Թուրքերի, առավել ևս անգլիացիների աչքից չէր կարող վրիպել ո՛չ Աբբաս միրզայի հակաթուրքական տրամադրությունները և ո՛չ էլ Ռուսաստանի շահագրգռվածությունը թուրք-իրանական պատերազմի բռնկման հարցում։ Այդ պատճառով Կոստանդնուպոլսում որոշեցին օգտվել Պետերբուրգի պասսիվությունից և ապահովագրել իրենց թուրք-իրանական բախման միանգամայն անցանկալի հետևանքներից։ Բ. Դուռը ձեռնամուխ է լինում տենդագին գործունեության. մասնավորապես 1828 թ. դեկտեմբերի վերջին և 1829 թ. հունվարի սկզբին թուրքերը Թավրիզ՝ Աբբաս միրզայի մոտ են ուղարկում իրենց ներկայացուցիչ Թաիբ էֆենդիին, որը գայթակղեցուցիչ և շռայլ առաջարկություններ է անում գահաժառանգին, հատկապես խոստանալով Իրանի կողմից Կովկասում թուրքերի ռազմական ջանքերին աջակցություն ցույց տալու դեպքում փոխհատուցել Ռուսաստանին վճարված ռազմատուգանքի գումարը (18 քուրուշ) և շահին վերադարձնել Թուրքմենչայի պայմանագրով կորցրած տերիտորիաները։ Այդ նույն ոգով Կոստանդնուպոլսում ռեխսուլքյութաբ Պերթև փաշան համապատասխան «մշակման» էր ենթարկում շահի դեսպանորդ Մեհմեդ Շարիֆ Շիրվանիին[217]։

1829 թ. հունվարի 30-ին (փետրավարի 11-ին) Թեհրանում ռուսական միսիայի ջախջախումը և Գրիբոյեդովի սպանությունը Կոստանդնուպոլսում ընդունվեց որպես բերկրալի լուր։ Անմիջապես գումարվեց

---

215 Նույն տեղում։ Տե՛ս նաև՝ Б. П. Балаян, նշվ. աշխ., էջ 240։

216 «Кавказский сборник», т. XXX, стр. 110.

217 *Tarihi Lütfi*. c. 2, Istambul, 1290, s. 20—21; ЦГВИА, ф. ВУА, д. 4470, л. 70 об; АВПР, ф. Главный архив, 1—9, д. 13, ч. IX, л. 132—132 об.

Դիվանի նիստ, որտեղ քննարկվում էր այդ իրադարձության հնարավոր հետևանքների հարցը։ Կոստանդնուպոլսում ենթադրում էին, որ ռուսական միսիայի ջախջախումը տեղիք կտա եթե ոչ պատերազմի, համենայն դեպս Ռուսաստանի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների խզման, որը հնարավորություն կտա փոխել Թուրքմենչայի պայմանագրի պայմանները և արգելք կհանդիսանա ռուսական զորքերի առաջխաղացմանը ռազմական գործողությունների փոքրասիական թատերաբեմում[218]։ Ենթադրվում էր նաև, որ Ռուսաստանի կողմից շահին նոր պատերազմ հայտարարելու վտանգը կստիպի իրանական կառավարությանը հանձին Թուրքիայի փնտրելու հուսալի դաշնակցի։ Այդ ենթադրություններն ստացան շոշափելի կերպարանք մանավանդ այն բանից հետո, երբ կովկասյան իշխանությունները մերժեցին Աբբաս միրզային մեկնել Պետերբուրգ ներողություն խնդրելու և վտանգավոր դիպվածը խաղաղ ձևով կարգավորելու համար։

Իսկապես, Աբբաս միրզայի Պետերբուրգ մեկնելու մերժումը ստիպում էր իրանական կառավարող շրջաններին եզրակացնել, որ պատերազմը Ռուսաստանի հետ անխուսափելի է։ Որոշվեց հնարավորին չափ նախապատրաստվել դրան։ Աբբաս միրզան Ատրպատականում անմիջապես ձեռնամուխ եղավ զորահավաքի։ Թեհրանում այդ նույն բանը սկսեց անել արքայազուն Հասան Ալի միրզան։ Ընդ որում, ռուսների տեղեկությունների համաձայն, այդ գործին անմիջական մասնակցություն էր ցուցաբերում Ջ. Մակդոնալդը[219]։ Կոստանդնուպոլսում հայտնի դարձավ, որ Աբբաս միրզան դեմ չէ Թուրքիայի հետ կնքելու ռազմական դաշինք[220]։ Շուտով Պերթև փաշան և Մեհմեդ Շիրվանին ձեռնամուխ եղան այդ դաշինքի պայմանները մշակելու գործին[221]։ Թավրիզում հայտնվեց դեսպանորդի լիազորություններով օժտված թուրքական մի գործակալ, որը, Շիրվան քաղաքի պարետի տեղեկությունների համաձայն, իր կառավարության անունից խոստանում էր «հատկացնել Ռուսաստանին վճարված ողջ գումարը և դրան ավելացրած նաև 10 քուրուր, ինչպես նաև ետ վերադարձնել բոլոր կորցրած հողերը[222]։

---

218 Л. С. Семенов, նշվ. աշխ., էջ 136։

219 «Кавказский сборник», т. XXX, стр. 154.

220 Նույն տեղում, էջ 152—157։ Архив Раевских, т. I, СПб., 1908, стр. 438.

221 Архив Раевских, т. I, стр. 435; АВПР, ф. «Посольство в Париже», оп. 524, д. 86, лл. 214—245.

222 G. P. Costello, The murder of Griboedov, „Oxford Slavonic papers", vol. VIII, 1958, p. 81: АВПР, ф. „Главный архив". 1—9, д. 13, ч. IX, л. 132 об.

Այս բոլորի հետ միաժամանակ երկյուղ կրելով, որ Ռուսաստանի սպառնալիքի ներքո շահը կարող է հրաժարվել Թուրքիայի հետ համագործակցելու մտադրությունից, 1829 թ. փետրվարի վերջին թուրքական բանակը կովկասյան ճակատում անցավ հակահարձակման, պաշարելով Ախալցխայի ամրոցը և փորձելով Բորժոմի կիրճով ներխուժել Վրաստան[224]։

Այդ միջոցառման պահը ընտրված էր ոչ պատահականորեն։ Այդ առթիվ Բ. Պ. Բալայանը իրավացիորեն նշում է, որ դա թուրքերի ռազմական մի ցույց էր, որը նախատեսված էր նրա համար, որ զաշաբնակներին մղեն պատերազմի Ռուսաստանի դեմ և կամ արագացնեն նրանց նլույթը ձմեռային պայմաններում, երբ թուրքերը չէին ցանկանում կռվել[225]։

Սակայն թուրքական «հակահարձակումը» ոչ միայն չարդարացրեց իրեն, այլ ավելի շուտ տվեց հակառակ արդյունք։ Այն ավարտվեց թուրքերի կատարյալ պարտությամբ և նահանջով, որը չէր կարող չսասանել շահի և Աբբաս միրզայի մտադրությունները։

Առավել ևս Թուրքիայի դեմ նոր խոշոր մասշտաբի ռազմական գործողություններ ծավալելու նախօրյակին, չցանկանալով սրել իր հարաբերությունները Իրանի և Անգլիայի հետ, Պետերբուրգը գիտակցաբար աշխատում էր ցույց չտալ, որ 1829 թ. փետրվարի 11-ի իրադարձությունն ինքը համարում է քաղաքական ակտ։ Նույնիսկ հրամայված էր արձանագրել, որ Իրանում անգլիական ներկայացուցիչները առնչություն չեն ունեցել ռուսական դեսպանի սպանության գործին[226]։

Իրենց համար ստեղծված անցանկալի դրությունն ուղղելու համար թուրքերը ստիպված եղան շտապ կարգով Աբբաս միրզային հատկացնել խոշոր գումար, իսկ անգլիացիները դրան ավելացրին 10 հազար հրացան։ Սակայն այդ աննշան միջոցառումները այլևս ի վիճակի չէին փոխելու շահական արքունիքի և Աբբաս միրզայի սասանված վստահությունը թուրք-իրանական համագործակցության ապագայի նկատմամբ։

Ստեղծված իրավիճակում զաշարները որոշում են դիմել երկակի խաղի. մի կողմից նրանք հավաստիացնում են թուրքերին, որ ռազմական նախապատրաստություններից հետո անմիջապես ելույթ կունենան ռուսների դեմ, իսկ ռուսներին հայտարարում են, որ շուտով Պետերբուրգ են ուղարկելու դեսպանություն Գրիբոյեդովի սպանության առթիվ

---

224 ЦГИА. Груз. ССР, ф. 1025, оп. 3, д. 100, л. 201.

225 *Б. П. Балаян, Նշվ. աշխ., էջ 268։*

226 *И. О. Попова,* Грибоедов-дипломат, Москва, 1964, стр. 202—204.

ներողություն խնդրելու համար։ Նույնիսկ Աբբաս միրզան սկսում է հավաստիացնել Պասկևիչին, որ ինքը պատրաստ է պատերազմ սկսելու Թուրքերի դեմ, եթե Ռուսաստանը իրեն հատկացնի Հրետանի և 10 հազար հրացան[226]։

Կովկասի և Պետերբուրգի ռուսական իշխանությունների համար դժվար չէր կռահել շահական կառավարության այս երկակի խաղի իմաստը։ Նիկոլայ I-ը հրամայում է Պասկևիչին գործել ավելի վճռականորեն, կանխելու համար անցանկալի Թուրք-իրանական դաշինքի ստեղծման հավանականությունը։ Գլխավոր հրամանատարը անմիջապես ըսկըսում է ճնշում գործադրել շահական կառավարության վրա. սպառնալիքի հետ միաժամանակ օգտագործելով նաև համոզման մեթոդը։ Այդ նպատակով նա 1829 թ. ապրիլի 10-ին Թավրիզ է ուղարկում իր համհարզ իշխան Կուդաշևին, որին հանձնարարվում է Աբբաս միրզային հանձնել իր նամակները և բանավոր իրականացնել Պասկևիչի հրահանգները։

Այդ նամակներում սպառնալիքի շեշտը դրվում էր երկու հարցի վրա. Գրիբոյեդովի սպանությունը և Թուրքերի հետ դաշինք կնքելու ցանկությունը։ Պասկևիչը սպառնում էր զորքեր շարժել դեպի Իրան և մեկ տարվա ընթացքում վերջ տալ ղաջարների դինաստիային։ Այնուհետև նա համոզում էր տուրք չտալ Թուրքերի և անգլիացիների խորհուրդներին, խոստանում էր զինել իրանական բանակը, եթե Աբբաս միրզան համաձայնվեր հարձակվելու Վանի վրա։

1829 թ. ապրիլի 29-ին Կուդաշևի հետ հանդիպման ժամանակ գահաժառանգը աշխատում է արդարացնել իրեն, հայտարարելով, որ «դըրդվելով Թուրքերի կողմից և հույսը դնելով անգլիացիների խոստացած թնդանոթների, արկերի և հրացանների վրա, շահի բազմաթիվ որդիները և Թեհրանի արքունիքը առաջարկել են շահին, օգտվելով Թուրքական պատերազմից՝ ներխուժել Ռուսաստանի սահմանները»[227]։ Այնուհետև նա ավելացնում է, որ ինքը վճռականորեն դեմ է Ռուսաստանի հետ պատերազմին և եթե շահը, հակառակ դրան, սկսի այն, ինքը ոչ միայն մասնակցություն չի ունենա, այլև կհեռանա Իրանից։

Այդ զրույցի ընթացքում գահաժառանգը հայտնում է նաև, որ ինքը մերժել է Թուրքիայի կողմից արված դաշինքի առաջարկը և հաճույքով նրա դեմ կսկսեր պատերազմ, սակայն դրանից իրեն ետ է պահում Անգլիայի դիրքը, որը ելնելով իր առևտրական շահերից, այդ պատերազ-

---

226 Տե՛ս «Кавказский сборник», т. XXX, стр. 153.

227 ЦГИА, ф. 1018, оп. 2, д. 418, л. 4 об.

մում կօգնի Թուրքիային և նույնիսկ հնարավոր է, պատերազմ հայտարարի Իրանին։

Իր այս հայտարարությունների անկեղծությունը կասկածի տակ չդնելու և ռուսների վստահությունը շահելու համար Աբբաս Միրզան, նույնիսկ, խնդրում է երաշխիք տալ, որ անգլո-իրանական պատերազմի դեպքում Ռուսաստանը ռազմական օգնություն ցույց կտա Իրանին, ընդհուպ մինչև նրան զորքեր հատկացնելը[228]։

Իսկապես, Աբբաս միրզայի դրությունը ծանրանում է նրանով, որ մի կողմից նրա վրա ճնշում էր գործադրում Ռուսաստանը, իսկ մյուս կողմից սպառնում էին թուրքերը և անգլիացիները։ Սուլթանն, օրինակ, սպառնում էր պատերազմ հայտարարել Իրանին, եթե Աբբաս միրզան դեսպանություն ուղարկեր Պետերբուրգ ներողություն խնդրելու համար, իսկ բրիտանական դեսպանորդը հայտարարում էր, որ այդ դեպքում ինքը անհապաղ կհեռանա Թավրիզից, որպեսզի ուժեր համախմբի Աբբաս միրզայի դեմ[229]։

Մեկ օր անց Կուդաշևի հետ հանդիպում է ունենում Աբբաս միրզայի զաեմաղամ միրզա Աբոլ Ղասեմ Ֆարրախանին, որի միսիան վերին աստիճանի նրբին էր։ Նախ նա ժխտելու էր Թուրքիայի հետ դաշինքի վերաբերյալ հարցը և այնուհետև հասկացնելու էր Կուդաշևին, որ Իրանը ցանկություն չունի պատերազմելու Թուրքիայի դեմ։ Ֆարրախանին հայտարարում է, որ Աբբաս միրզան բանակցություններ է վարում Թուրքիայի հետ ոչ թե դաշինք կնքելու նպատակով, այլ որպեսզի նրանք վերադարձնեն Ուրմիայի շրջանում գրաված իրանական տերիտորիան։ Եվ խորամանկորեն ավելացնում է, որ, իհարկե, եթե գահաժառանգը այդ հարցում դիմեր Անգլիայի օգնությանը, վերջինս անտարակույս կստիպեր սուլթանին Իրանին վերադարձնել իր տերիտորիան[230]։

Այսպիսով, գործը ներկայացնելով այնպես, որ Իրանը Թուրքիայի հետ չունի լուրջ տարաձայնություններ, այլ միայն նրանց միջև առկա են աննշան սահմանային վեճեր, Աբբաս միրզան ժխտում է թուրք-իրանական ռազմական դաշինքի կնքման հարցը և, ամենակարևորը, մերժում Ռուսաստանի առաջարկը պատերազմ սկսելու Թուրքիայի դեմ։

Բրիտանական դիվանագիտությունը, որն, անշուշտ, հետևում էր ռուս-իրանական այս բանակցություններին, վախենալով, որ Ռուսաս-

---

228 ЦГИАЛ, ф. 1018, оп. 2, д. 402, лл. 1—4 об. *Ցիտված է ըստ Ե. Պ. Բալանյան. Նշվ.աշխ., էջ 271։*

229 АКАК, т. VII, стр. 701.

230 *Նույն տեղում։*

տանի ճնշման ներքո կարող է ստեղծվել հակաթուրքական ռազմական մի կոալիցիա Ռուսաստանի, Իրանի և Միջագետքի հակաթուրքական տրամադրություններ ունեցող արաբական շեյխերի և Սուլեյմանիեի քուրդ փաշայի մասնակցությամբ, անմիջապես Պետերբուրգում հարցում է արվում Նեսսելրոդեին, պահանջելով բացատրել, թե ինչ նպատակներ են հետապնդում Կուղաշևի միջոցով Աբբաս միրզային հանձնված Պասկևիչի նամակները։ Սակայն այդ հարցումը ոչ մի պարզություն չմտցրեց անգլիացիների ունեցած կասկածների մեջ, որովհետև Նեսսելրոդեն պատասխանեց, որ Պետերբուրգի կաբինետը դատապարտում է Պասկևիչի նամակների բովանդակությունը։

Շուտով Կոստանդնուպոլսում հայտնի դարձավ, որ Աբբաս միրզան իր որդի Խոսրով միրզայի գլխավորությամբ հատուկ դեսպանություն է ուղարկել Պետերբուրգ, թեհրանում ռուսական միսիայի ջախջախման առթիվ ներողություն խնդրելու համար։ Այդ լուրը սուլթանական արքունիքում առաջ բերեց զայրույթի պոռթկում, մանավանդ որ այդ օրերին անտեղյակ լինելով Իրանում տեղի ունեցած վերջին դեպքերին, շահի ներկայացուցիչ մոլլա Շարիֆը Թուրքիայի հետ արդեն կնքել էր դաշինքի վերաբերյալ համաձայնագիր[231]։

Օսմանյան կայսրությունում ծայր առավ հակաիրանական գործողությունների մի ալիք։ Մասնավորապես թուրքական իշխանությունները ձերբակալեցին իրանական վաճառականներին և բռնագրավեցին նրանց գույքը։ Ի պատասխան շահական կառավարության բողոքների, Դիվանը հայտարարեց, որ ինքը տեղեկություններ ունի այն մասին, որ իբր Իրանը Խոսրով միրզայի գլխավորությամբ զորքեր է ուղարկել Անդրկովկաս, որոնք ռուսական զորքերի հետ համատեղ կռվելու են Թուրքիայի դեմ։

Գիտակցելով, որ թուրք-իրանական հարաբերությունների այս լարվածությունը կարող է ունենալ անցանկալի հետևանքներ և ձգտելով ժամանակ շահել մինչև ամառ՝ պարզելու համար, թե ինչով կավարտվեն ռուս-թուրքական պատերազմի ամառային գործողությունները, որից կախված էր Թուրքիայի հետ իրական ռազմական համագործակցություն հաստատելու վերջնական որոշման ընդունումը, Ֆաթհ Ալի շահը որոշեց որոշ չափով մեղմացնել թուրքերի զայրույթը, նրանց մատուցելով մի սուտ և իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, իբր Մաբազայում կենտրոնացված իրանական զորքերը պատրաստ են հո-

---

231 Տե՛ս А. П. Щербатов, նշվ. աշխ., հ. 3, հավելված, էջ 74—75։

դուտ Թուրքիայի ռազմական գործողություններ սկսել Ռուսաստանի դեմ[232].

1829 թ. սեպտեմբերի 2-ին պարտված Օսմանյան կայսրությունը ստիպված էր ստորագրել Ադրիանոպոլսի հաշտության պայմանագիրը։ Այսպիսով, ռուսական զենքի փայլուն հաղթանակը Թուրքերի նկատմամբ կատարյալ ձախողման մատնեց Մեծ Բրիտանիայի փորձերը Ռուսաստանի դեմ Մերձավոր և Միջին արևելքի երկու մահմեդական պետությունների բլոկ ստեղծելու ուղղությամբ։

Թուրքիայի պարտությունը 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմում միաժամանակ ունեցավ այն հետևանքը, որ Իրանը վերջնականապես հրաժարվեց Օսմանյան կայսրության հետ ռազմական դաշինք կնքելու և Ռուսաստանի դեմ նոր, երրորդ պատերազմը սանձազերծելու մտադրությունից։

В. А. БАЙБУРТЯН

## ТУРЕЦКО-ИРАНСКИЕ ОТНОШЕНИЯ В ПЕРВОЙ ТРЕТИ XIX В. И ВЕЛИКИЕ ДЕРЖАВЫ

### Резюме

В статье освещаются вопросы межгосударственных отношений Османской империи и Ирана в период русско-иранских войн 1804—1813 гг. и 1826—1828 гг. В частности показывается, что наряду с Великобританией и Францией, которые, исходя из своих колониалистских целей на Ближнем и Среднем Востоке, провоцировали русско-иранские и русско-турецкие вооруженные конфликты и войны, Османская империя также принимала активное участие в обострении русско-иранских отношений. В связи с этим подробно исследуются вопросы, связанные с попытками организации турецко-иранского военного союза против России и выясняется роль европейских держав, в частности Англии и Франции, в деле формирования подобных союзов.

Особое внимание уделяется освещению турецко-иранской войны 1821—1823 гг. и выяснению острой дипломатической борьбы между великими державами вокруг этого вооруженного конфликта.

Статья написана на основе архивных материалов, официальных публикаций, разноязычной литературы и прессы.

[232] «Кавказский сборник», т. XXX, стр. 186.